

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

«ԳԵՈՌԵՅԴ»

ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՅՔԻ ՈՍԿՈՒ ՀԱՆՔԱՎԱՅՐՈՒՄ
ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ
ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Տնօրեն՝

Ա. Սաֆարյան

Երևան 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	Էջ
ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ ԵՎ ՏԵՐՄԻՆՆԵՐ	6
1. ՆԱԽԱԳԾՄԱՆ ՆՈՐՄԱՏԻՎ-ԻՐԱՎԱԿԱՆ ՀԵՆՔԸ	8
2. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	14
2.1. Նախատեսվող գործունեության անվանումը և նպատակը	14
2.2. Հանքավայրի երկրաբանական կառուցվածքը	20
2.3. Օգտակար հանածոյի նյութական կազմը և տեխնոլոգիական հատկությունները	29
2.4. Հիդրոերկրաբանական, մշակման լեռնաերկրաբանական և լեռնատեխնիկական պայմանները	31
2.5. Պաշարների հաշվարկը	32
3. ՆԱԽԱՏԵՄՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ	33
4 ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ	50
4.1 Ռելիեֆ, երկրաձևաբանություն	50
4.2 Արտածին երկրաբանական երևույթներ, սեյսմիկ բնութագիր	51
4.3 Կլիմայական բնութագրեր	56
4.4 Մթնոլորտային օդ	60
4.5 Ջրային ռեսուրսներ	61
4.6 Հողեր	67
4.7. Բուսական աշխարհ	70
4.8. Կենդանական աշխարհ	78
4.9. Բնության հատուկ պահպանվող տարածքներ	79
5. ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ	85
5.1. Ենթակառուցվածքներ	85
5.2. Հողերի տնտեսական յուրացման բնութագիր	91
5.3. Պատմության և մշակույթի հուշարձաններ	96
6. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ	97
7. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎՆԱՍԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ	116
8. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆԸ	119
9. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԾՐԱԳԻՐ	137
10. ՀԱԿԱՎԹԱՐԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ	140
11. ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐ	143
Օգտագործված գրականության ցանկ	145
Հավելված 1. Գետնամերձ կոնցենտրացիաների հաշվարկ	146

Աղյուսակ 1.	Օգտակար հանածոների արդյունահանման ենթակառուցվածքների տեղաբաշխման նպատակով առաջարկվող տարածքի կոորդինատները	18
Աղյուսակ 2.	Բացահանքի տարածքի կոորդինատները	18
Աղյուսակ 3.	Հանքավայրի հաստատված պաշարները	32
Աղյուսակ 4.	Նախագծված բացահանքերի պարամետրերը վերջնական դիրքում	33
Աղյուսակ 5.	Բացահանքի տարեկան, օրեկան և հերթափոխային հաշվարկային արտադրողականությունները	35
Աղյուսակ 6.	Հորատապայթեցման աշխատանքների հիմնական հաշվարկային պարամետրերը	38
Աղյուսակ 7.	Սողանքային մարմինների բնութագրերը	55
Աղյուսակ 8.	Օդի ջերմաստիճանը	56
Աղյուսակ 9.	Մթնոլորտային տեղումները	59
Աղյուսակ 10.	Ձնածածկույթը	59
Աղյուսակ 11.	Օդի հարաբերական խոնավությունը	59
Աղյուսակ 12.	Արևափայլը (ըստ Միսիան կայանի)	59
Աղյուսակ 13.	Քամիների ուղղությունների կրկնելիությունը (ըստ Միսիան կայանի)	60
Աղյուսակ 14.	Գետի ընդհանուր ձևաչափական տվյալները	62
Աղյուսակ 15.	Հիդրոլոգիական դիտակետերի հիմնական ձևաչափական բնութագրիչները	62
Աղյուսակ 16.	Գետի հոսքի բաշխումը ըստ ամսիների	62
Աղյուսակ 17.	Գետի հոսքի բնութագրիչները	63
Աղյուսակ 18.	Անանուն գետակի ջրերի փորձարկման արդյունքները	65
Աղյուսակ 19.	Լցակայանի շրջանի սահողերի բնութագրերը	67
Աղյուսակ 20.	Բացահանքի տարածքի շագանակագույն հողերի բնութագրերը	69
Աղյուսակ 21.	Բացահանքի և լցակայանի տարածքի հողերի հետազոտության արդյունքները	69
Աղյուսակ 22.	Շրջանում հայտի ՀՀ բույսերի կարմիր գրքում գրանցված տեսակները	77
Աղյուսակ 23.	Հայցվող տարածքում դիտակված անողնաշարավորները ...	78
Աղյուսակ 24.	ՀՀ Սյունիքի մարզում հաշվառված բնության հուշարձանները	80
Աղյուսակ 25.	Արդյունաբերական արտադրանքի արտադրությունն ըստ տնտեսական գործունեության տեսակների	89

Աղյուսակ 26.	Տվյալներ Միսիան խոշորացված համայնքում ընդգրկված բնակավայրերի վերաբերյալ	91
Աղյուսակ 27.	Խոշորացված համայնքի բնակչությունը	92
Աղյուսակ 28.	Խոշորացված համայնքի մշակութային, կրթական և մարզական հաստատությունները	94
Աղյուսակ 29.	Հողային ֆոնդի և գյուղատնտեսության վերաբերյալ տվյալները	94
Աղյուսակ 30.	Մուցք բնակավայրի տարածքում հաշվառված պատմության և մշակութային հուշարձանները	96
Աղյուսակ 31.	Բարձրադիր ջրհեռացնող առուների պարամետրերի հաշվարկի վերջնական արդյունքները	108
Աղյուսակ 32.	Ջրհեռացնող առուների չափերը	109
Աղյուսակ 33.	Արտադրական թափոնների ցանկը	112
Աղյուսակ 34.	Անհրաժեշտ նյութերի ծախսի հաշվարկը	123
Աղյուսակ 35.	Սարքավորումների ամորտիզացիոն ծախսերի հաշվարկը ...	124
Աղյուսակ 36.	Աշխատավարձի ֆոնդի հաշվարկը	124
Աղյուսակ 37.	Խախտված տարածքների լեռնատեխնիկական վերակուլտիվացիայի համար անհրաժեշտ ծախսերի խոշորացված նախահաշիվը	124
Աղյուսակ 38.	Ռեկուլտիվացիոն աշխատանքների կենսաբանական փուլի աշխատանքների նախահաշիվը	127
Աղյուսակ 39.	Բնապահպանական կառավարման պլանը	133
Աղյուսակ 40.	Բնապահպանական մոնիթորինգի հիմնական ցուցանիշները	138

ՆԿԱՐՆԵՐԻ ՑԱՆԿԸ

		Էջ
Նկար 1.	Սյունիքի մարզի արտամասշխատաբային քարտեզ	15
Նկար 2.	Մուցքի ոսկու հանքավայրի իրավիճակային քարտեզ	16
Նկար 3.	Մուցքի ոսկու հանքավայրի ենթակառուցվածքների իրավիճակային քարտեզ	17
Նկար 4.	Մուցքի ոսկու հանքավայրի ենթակառուցվածքների տեղադիրքը Google Earth ծրագրային հավելվածից ներբեռնված գծապատկերի վրա	17
Նկար 5.	Մուցքի հանքավայրի շրջանի երկրաբանական արտամասշտաբային քարտեզ	22
Նկար 6.	Մուցքի ոսկու հանքավայրի երկրաբանական արտամասշտաբային քարտեզ	25

Նկար 7.	Հանքավայրի շրջանի երկրաձևաբանական սխեմատիկ քարտեզ	52
Նկար 8.	Հանքավայրի շրջանի լանջերի թեքությունների սխեմատիկ քարտեզ	53
Նկար 9.	Սողանքային մարմինների տարածման սխեմատիկ քարտեզ ...	54
Նկար 10.	ՀՀ տարածքի հավանական սեյսմիկ վտանգի գոտիավորման քարտեզ	55
Նկար 11.	Հանքավայրի շրջանի կլիմայական գոտիների սխեմատիկ քարտեզ	56
Նկար 12.	Որոտան գետի ավազանի մակերևութային ջրերի մոնիթորինգի դիտացանց	63
Նկար 13.	ՀՀ մակերևութային ջրերի որակը 2022 թվականի ապրիլին	64
Նկար 14.	Հայցվող տարածքի հողերի բնական տիպերի սխեմատիկ քարտեզ	68
Նկար 15.	Հանքավայրի շրջանի բուսականության տիպերի սխեմատիկ քարտեզ	75
Նկար 16.	Միսիանի անտառտնտեսության տեղագրությունը	76
Նկար 17.	Հայցվող տարածքի և «Զանգեզուր» պետական արգելավայրի տեղագրությունը	81
Նկար 18.	Հայցվող տարածքի և «Անտակ լիճ» բնության հուշարձանի տեղագրությունը	85
Նկար 19.	Նախատեսվող պաշտպանիչ անտառաշերտի տեղագրությունը	120
Նկար 20.	Վերջնական դիրքը խախտված տարածքների վերականգնումից հետո	126
Նկար 21.	Շրջակա միջավայրի վրա դրսևորվող ազդեցությունների մոնիթորինգի դիտակետերի տեղադիրքը	139

ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՄԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ ԵՎ ՏԵՐՄԻՆՆԵՐ

Օգտակար հանածոյի պաշարներ՝ օգտակար հանածոյի կուտակումներ, որոնց ծավալը, քանակը, որակը և տարածքային դիրքն ու ձևը որոշված են

Հանքավայր՝ ընդերքի մաս, որը պարունակում է օգտակար հանածոյի պաշարներ (այդ թվում՝ կանխատեսումային), որոնք ստացել են երկրաբանատնտեսագիտական գնահատական.

Օգտակար հանածոյի արդյունահանում՝ օգտակար հանածոյի դուրսբերումը հանքավայրերից և դրանց մեջ պարփակված օգտակար բաղադրիչների կորզմանն ուղղված աշխատանքների համալիր

Նախատեսվող գործունեություն՝ շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություն ունեցող ուսումնասիրություն, արտադրություն, կառուցում, շահագործում, վերակառուցում, ընդլայնում, տեխնիկական և տեխնոլոգիական վերազինում, վերապրոֆիլավորում, կոնսերվացում, տեղափոխում, լուծարում, փակում.

Նախագծային փաստաթուղթ՝ նախատեսվող գործունեության տեխնիկական զեկույց, տեխնիկատնտեսական հիմնավորում, տեխնիկատնտեսական հաշվարկ, ճարտարապետաշինարարական նախագիծ.

Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության հիմնական փուլ՝ հիմնադրությային փաստաթղթի կամ նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության ուսումնասիրության և վերլուծության արդյունքում դրանց թույլատրելիության վերաբերյալ պետական փորձաքննական եզրակացություն տալու գործընթաց.

Բնապահպանական կառավարման պլան՝ ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող միջոցառումներ և դրանց իրականացման մշտադիտարկման ցուցիչներ, որոնք հստակ են և չափելի՝ որոշակի ժամանակի ընթացքում

Բույսերի կարմիր գիրք՝ միջազգային պահանջները բավարարող համահավաք փաստաթուղթ, որում գրանցվում են տեղեկություններ հազվագյուտ, անհետացման եզրին գտնվող բույսերի և համակեցությունների կարգավիճակի, աշխարհագրական տարածվածության, էկոլոգիական պայմանների, կենսաբանական առանձնահատկությունների ներկա վիճակի և պահպանման միջոցառումների մասին

Կենդանիների Կարմիր գիրք՝ միջազգային պահանջները բավարարող համահավաք փաստաթուղթ է, որում գրանցվում են տեղեկություններ հազվագյուտ,

անհետացող կենդանական տեսակների կարգավիճակի, աշխարհագրական տարածվածության, էկոլոգիական պայմանների, կենսաբանական առանձնահատկությունների, ներկա վիճակի և պահպանման միջոցառումների մասին: Կենդանիների Կարմիր գիրքը վարվում է հազվագյուտ և անհետացող կենդանական տեսակների և համակեցությունների հաշվառման, պահպանության, վերարտադրության, օգտագործման և գիտականորեն հիմնավորված հատուկ միջոցառումների մշակման և իրագործման, ինչպես նաև դրանց մասին բնակչությանը իրազեկելու նպատակով

Հող` երկրի մակերևույթում բիոտիկ, աբիոտիկ և մարդածին գործոնների երկարատև ազդեցության արդյունքում առաջացած ինքնուրույն բնագիտապատմական հանքաօրգանական բնական մարմին` կազմված կոշտ հանքային և օրգանական մասնիկներից, ջրից ու օդից և ունի բույսերի աճի ու զարգացման համար համապատասխան պայմաններ ստեղծող յուրահատուկ գենետիկամորֆոլոգիական հատկանիշներ ու հատկություններ

Հողի բերրի շերտ` հողային ծածկույթի վերին շերտի բուսահող, որն օգտագործվում է հողերի բարելավման, կանաչապատման, ռեկուլտիվացման նպատակներով

Ռեկուլտիվացում` խախտված հողերի վերականգնմանն ուղղված (օգտագործման համար պիտանի վիճակի բերելու) միջոցառումների համալիր, որը կատարվում է 2 փուլով` տեխնիկական և կենսաբանական

Ազդակիր համայնք` շրջակա միջավայրի վրա հիմնադրությային փաստաթղթի կամ նախատեսվող գործունեության հնարավոր ազդեցության ենթակա համայնքի (համայնքների) բնակչություն` ֆիզիկական և (կամ) իրավաբանական անձինք

Խախտված հողեր` առաջնային տնտեսական արժեքը կորցրած և շրջակա միջավայրի վրա բացասական ներգործության աղբյուր հանդիսացող հողեր

Ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով մշտադիտարկումներ` ընդերքի երկրաբանական ուսումնասիրության և օգտակար հանածոների արդյունահանման աշխատանքային ծրագրերին զուգընթաց` երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ծրագրով, օգտակար հանածոների արդյունահանման աշխատանքային նախագծով, շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտով և ազդեցության գնահատման հաշվետվությամբ ամրագրված ցուցանիշների հիման վրա իրականացվող մշտադիտարկումներ:

1. ՆԱԽԱԳԾՄԱՆ ՆՈՐՄԱՏԻՎ-ԻՐԱՎԱԿԱՆ ՀԵՆՔԸ

Արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հիմնական հաշվետվությունը կազմելիս ընկերությունն առաջնորդվել է բնապահպանական օրենսդրության պահանջներով, որոնք ամրագրված են հետևյալ իրավական ակտերում.

– ՀՀ Ընդերքի մասին օրենսգիրք (ՀՕ-280, 28.11.2011թ.), որով սահմանվում են ՀՀ տարածքում ընդերքօգտագործման սկզբունքներն ու կարգը, կարգավորվում են ընդերքն օգտագործելիս բնությունը և շրջակա միջավայրը վնասակար ազդեցություններից պաշտպանության, աշխատանքների կատարման անվտանգության ապահովման, ինչպես նաև ընդերքօգտագործման ընթացքում պետության և անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանության հետ կապված հարաբերությունները:

– ՀՀ Հողային օրենսգիրք (ՀՕ-185, 02.05.2001թ.), որը սահմանում է հողային հարաբերությունների պետական կարգավորման կատարելագործման, հողի տնտեսավարման տարբեր կազմակերպական-իրավական ձևերի զարգացման, հողերի բերրիության, հողօգտագործման արդյունավետության բարձրացման, մարդկանց կյանքի ու առողջության համար բարենպաստ շրջակա միջավայրի պահպանման և բարելավման, հողի նկատմամբ իրավունքների պաշտպանության իրավական հիմքերը:

– ՀՀ Ջրային օրենսգիրք (ՀՕ-373, 04.06.2002թ.), որով կարգավորվում են ջրային ռեսուրսների և ջրային համակարգերի, այդ թվում՝ ջրամատակարարման, ջրահեռացման համակարգերի տնօրինման, տիրապետման, օգտագործման և պահպանման ոլորտում ծագող հարաբերությունները:

– «Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենք (ՀՕ-22, 23.11.1999թ.), որը սահմանում է պետական քաղաքականությունը բնական բուսական աշխարհի գիտականորեն հիմնավորված պահպանության, պաշտպանության, օգտագործման և վերարտադրության բնագավառում:

– «Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենք (ՀՕ-52, 03.04.2000թ.), որը սահմանում է ՀՀ տարածքում կենդանական աշխարհի վայրի տեսակների պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականությունը:

– «Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենք (ՀՕ-121, 11.10.1994թ.), որի առարկան մթնոլորտային օդի մաքրության ապահովման, մթնոլորտային օդի վրա վնասակար ներգործությունների նվազեցման ու կանխման բնագավառում հասարակական հարաբերությունների կարգավորումն է:

– «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենք (ՀՕ-211, 27.11.2006թ.), որը կարգավորում է Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների՝ որպես բնապահպանական, տնտեսական, սոցիալական, գիտական, կրթական, պատմամշակութային, գեղագիտական, առողջապահական, ռեկրեացիոն արժեք ներկայացնող էկոհամակարգերի, բնության համալիրների ու առանձին օբյեկտների բնականոն զարգացման, վերականգնման, պահպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականության իրավական հիմունքները:

– «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենք (ՀՕ-110, 21.06.2014թ.), որը կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումների, շրջակա միջավայրի վրա ազդեցության պետական փորձաքննության ոլորտի հասարակական հարաբերությունները:

– «Թափոնների մասին» ՀՀ օրենք (ՀՕ-159-Ն, 24.11.2004թ.), որը կարգավորում է թափոնների հավաքման, փոխադրման, պահման, մշակման, օգտահանման, հեռացման, ծավալների կրճատման և դրանց հետ կապված այլ հարաբերությունների, ինչպես նաև մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելման իրավական և տնտեսական հիմքերը:

– ՀՀ կառավարության 10.01.2013թ.-ի թիվ 22-Ն որոշում, որով սահմանվել են օգտակար հանածոների արդյունահանված տարածքի, արդյունահանման ընթացքում առաջացած արտադրական լցակույտերի տեղադիրքի և դրանց հարակից համայնքների բնակչության անվտանգության ու առողջության ապահովման նպատակով մշտադիտարկումների իրականացման, դրանց իրականացման վճարների չափերի հաշվարկման և վճարման կարգերը:

– ՀՀ կառավարության 14.12.2017թ.-ի թիվ 1643-Ն որոշում, որը կիրառվում է Հայաստանի Հանրապետության տարածքում խախտված հողերի հաշվառման, հողաշինարարական, քարտեզագրման, կանխատեսվող ու իրականացման ենթակա ռեկուլտիվացման աշխատանքների նախագծման, ռեկուլտիվացման,

ռեկուլտիվացված հողերի նպատակային նշանակության ուղղությունների որոշման, ինչպես նաև նպատակային ու գործառական նշանակությանը համապատասխան՝ դրանց հետագա օգտագործման ժամանակ:

– ՀՀ կառավարության 31.07.2014թ.-ի N781-Ն որոշում, որը սահմանում է սահմանում է Հայաստանի Հանրապետության բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման ընթացակարգը:

– ՀՀ կառավարության 22.02.2018թ.-ի N191-Ն որոշում, որը սահմանում է ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող մշտադիտարկումների իրականացման պահանջների, ինչպես նաև արդյունքների վերաբերյալ հաշվետվությունները ներկայացնելու կարգը:

– ՀՀ կառավարության 02.11.2017թ.-ի N1404-Ն որոշում, որով սահմանվել են հողի բերրի շերտի հանման նորմերի որոշմանը և պակաս արդյունավետ հողերի բարելավման համար հողի բերրի շերտի պահպանմանն ու օգտագործմանը ներկայացվող պահանջները:

– ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի N71-Ն որոշում, որով հաստատվել է ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը,

– ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի N72-Ն որոշում, որով հաստատվել է ՀՀ բույսերի Կարմիր գիրքը,

– ՀՀ կառավարության 14.08.2008թ.-ի N967-Ն որոշում, որով հաստատվել է ՀՀ բնության հուշարձանների ցանկը:

– ՀՀ կառավարության 15.06.2017թ.-ի N676-Ն որոշում, որով հաստատվել են ընդերքօգտագործման թափոնների կառավարման և վերամշակման պլանների օրինակելի ձևերը:

– ՀՀ կառավարության 18.08.2021թ.-ի N1352-Ն որոշում, որով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքի 69-րդ հոդվածով սահմանված շրջակա միջավայրի պահպանության դրամագլխին Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված ընդերքօգտագործողների կողմից Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքի 3-րդ հոդվածով սահմանված ռեկուլտիվացիոն աշխատանքների՝ նախահաշվային արժեքների

հաշվարկման և վերահաշվարկման կարգի հետ կապված իրավահարաբերությունները:

– ՀՀ կառավարության 08.09.2011թ.-ի №1396-Ն որոշում, որով ահմանվում են Հայաստանի Հանրապետության տարածքում հողի բերրի շերտի նպատակային և արդյունավետ օգտագործման հետ կապված հարաբերությունները:

– ՀՀ կառավարության 21.10.2021թ.-ի N1733-Ն որոշում, որով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքի 69-րդ հոդվածով սահմանված՝ շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի օգտագործման և հատկացումների չափերի հաշվարկման հետ կապված հարաբերությունները:

– ՀՀ կառավարության 20.01.2005թ.-ի N64-Ն որոշում, որով հաստատվել են ջրակոհամակարգերի սանիտարական պահպանման, հոսքի ձևավորման, ստորերկրյա ջրերի պահպանման, ջրապահպան, էկոտոնի և անօտարելի գոտիների տարածքների սահմանման չափորոշիչները:

– ՀՀ առողջապահության նախարարի 06.03.2002թ.-ի N138 հրաման, որով հաստատվում են աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում աղմուկի սանիտարական նորմերը:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 2-րդ մասի՝ նախատեսվող գործունեության՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը ներկայացվող ընդհանուր պահանջներն են՝

1) նախատեսվող գործունեության նկարագիրը և նպատակը, ֆիզիկական, տեխնիկական և տեխնոլոգիական բնութագրերը, պահանջվող բնական ռեսուրսների, օգտագործվող հումքի ու նյութերի, արտանետումների, արտահոսքերի, թափոնների, արտադրական լցակույտերի, ֆիզիկական ներգործությունների և արտակարգ իրավիճակների հնարավոր ռիսկերի նկարագրությունը.

2) բոլոր հնարավոր տարբերակների նկարագիրը, ներառյալ՝ նախատեսվող գործունեությունից հրաժարման (գրոյական) տարբերակը.

3) շրջակա միջավայրի հնարավոր տնտեսական վնասի գնահատումները: Տնտեսական վնասի հատուցման արժեքը և վճարման ժամանակացույցը.

4) հնարավոր ազդեցության ենթակա տարածքի շրջակա միջավայրի, բնական պայմանների, ռեսուրսների ու դրանց օգտագործման նկարագիրը.

5) նախատեսվող գործունեության (շինարարության և շահագործման փուլ, ռիսկերի գնահատում), ներառյալ՝ այլընտրանքային տարբերակների իրականացման դեպքում, շրջակա միջավայրի առանձին բաղադրիչների, բնական ռեսուրսների, պայմանների հնարավոր փոփոխությունների և դրանց ծավալների նկարագիրն առանձին, գումարային և ամբողջական գնահատումը.

6) սոցիալական հնարավոր ազդեցությունները, ռիսկերը, օգուտները, վերլուծական բնութագրերը.

7) հնարավոր արտակարգ իրավիճակների հետևանքով ազդեցության ծավալը, աստիճանը, ազդեցության նվազեցման կամ վերացման հնարավորությունները, ուղիները և միջոցները.

8) նախատեսվող գործունեության համապատասխանությունը տվյալ տարածքի համար հաստատված հիմնադրությային փաստաթղթերին.

9) բոլոր հնարավոր տարբերակների վերլուծության արդյունքում՝ ընտրված տարբերակի հիմնավորումը՝ շրջակա միջավայրի պահպանության, տնտեսական, սոցիալական տեսանկյունից.

10) հնարավոր դրական ազդեցությունների պահպանման և ուժեղացման, բացասական ազդեցությունների կանխարգելման, բացառման, նվազեցման և շրջակա միջավայրին հասցվող վնասի փոխհատուցման համար նախատեսվող միջոցառումները (շինարարության շահագործման և փակման փուլ, ռիսկային իրավիճակներ), դրանց հիմնավորվածությունն ու բավարարությունը, ծախսերի գումարային գնահատումը.

11) նախատեսվող գործունեության ազդեցության մշտադիտարկման (մոնիթորինգի) և հետնախազգային վերլուծության ծրագիրը.

12) նախատեսվող գործունեության հաշվետվությամբ ներկայացվող տեղեկատվության վերաբերյալ ընդհանուր պատկերացում կազմող ամփոփ բովանդակության նյութեր՝ քարտեզներ, սխեմաներ, գրաֆիկներ, աղյուսակներ և այլն.

13) շրջակա միջավայրի վերաբերյալ օգտագործված ելակետային տվյալների աղբյուրները.

14) գնահատման և հաշվետվության կազմման ընթացքում ի հայտ եկած խոչընդոտների, ներառյալ՝ տվյալների բացակայության վերաբերյալ տեղեկությունները.

15) հաշվետվության ամփոփ բովանդակությունը:

Հաշվետվությանը կից փորձաքննության ներկայացվող փաստաթղթերն են՝

1) հիմնադրության փաստաթղթի նախագիծը, առնչվող այլ հաստատված հիմնադրության փաստաթղթերը.

2) նախատեսվող գործունեության նախագծային փաստաթուղթը.

3) գործընթացի մասնակիցների մասնակցությանը վերաբերող փաստաթղթերը (ծանուցման հրապարակման պատճենը, ստացված դիտողություններն ու առաջարկությունները, հանրային լուսմների արձանագրությունները, ձայնագրությունները, տեսագրությունները).

4) իրավաբանական անձի դեպքում՝ նրա կանոնադրության և ներդիրի պատճենները, իսկ անհատ ձեռնարկատիրոջ դեպքում՝ պետական գրանցման վկայականի պատճենը.

5) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված լինելու դեպքում՝ տվյալ նախատեսվող գործունեությամբ զբաղվելու լիցենզիայի կամ թույլտվության պատճենը.

6) պետական տուրքի անդորրագիրը:

2. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2.1. Գտնվելու վայրը

Մուցքի ոսկու հանքավայրը գտնվում է Սյունիքի մարզի Սիսիանի տարածաշրջանում, Մուցք գյուղից 3.5 կմ հարավ, հարավ-արևելք, Շաղատ գետի վտակ հանդիսացող «Անանուն» ձորակի աջ թևում: Հանքավայրը գտնվում է Սիսիան քաղաքից 28 կմ հեռավորության վրա:

Վարչական տեսակետից ներառված է Սիսիան խոշորացված համայնքի Մուցք բնակավայրի սահմաններում:

Մայրաքաղաքի հետ այն կապվում է 180 կմ ասֆալտապատ և 18 կմ գրունտային ճանապարհներով: Հանքավայրի մոտակա բնակավայրերից են Մուցք, Անգեղակոթ, Բալակ գյուղերը (նկար 1-4):

Վարչատարածքային բաժանման տեսակետից հանքավայրի տարածքը ներառված է Սիսիան խոշորացված համայնքում:

Օգտակար հանածոների արդյունահանման ենթակառուցվածքների տեղաբաշխման նպատակով առաջարկվող տարածքի կոորդինատները (ըստ ArmWGS 84 համակարգի) ներկայացված է աղյուսակ 1-ում, բուն բացահանքի տարածքի կոորդինատները՝ աղյուսակ 2-ում:

Սյունիքի մարզը ընդհանուր առմամբ հայտնի է զարգացած լեռնահանքային արդյունաբերությամբ: Մարզում գործող լեռնահանքային ձեռնարկություններից են Զանգեզուրի և Ագարակի պղնձամոլիբդենային, Շահումյանի ոսկի-բազմամետաղային կոմբինատները: Այստեղ են գտնվում նաև Լիճքվազ-Թեյի, Տերտերեսարի ոսկու հանքավայրերը, որոնց պաշարները հաստատվել և վերահաստատվել են ինչպես նախկին ԽՍՀՄ ՊՊՀ-ի, այնպես էլ ՀՀ ՕՀՊԳ-ի կողմից: Շրջանը հարուստ է տարատեսակ շինարարական նյութերով, հիմնականում բազալտներով և անդեզիտաբազալտներով, հրաբխային խարամներով, ավազներով և այլն:

Շրջանը ապահովված է էլեկտրաէներգիայով, բոլոր բնակավայրերը էլեկտրաֆիկացված են: Տարածաշրջանում առկա են Սպանդարյանի, Տոլորսի, Շամբի և Բալաքի ջրամբարները, որոնց հենքի վրա կառուցվել են Շամբի, Շաքիի և Սպանդարյանի ՀԷԿ-երը:

Այստեղ առկա է բավականաչափ ազատ աշխատուժ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ

Մարզկենտրոնը ԿԱՊԱՆ
7 քաղաք, 131 բնակավայր
Մարզային նշանակության
ճանապարհների երկարությունը՝ 547կմ



Նկար 1. Մյունիքի մարզի արտամասշտաբային քարտեզ

Մուցքի ոսկու հանքավայրի իրավիճակային քարտեզ

Արտատպված է 1:50000 մասշտաբի


J-38-20-Ե, Դ տոպոգրաֆիական թերթերից




Ծանոթություն՝ կոորդինատները
բերված են WGS - 84 (ARMREF 02)
համակարգով

(հատված J-38-20-Ե, Դ թերթերից)

Նկար 2.



Նկար 3.



Նկար 4.

Բացահանքի եզրագիծը սահմանափակող առաջարկվող ծայրակետային կոորդինատները ARM WGS-84 համակարգով ներկայացված են աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1.

Կետի համարը	Կոորդինատները	
1.	X=4375874.4790	Y=8578292.2631
2.	X=4376097.0884	Y=8578463.7698
3.	X=4376117.5141	Y=8578735.1917
4.	X=4376015.5801	Y=8578843.3146
5.	X=4375640.1079	Y=8578959.7916
6.	X=4375267.9270	Y=8579024.1123
7.	X=4375074.8858	Y=8578939.4832
8.	X=4374986.0456	Y=8578785.3136
9.	X=4375012.7679	Y=8578480.6534
10.	X=4375269.2302	Y=8578328.9270

Առաջարկվող լեռնահատկացման եզրագծի ծայրակետային կոորդինատները ARM WGS-84 համակարգով ներկայացված են աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2.

Կետի համարը	Կոորդինատները	
1.	X=4374954.5799	Y=8577374.5440
2.	X=4375022.1342	Y=8577246.1217
3.	X=4375680.4611	Y=8577536.9402
4.	X=4376359.4553	Y=8577579.3648
5.	X=4376428.6997	Y=8577642.8623

Կետի համարը	Կոորդինատները	
6.	X=4376460.2844	Y=8577813.6598
7.	X=4376502.5526	Y=8577883.4984
8.	X=4376705.8613	Y=8578031.9969
9.	X=4376589.0071	Y=8578314.9214
10.	X=4376305.3542	Y=8578015.1955
11.	X=4375997.5616	Y=8577788.1055
12.	X=4375667.8899	Y=8578304.7776
13.	Y=4375874.4790	Y=8578292.2631
14.	X=4376097.0884	Y=8578463.7698
15.	X=4376117.5141	Y=8578735.1917
16.	X=4376015.5801	Y=8578843.3146
17.	X=4375640.1079	Y=8578959.7916
18.	X=4375267.9270	Y=8579024.1123
19.	X=4375074.8858	Y=8578939.4832
20.	X=4374986.0456	Y=8578785.3136
21.	X=4375012.7679	Y=8578480.6534
22.	X=4375269.2302	Y=8578328.9270
23.	X=4375562.1647	Y=8578311.1820
24.	X=4375629.5687	Y=8577915.2622
25.	X=4375411.7465	Y=8577949.9540
26.	X=4374954.5799	Y=8577374.5440

Արդյունահանման ենթակառուցվածքների տեղաբաշխման նպատակով ընտրված տարածքը գտնվում է Մուցք բնակավայրի կենտրոնից 0.87-1.13կմ հեռավարության վրա:

Համաձայն ՄՆ 245-71 սանիտարական նորմերի՝ բազմամետաղային հանքաքարերի և VIII-XI կարգի կարծրության ապարների բաց եղանակով մշակում իրականացնող ձեռնարկությունների համար սահմանված է 500մ սանիտարական պահպանման գոտի:

Մուցք գյուղի բնակելի տարածքների հարավային սահմանից կառուցվել է 500մ սանիտարական պաշտպանության գոտի: Սանիտարական պահպանության գոտու սահմանից մինչև հայցվող տարածքի ամենամոտ ծայրակետը առկա 0.35կմ հեռավորություն (նկար 3): Փաստացի Մուցք գյուղի բնակելի տարածքներից մինչև հայցվող տարածքը առկա է 0.85կմ հեռավորություն:

2.2. Հանքավայրի երկրաբանական կառուցվածքը

Մուցքի ոսկու հանքավայրի շրջանի երկրաբանական կառուցվածքում մասնակցում են մեզոզոյի և կայնոզոյի հասակների բազմապիսի հրաբխային, հրաբխանստվածքային և նստվածքային ապարներ, որոնք տարբեր աստիճանի ծալքավորված և պատռված են հիմնականում գրանիտոիդային կազմի ինտրուզիվ, սուբհրաբխային ու դայկաձև մարմիններով: Այստեղ մեծ տարածում ունեն մետասոմատիտները և հիդրոթերմալ փոփոխված ապարները՝ ծագումնաբանորեն կապված մագմատիկ ապարների ներդրումների, ինչպես նաև տարբեր ուղղվածության ու կարգերի խզումնային խախտումների հետ (նկար 5):

Մուցքի հանքավայրը հարում է նույնանուն գյուղի արևելյան մասով անցնող Բարձրավանի բրախիանտիկլինորիումի անտիկլինային ծալքի արևմտյան թևին: Ծալքը ունի գրեթե միջօրեական տարածում, թևերի ընդհանուր անկմամբ դեպի հարավ-արևմուտք և հյուսիս-արևելք 30° - 40° անկյան տակ: Այն դեպի հյուսիս խորասուզվում, ձգվում է մինչև Որոտանի կիրճը, որտեղ կտրվում է Որոտանի վարնետքային խախտումով:

Անտիկլինալի միջուկում մերկանում են միջին Էոցենի հասակի հրաբխածին ապարները, որոնք Մուցք գյուղից հյուսիս-արևելք պատռվում են գրանոդիորիտային կազմի ինտրուզիվ ապարներով:

Անտիկլինալի թևերը հիմնականում ներկայացված են վերին պլիոցենի՝ Միսիանի հաստվածքի տերրիգեն նստվածքներով և դիատոմիտային կավերով: Նշված անտիկլինալային ծալքի գրեթե առանցքային մասով անցնում է Բոնակոթ-Մուցքի խախտումը, որը ձգվում է 310 - 320° տարածման ազիմուտով Մուցք գյուղի արևելյան մասով և խորասուզվում է անդեզիտաբազալտների հաստվածքի ու ժամանակակից ալուվիալ-դելյուվիալ նստվածքների տակ: Խախտումն ունի հարավ-արևմտյան 80 - 85° անկում:

Հանքավայրի արևմտյան մասով՝ Անանուն ձորով, գրեթե միջօրեականի ուղղությամբ անցնում է Մուցքի խախտումը, որը Մուցք գյուղի արևելյան մասում հատվում է Բոնակոթ-Մուցքի խախտումով:

Մուցքի խախտումն անկում է արևելյան ուղղությամբ 80 - 82° անկյան տակ:

Անտիկլինալային ծալքի թևերը, իրենց հերթին, բարդացված են հիմնականում լայնակի բնույթի երկրորդական ծալքերով, ինչպես նաև երկրորդային և ավելի ցածր կարգերի խզումնային խախտումներով:

Հանքավայրի հարավային մասով՝ Շաղատ գետի վերին հոսանքով, անցնում է Զինովարի լայնակի խախտումը, որն ունի զառիթափ անկում դեպի հարավ:

Մուցքի հանքավայրը վերահսկվում է Զինովարի և Մուցքի խախտումների հանգույցով ու այդ հանգույցում ներդրված միջին էոցենի հասակի խոշոր շտոկով, որը ներկայացված է անդեզիտային կազմի պլազիոկլազ-պիրոքսենային պորֆիրիտներով ու դրանց բրեկչիաներով:

Շերտագրական առումով Մուցքի հանքավայրի տարածքը հիմնականում ներկայացված է միջին էոցենի հրաբխային և հրաբխանստվածքային ապարներով, որոնք հանքավայրի արևմտյան մասում մասնակիորեն ծածկվում են միոցենի անդեզիտա-բազալտներով ու վերին պլիոցենի դիատոմիտային կավերով, ինչպես նաև ժամանակակից այրուվիալ-դելյուվիալ նստվածքներով:

Հանքավայրի երկրաբանական կտրվածքը (վերևից ներքև) ներկայացված է հետևյալ կերպ (նկար 6).

1. Ժամանակակից այրուվիալ-դելյուվիալ նստվածքներ,
2. Վերին պլիոցենի դիատոմիտային կավեր,
3. Միոցենի անդեզիտաբազալտներ,

4. Միջին էոցենի անդեզիտային կազմի պլազիոկլազ-պիրոքսենային պորֆիրիտներ ու պորֆիրիտային բրեկչիաներ, ինչպես նաև դրանց հիդրոթերմալ տարբեր աստիճանի փոփոխված տարատեսակներ: Անդեզիտաբազալտների հզորությունը հանքավայրում չի գերազանցում 13մ-ը:

Դեյուվիալ և այլուվիալ նստվածքները հանքավայրի սահմաններում ունեն բավական լայն տարածում և խիստ փոփոխուն հզորություն: Դեյուվիալ նստվածքները գրեթե համատարած ծածկում են մայր ապարները: Ներկայացված են հրաբխածին ապարների բեկորներ ներառող կավավազախճային առաջացումներով: Դեյուվիալ նստվածքների հզորությունը հանքավայրում հիմնականում տատանվում է 0.5-6.0մ սահմաններում, առանձին տեղերում հասնելով մինչև 13մ:


Այլուվիալ նստվածքները ձգվում են Անանուն ձորակի երկայնքով:

Դրանք ներկայացված են կավավազային նյութով թույլ ցեմենտացված, հիմնականում անդեզիտաբազալտային կազմի ավազակոպճազլաքարային առաջացումներով:

Այլուվիալ նստվածքների հզորությունը հանքավայրի սահմաններում հիմնականում տատանվում է 0.5-8.0 մ-ի սահմաններում, առանձին տեղերում հասնելով 21մ-ի:

Վերին պլիոցենը ներկայացված է դիատոմիտային կավերով, որոնք մերկանում են հանքավայրի հյուսիս, հյուսիս-արևմտյան մասում: Դրանց հզորությունը աճում է հյուսիսային ուղղությամբ, հասնելով 30մ-ի:

Միոցենի անդեզիտաբազալտները լայն տարածում ունեն հանքավայրի հարակից մասերում: Ուսումնասիրված տարածքի արևմտյան մասում դրանք ծածկում են միջին էոցենի պորֆիրիտների բրեկչիաներին: Անդեզիտաբազալտները ճեղքավորված, ծակոտկեն և թույլ շերտավորված, մոխրավուն, մուգ մոխրավուն ապարներ են: Դրանց կազմվածքը պորֆիրային է, մանրահատիկ կառուցվածքով:



Նկար 6.

Միջին եոցենը հիմնականում ներկայացված է անդեզիտային կազմի պլագիոկլազային, պլագիոկլազ-պիրոքսենային, երբեմն նշաքարային պորֆիրիտներով ու դրանց բրեկչիաներով, իսկ հյուսիսային ծայրամասում՝ տուֆերով ու տուֆաբրեկչիաներով: Հանքավայրի սահմաններում նշված ապարները այս կամ այն չափով ենթարկվել են հիդրոթերմալ փոփոխության, իսկ հանքայնացած գոտու առանձին մասերում նույնիսկ լրիվ կերպարանափոխված, արգիլիզիտացված են՝ վերածված քվարց-սերիցիտ-կարբոնատային զանգվածի:

Պլագիոկլազային և պլագիոկլազ-պիրոքսենային պորֆիրիտները մոխրագույն, կանաչ-մոխրագույն, իսկ ամֆիբոլ-պիրոքսենային տարատեսակները՝ մուգ մոխրագույն հոծ ապարներ են: Պորֆիրային ներփակումները ներկայացված են պլագիոկլազի և ամֆիբոլի ձգված կամ պիրոքսենի կլորավուն բյուրեղներով՝ պորֆիրային ներփակման գերակշռությամբ: Հիմնական զանգվածը մանրահատիկ, հոծ կառուցվածքի է:

Միկրոսկոպի տակ ապարի կառուցվածքը պորֆիրային է, հիմնական մանրահատիկ հենքի միկրոլիտային ստրուկտուրայով: Ապարն ունի անդեզիտային կազմ, բաղկացած է պիրոքսենի, մասամբ ամֆիբոլի և պլագիոկլազի փոքր ֆենոկրիստալներից (մոտ 0.8-1.0 մմ), ինչպես նաև երկրորդային քվարցից, կալցիտից, սերիցիտից, կաոլինից, քլորիտից, հանքային միներալներից: Ապարի մանրահատիկ զանգվածում առկա են հանքային միներալների մանր (0.1-0.4 մմ չափերի) և փոշենման հատիկներ: Հանքային միներալների (հիմնականում պիրիտ, մագնետիտ) հատիկներն իզոմետրիկ, անկանոն և քառակուսի են: Հանքային միներալները օքսիդացված չեն:

Պորֆիրիտների բրեկչիաներն ունեն բեկորային կառուցվածք և ըստ կազմի նման են պլազիոկլազային պորֆիրիտներին, որոնցում սրածայր բեկորները ցեմենտացած են պորֆիրային զանգվածով: Յեմենտի և բրեկչիայի բեկորների նյութական կազմը նույնն է:

Տուֆերը և տուֆաբրեկչիաները մակրոսկոպիկ մոխրագույն, աղյուսա-մոխրագույն են, ունեն բեկորային կազմվածք՝ բեկորների պորֆիրային կառուցվածքով և միջին հասիկային հիմնական զանգվածով: Հողմահարման ու հիդրոթերմերի ազդեցության հետևանքով դրանք մասնակիորեն վերածվել են կարմրավուն կավերի:

Բրեկչիացած պորֆիրիտները Մուցքի խախտման երկայնքով ենթարկվել են այս կամ այն աստիճանի հիդրոթերմալ փոփոխության: Ընդ որում, փոփոխության առավել բարձր աստիճանով բնութագրվում են նշված խախտման կախված թևի ապարները, որոնցում առանձնանում է հիդրոթերմալ խիստ, տեղ-տեղ ամբողջությամբ փոփոխված պորֆիրիտների գոտի, որը բնութագրվում է ավելի քան 2.5 կմ ձգվածությամբ և մինչև 250 մ լայնությամբ: Վերջինիս միջնամասում՝ բաց գույնի և մանրահատիկ պիրիտի ցանի առկայության շնորհիվ, շուրջ 1,0 կմ ձգվածությամբ տեղամասի սահմաններում, հստակ տարանջատվում են հանքայնացած միջակայքեր, որոնցով, իր հերթին, ձևավորվում են բարդ ուրվագծերով, փոփոխուն հզորությամբ և հաճախակի ընդհատվածությամբ բնութագրվող հանքայնացած մարմիններ:

Հանքայնացած մարմինների ձևավորման գործում կարևոր դեր է ունեցել Մուցքի խախտումն ուղեկցող զառիթափ փետրավոր ճեղքերի խիտ ցանցը, որը նպաստել է հիդրոթերմալ լուծույթների ներթափանցմանն ու շրջապտույտին պորֆիրիտների մեջ՝ ապահովելով դրանց երակիկային և երակիկացանավոր ոսկի-սուլֆիդային հանքայնացումը:

Հիդրոթերմալ խիստ, տեղ-տեղ ամբողջությամբ փոփոխված պորֆիրիտների տարածման գոտու 1 կմ ձգվածությամբ վերոնշյալ հատվածն է հանդիսացել ներկայիս մանրազնին երկրաբանահետախուզական աշխատանքների օբյեկտ:

Հանքայնացած մարմիններում ապարների հիդրոթերմալ փոփոխվածությունը արտահայտվել է դրանց սերիցիտացմամբ, կաոլինացմամբ, կարբոնատացմամբ, քվարցացմամբ և պիրիտացմամբ: Մանրադիտակի տակ ապարի ստրուկտուրան երկրորդական է, մանրահատիկ, կրիպտոբյուրեղային: Հանքային միներալները հիմնականում ներկայացված են պիրիտով ու մագնետիտով, հազվադեպ հանդիպում են սֆալերիտ-գալենիտի երակիկներ:

Հանքայնացումը ներկայացված է պիրիտի տարբեր առատության ցանի, բների, երակիկների ու քսուկների ձևով: Անզեն աչքով ոսկին նշմարելի չէ:

Հանքայնացած մարմինները հետախուզման սահմաններում բնութագրվում են ոսկու պարունակության խիստ անհավասարաչափ բաշխմամբ: Կոնդիցիոն և ոչ կոնդիցիոն միջակայքերը հաճախ հերթափոխում են միմյանց, և տարանջատվում են բացառապես նմուշարկման տվյալներով: Այս պայմաններում հանքավայրի ռեսուրսային ներուժի գնահատումը հնարավոր է իրականացնել միայն վիճակագրական եղանակով՝ հանքաբերության գործակցի կիրառմամբ:

Ոսկու պարունակությունը հանքայնացած մարմինների կոնդիցիոն միջակայքերում հիմնականում տատանվում է 0,40-ից 4,5 գ/տ սահմաններում, միջինը կազմելով 1,5-1,6 գ/տ:

Թեև պաշարների հաշվարկում ընդգրկվող շարքային նմուշների տվյալներով որոշված հանքաքարում ոսկու պարունակության փոփոխականության գործակիցը չի գերազանցում 117-126%, այնուհանդերձ գնահատվող հանքավայրը իր կառուցվածքի

բարդությամբ անհրաժեշտ է դասել 3-րդ խմբին, քանի որ այն բնութագրվում է բավականին բարդ երկրաբանական կտրվածքով:

2.3. Հանքաքարի նյութական կազմը և որակական բնութագիրը

Մուցքի ոսկու հանքավայրի հանքաքարի մակրոսկոպիկ ուսումնասիրությամբ պարզվել է, որ դրանք ներկայացված են հիդրոթերմալ խիստ, տեղ-տեղ ամբողջությամբ փոփոխված, գունաբացված, բրեկչիացած անդեզիտային կազմի պորֆիրիտներով՝ պիրիտի, մագնետիտի և հեմատիտի նրբերակացանավոր հանքայնացմամբ: Ուղեկից միներալներից առկա են հիմնականում քվարցը և կարբոնատը:

Վերոնշյալ եզրահանգումը հավաստվել է թափանցիկ հղկուկների ուսումնասիրությամբ, որով պարզվել է նաև հանքաքարի սերիցիտացած, կաոլինիտացած և քվարցացած լինելու հանգամանքը:

Ապարի կառուցվածքը՝ երկրորդային, մանրահատիկային է:

Հանքաքարի միներալային կազմում մասնակցում են. դաշտային սպաթը (25-28%), պիրոքսենը (8-15%), քվարցը (10-16%), սերիցիտը (15-23%), կաոլինիտը 12-17%), հանքային միներալները (2-25%), կարբոնատը (0,5-7,0%) և չնչին քանակությամբ աքցեսոր միներալներ՝ ռուտիլը և ապատիտը:

Հանքաքարը սուլֆիդային է: Սուլֆիդային հանքայնացումը ներկայացված է պիրիտով, առկա են նաև երկաթի հիդրօքսիդները, որպես հազվագյուտ ներփակումներ դիտվում են գալենիտը, սֆալերիտը և խալկոպիրիտը:

Պիրիտը ներկայացված է խորանարդային ու պենտագոնոդեկաէդրային ձևերի իդիոմորֆ բյուրեղներով: Պիրիտի նրբահատիկները տարածված են քվարցի հատիկների միջև, որոնց հետ ձևավորում են մանր կոլոմորֆային, շղթայաձև, բողբոջանման, շառավղաճառագայթային, գնդաձև և կճեպանման ագրեգատներ, փետրաձև անջատումներ:

Երկաթի հիդրօքսիդները (մագնետիտ, հեմատիտ, գյոտիտ) առաջացնում են մինչև 2 մմ չափերով ցաներ, նրբերակներ, մակահոսման կոլոմորֆային - գոտիական

առաջացումներ դատարկությունների (ձեղքեր, ծակոտիներ) եզրերում կամ ոչ հանքային միներալների հետ համատեղ ոչ մեծ կուտակումներ: Առանձին մասերում կեղծաձև տեղակալում են սուլֆիդներին, առաջացնելով բարակ եզրաշերտեր դրանց հատիկների ծայրամասերով:

Գալենիտը դիտվում է ինչպես խոշորաբյուրեղ ագրեգատների (մինչև 2-3մմ չափերով), այնպես էլ բարակ թելաձև նրբերակների տեսքով՝ քվարցի, պիրիտի և սֆալերիտի բյուրեղների միջակայքում: Հաճախ, սֆալերիտի հետ սերտ կապակցված, դիտվում են պիրիտի ջարդոտված հատիկները:

Սֆալերիտը առաջացնում է իր համար ոչ բնորոշ ձևի մինչև 3 մմ չափերի անջատումներ, որոնք սերտորեն կապակցված են խալկոպիրիտի և գալենիտի հետ և շրջապատում են դրանց հատիկները, ներթափանցելով վերջինների մեջ ցաների ու ընդհատվող, ճյուղավորվող բարակ նրբերակների տեսքով:

Խալկոպիրիտը առաջացնում է բավական քսենոմորֆ ագրեգատներ ապարկազմող միներալների ու մագնետիտի բյուրեղների միջև: Այն նշվում է նաև մանր մինչև 0.005 մմ չափերի առանձնացած ցանի, ինչպես նաև երակիկների ձևով՝ սերտորեն համակցվելով խունացած հանքաքարերի ու գալենիտի կամ նաև սֆալերիտի հետ:

Ռադիոակտիվ միներալներ հանքաքարի կազմում չեն հայտնաբերվել:

Ուսումնասիրված ապարանմուշներում բնածին ոսկի և արծաթ չի հանդիպել: Առաջինը այստեղ նրբադիսպերսային է և կապված է հիմնականում մանրահատիկ պիրիտի հետ, իսկ արծաթը ներկայացված է արգենտիտ միներալով:

Մուցքի հանքավայրի հանքաքարի հիմնական առանձնահատկությունը կայանում է նրանում, որ այն բաց գույնի և մանրահատիկ պիրիտի ցանի առկայության շնորհիվ խիստ տարբերվում է պարփակող թարմ և հիդրոթերմալ թույլ փոփոխված պորֆիրիտներից և այս առանձնահատկությունը հնարավոր է դարձնում հանքայնացած մարմինների հստակ տարանջատումը պարփակող ապարներից:

Հանքավայրում ինքնուրույն արդյունաբերական նշանակություն ունի միայն միայն հիդրոթերմալ խիստ և ամբողջությամբ փոփոխված բրեկչիացած

պորֆիրիտներում պարունակվող ոսկին, իսկ մյուս գրեթե բոլոր տարրերի պարունակությունները հիմնականում կլարկային են:

Արսենիկումի և ծարիրի պարունակությունները բոլոր շարքային նմուշներում չեն գերազանցում համապատասխանաբար 0.014 և 0.015 % և քիչ թե շատ շոշափելի պարունակություններով նմուշները տարածականորեն չեն կարող կապակցվել:

Դիտարկվող տարրերի պարունակություններով ներկայացուցչական 2 տեխնոլոգիական նմուշների ուսումնասիրությամբ ապացուցվել է, որ դրանց հարստացմամբ ստացված ֆլոտացիոն խտանյութերում արսենիկումի և ծարիրի պարունակությունները չեն գերազանցել համապատասխանաբար 0.075 և 0.002 %, մինչդեռ դրանց թույլատրելի պարունակությունները խտանյութում կազմում են 2.0 և 0.3 %:

Տեխնոլոգիական փորձարկումներով ապացուցվել է, որ ստացված խտանյութերում գործնականում բացակայում են նաև պղինձը, ցինկը, կապարը, սելենը, թելուրը և բիսմուտը, ինչը հանքաքարում նշված տարրերի ցածր պարունակությունների արդյունք է:

Տեխնոլոգիական փորձարկումների արդյունքները վկայում են, որ արծաթի կորզումը խտանյութ գործնականում հաստատուն է և կազմում է 60%, մինչդեռ խտանյութի ելքը կախված է հանքաքարում ոսկու պարունակությունից: Ոսկու միջին պարունակությունները հանքաքարում դրա եզրագծային պարունակության բոլոր տարբերակներում գրեթե նույնական են և կազմում են մոտավորապես 1.3 գ/տ:

2.4. Հիդրոերկրաբանական, մշակման լեռնաերկրաբանական և լեռնատեխնիկական պայմանները

Մուցքի ոսկու հանքավայրի հետախուզման ժամանակ անցկացած մինչև 300-320մ խորությամբ հորատանցքերում, ինչպես նաև այս նույն տարածքում նախկինում անցած երեք բովանցքներից մեկում (№ 3) ջրի առկայություն չի արձանագրվել, իսկ մյուս երկու բովանցքներից մարտ-հունիս ամիսներին փաստվել է ջրի աննշան

արտահոսք (0.3-0.5 լ/վրկ): Նշված բովանգքների, ինչպես նաև ձնհալքի, սեզոնային աղբյուրների և մթնոլորտային տեղումների ջրերը սնում են արևմտյան մասով անցնող Անանուն ձորակը, որում ձևավորվում է Շաղատ գետի ժամանակավոր վտակներից մեկը: Հանքավայրի հետախուզման ընթացքում իրականացված մշտադիտարկումների համաձայն վերոնշյալ ջրհոսքը հունիս-հոկտեմբեր ամիսներին ամբողջությամբ վերանում է (առվակը ցամաքում է) և դրա առավելագույն դեբիտը մնացած ամիսներին չի գերազանցում 1.0-1.2 լ/վրկ.:

2.5. Պաշարների հաշվարկը

Հանքավայրի պաշարները հաստատվել են 2020 թվականի հունվարի 1-ի դրությամբ հետևյալ կարգերով և քանակներով.

Աղյուսակ 3.

Հաշվարկային բլոկների կարգը	Հանքաքարի պաշարները, հազ.տ	Ոսկու պաշարները, կգ	Արծաթի պաշարները, կգ
C ₁ կարգ	535.9	791.3	1160.7
C ₂ կարգ	2201.0	2813.7	4570.1
Ընդամենը	2736.9	3605.0	5730.8

3. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Մուցքի ոսկու հանքավայրը բաղկացած է իրար հարևանությամբ երկու տեղամասերից՝ հարավային և հյուսիսային, որոնց նախագծված բացահանքերը հատակում (1900մ հորիզոնում) միանում են դառնալով մեկ ընդհանուր (միացյալ) բացահանք: Հանքավայրում հանքարդյունահանման աշխատանքները նախատեսվում է կատարել 2 փուլերով:

1-ին փուլում նախատեսվում է լեռնային աշխատանքները կազմակերպել հարավային տեղամասում (որը պարունակում է ամբողջ պաշարների մոտ 80%-ը): Այնուհետև մոտ 10 տարի շահագործելուց նետո 2-րդ փուլում շահագործվում են երկու տեղամասերի պաշարները համատեղ: Նախագծված բացահանքերը վերջնական դիրքում ունեն հետևյալ պարամետրերը՝

Աղյուսակ 4.

Հ/հ	Պարամետրերի անվանումը	Չափման միավորը	Ընդհանուր (միացյալ) բացահանք	Այդ թվում	
				1-ին փուլի բացահանք	2-րդ փուլի բացահանք
1	2	3	4	5	6
1.	Առավելագույն երկարությունը	մ	1125	720	
2.	Առավելագույն լայնությունը	մ	675	675	
3.	Մշակման առավելագույն խորությունը	մ	270	270	
4.	Օտարման տարածքը	հա	61,8	33,7	
5.	Հաշվեկշռային պաշարների քանակը	մ ³	1112561	606226	506335
		տ	2736900	1491317	1245583
6.	Արդյունաբերական պաշարների քանակը	մ ³	1112561	606226	566335
		տ	2736900	1491317	1245583
7.	Հանքաստիճանի թեքման անկյունը	աստ			
	Կողային ժայռային ապարներում		55		
	Այլուվիալ առաջացումներում		45		
8.	Հանքաստիճանի բարձրությունը	մ	30		
9.	Անվտանգության բերմայի լայնությունը	մ	12		
10.	Բացահանքի կողերի թեքման անկյունը	աստ	36-38 ⁰		

1	2	3	4	5	6
11.	Մակաբացման ապարների քանակը	մ ³	39172620	19537527	19635093
	- այլուվիալ առաջացումներ		2616813	1428560	1188253
	- հանքապարփակող ապարներ		36555807	18108967	18446840
	Մակաբացման միջին գործակիցը	մ ³ /տ	14,31	13,1	15,76

Օգտակար հանածոյի կորուստները և որակի փոփոխությունը (աղքատացումը)

Օգտակար հանածոյի կորուստները և որակի փոփոխությունը (աղքատացումը) որոշվել են նախկին ԽՍՀՄ լեռնեխահանողության կողմից հաստատված մեթոդական ցուցումների հիման վրա հետևյալ արտահայտություններով.

1. Կորուստները - $\Pi = \Pi_T \times K_m \times K_{\Delta m} \times K_h \times K_{\text{թջ}} \%$

2. Որակի փոփոխությունը (աղքատացում) - $P = P_T \times K_m \times K_{\Delta m} \times K_h \times K_{\text{թջ}} \%$

Որտեղ՝

Π_T և P_T - կորուստների և որակի փոփոխության (աղքատացման) գործակիցներն են, որոնք կախված են հանքային մարմնի ձևից, անկման անկյունից:

$\Pi_T = P_T = 2.4$

$K_m, K_{\Delta m}, K_h, K_{\text{թջ}}$ – շտկման գործակիցներ են, որոնք հաշվի են առնում համապատասխանաբար հանքային մարմինների հզորությունը, աղքատացնող ապարների նրբաշերտերի ներխառնումների ծավալը, աշխատանքային հանքաստիճանի բարձրությունը և կորուստների ու աղքատացման հարաբերությունը:

Նշված գործակիցների ընդունվում են համաձայն «Գունավոր մետալուրգիայի լեռնահանքային ձեռնարկությունների բաց եղանակով մշակման տեխնոլոգիական նախագծման նորմեր»-ի 1986թ. աղ.7, աղ.8 և կազմում են

$\Pi_T = P_T = 2.2$

$K_{\Delta m} = 1.02, K_m = 1.2, K_h = 1, K_{\text{նզ}} = 0.75, K_{\text{թջ}} = 1.25$

Այսպիսով՝ $\Pi = 2.2 \times 1.2 \times 1.12 \times 1 \times 0.75 = 2.2\%$, $P = 2.2 \times 1.2 \times 1.12 \times 1 \times 1.25 = 3.7 \%$

Բացահանքի արտադրողականությունը, աշխատանքի ռեժիմը

և ծառայման ժամկետը

Բացահանքի տարեկան արտադրողականությունը համաձայն տեխնիկական առաջադրանքի ընդունված է 150.0 հազ.տ ըստ ապրանքային հանքաքարի:

Հաշվարկների համար բացահանքի տարեկան արտադրողականությունը ըստ մակաբացման ապարների ընդունված է բացահանքի միջին ցուցանիշը մոտ 2120.0հազ.մ³:

Լեռնային աշխատանքները բացահանքում նախատեսվում է կատարել շուրջ տարի, երկու հանգստյան օրով աշխատանքային շաբաթով: Աշխատանքային օրերի քանակը տարում ընդունված է 254 օր, աշխատանքային հերթափոխերի քանակը օրում -2, հերթափոխի տևողությունը - 8ժամ:

Բացահանքի տարեկան, օրեկան և հերթափոխային հաշվարկային արտադրողականությունները ըստ օգտակար հանածոյի և մակաբացման ապարների բերված են 5-րդ աղյուսակում:

Աղյուսակ 5.

Հ/հ	Մշակվող ապարները	Չափման միավորը	Բացահանքի արտադրողականությունը		
			տարեկան	օրեկան	հերթափոխային
1	2	3	4	5	6
1. Հաշվեկշռային պաշարներ					
1	Մակաբացման ապարներ	մ ³	2120935.3	8350.14	4135.07
	այդ թվում՝ -ալյուվիալ առաջացումներ		145000	570.87	285.44
	-հանքապարփակող ապարներ		1975935.3	7779.27	3889.63
2	Հանքաքար	մ ³	60049.5	236.42	118.21
		տ	147721.8	581.58	290.79
3	Ընդամենը լեռնային զանգված		21804984.8	8586.56	4293.28
2. Ապարանքային հանքաքար					
1	Մակաբացման ապարներ	մ ³	2120000	8346.46	4173.23
	այդ թվում՝ -ալյուվիալ առաջացումներ		145000	570.87	285.44
	-հանքապարփակող ապարներ		1975000	7775.59	3887.79
2	Հանքաքար	մ ³	60984.8	240.1	120.05
		տ	150000	590.55	295.28
3	Ընդամենը լեռնային զանգված	մ ³	2180984.58	8586.56	4293.28

Բացահանքի ծառայման ժամկետը կազմում է. $T = t_1 + t_2$

Որտեղ՝ t_1 - բացահանքի շինարարության տևողությունն է $t_1 = 0.7$ տարի

t_2 - բացահանքի շահագործման տևողությունն է

2779077 - 5374

$t_2 = \frac{\dots}{150000} = 18.5$ տարի

150000

որտեղ՝ 2779077տ – ապրանքային հանքաքարի քանակն է միացյալ բացահանքի եզրագծի սահմաններում,

5374տ - բացահանքի շինարարության ժամանակ մշակվող ապրանքային հանքաքարի քանակն է:

$$T=0.7 + 18.5 = 19.2 \text{ տարի}$$

Լեռնակապիտալ աշխատանքներ

Բացահանքի շահագործման համար անհրաժեշտ կատարել հետևյալ լեռնանակապիտալ աշխատանքները:

1. Բացահանքի հյուսիս-արևմտյան մասից մոտեցող առկա գրունտային ավտոճանապարհի կարգաբերում $L=1100\text{մ}$, $b=12\text{մ}$, $V= 1320\text{մ}^3$:

2. Մոտեցող գրունտային ավտոճանապարհի 2040մ բարձունքային նիշ ունեցող հորիզոնից մինչև բացահանքի 2090մ բարձունքային հանքաստիճանը գրունտային ավտոճանապարհի կառուցում $L=670\text{մ}$, $b=12\text{մ}$, $V= 8400\text{մ}^3$:

3. Մոտեցող գրունտային ավտոճանապարհի 2040մ բարձունքային նիշ ունեցող հորիզոնից դեպի լցակույտ գրունտային ավտոճանապարհի կառուցում $L=1070\text{մ}$, $b=12\text{մ}$, $V= 10600\text{մ}^3$:

4. Բացահանքի 2090մ նիշ ունեցող հանքաստիճանից լեռնային զանգվածի մշակում $V= 20704\text{մ}^3$, այդ թվում

- այլուվիալ առաջացումներ – 4230մ^3 ,
- հանքարփակող ապարներ – 16400մ^3 ,
- հանքաքար – 74մ^3 (ուղեկցող հանույթ):

5. Բացահանքի 2080մ նիշ ունեցող հանքաստիճանից լեռնային զանգվածի մշակում $V= 54837.2\text{մ}^3$, այդ թվում

- այլուվիալ առաջացումներ – 3060մ^3 ,
- հանքարփակող ապարներ – 49700մ^3 ,
- հանքաքար – 2077.2մ^3 (ուղեկցող հանույթ):

6. Բարձրադիր ջրհեռացող առվի կառուցում $L=855\text{մ}$, $V=188\text{մ}^3$ (ջրհեռացման առվի մնացած մասն անցկացվում է շահագործման ընթացքում):

7. Արդյունաբերական հրապարակի կառուցում – 650մ^3 :

Բացահանքի շինարարության տևողությունը որոշված է 8.4 ամիս (0.7տարի):

Բացահանքի հանքաստիճանների բացումը

Բացահանքի բարձրադիր մասի 2160-2030մ նիշ ունեցող հանքաստիճանների բացումը կատարվում է մոտեցող միջհանքային ավտոճանապարհից հորիզոնական բացող կիսախրամների անցումով:

Բացահանքերի խորքային մասի 2020-1900մ նիշ ունեցող հանքաստիճանների բացումը կատարվում է թեք կիսախրամների անցումով:

Բացող կիսախրամների լայնությունը հիմքի մասում ընդունված է 12մ, իսկ թեք խրամի թեքությունը 10%:

Մշակման համակարգը

Բացահանքում հանքային մարմինը մշակելու համար ընդունված է միակողանի, ընդերկայնական և ընդլայնական ընթացքաշերտերով, խորացող մշակման համակարգ, մակաբացման ապարները դեպի արտաքին լցակույտեր տեղափոխումով:

Ընդունված մշակման համակարգի տարրերն են՝

1. Հանքաստիճանի բարձրությունը
 - աշխատանքայինը – 10մ,
 - վերջնական դիրքում -30մ (հանքաստիճանները եռապատկվում են)
2. Հանքաստիճանի թեքման անկյունը.

ա) ժայռային ապարներում

- աշխատանքայինը - 65°
- մարվողինը – 55°

բ) փխրուն ապարներում

- աշխատանքայինը - 50°
- մարվողինը - 45°

3. Աշխատանքային հրապարակի նվազագույն լայնությունը ընդունված է

- ա) ժայռային ապարներում – 40մ;
- բ) փխրուն ապարներում - 30մ

4. Լեռնային աշխատանքների կատարման հիմնական ուղղությունները -

հարավից դեպի հյուսիս և արևմուտքից դեպի արևելք:

Լեռնային զանգվածի նախապատրաստումը արդյունահանման

Ելնելով մակաբացման ապարների և օգտակար հանածոյի ֆիզիկամեխանիկական հատկություններից, փխրուն կիսաժայռային հիդրոթերմալ փոփոխված

ապարների արդյունահանումը կատարվում է առանց նախապատրաստման, իսկ ժայռային հանքաքարփակող մակաբացման ապարների 50%-ը և հանքաքարի արդյունահանումը նախատեսվում է կատարել նրանց նախապատրաստումից հետո, նախնական փխրեցման կիրառմամբ:

Ապարների նախնական փխրեցումը նախատեսվում է կատարել հորատապայթեցման աշխատանքների օգնությամբ, հորատանցքային լիցքերի կիրառմամբ:

Հորատանցքերի հորատումը նախատեսվում է կատարել ձեռնարկությունում առկա GP600B հորատման հաստոցով: Ապարների փխրեցման համար նախատեսվում է օգտագործել ուղղաձիգ հորատանցքային լիցքեր:

Ժայռային մակաբացման ապարների և օգտակար հանածոյի հորատման համար հորատանցքերի տրամագիծը ընդունված է 160մմ:

Հանքաստիճանների մարման ժամանակ եզրագծային հորատանցքերի հորատումը նույնպես կատարվում է GP600B հորատման հաստոցով: Այս դեպքում հորատանցքերի տրամագիծը պետք է լինի 116 մմ-ից ոչ ավելի:

Արտաչափերի մանրացումը, ինչպես նաև շեմքերի վերացումը նախատեսվում է կատարել էքսկավատորի հենքի վրա սարքավորված 500մ³/հերթ արտադրողականությամբ հիդրավլիկ մուրճի միջոցով: Արտաչափերի քանակը ընդունված է 2% հանքաքարի, 0.5% դատարկ ապարների փխրեցվող ծավալներից:

Շեմքերի վերացման համար փխրեցվող ծավալը ընդունված է 1% ընդհանուր փխրեցվող ծավալից:

Հորատապայթեցման աշխատանքների հիմնական հաշվարկային պարամետրերը բերված են աղյուսակ 6-ում:

Աղյուսակ 6.

Հ/հ	Հորատապայթեցման աշխատանքների պարամետրերը	Չափման միավորը	Պարամետրերը	
			հիմն. փխրեցում	եզրագծային պայթեցում
1	2	3	4	5
1.	Ապարների խումբը (CH՝Ս-4-02-91)		VI-VII	VI-VII
2.	Հանքաստիճանի բարձրությունը	մ	10	10
3.	Հորատանցքի թեքման անկյունը	աստ.	90	55
4.	Հորատանցքի տրամագիծը	մմ	150	116
5.	Պայթուցիկ նյութի տեսակարար ծախսը	կգ/մ ³	0.43	-
6.	Ամենափոքր դիմադրության գիծը	մ	5.2	-
7.	Հորատանցքի երկարությունը	մ	11.0	14

1	2	3	4	5
8.	Հորատանցքերի միջև հեռավորությունը շարքում	մ	5.2	1.0
9.	Հորատանցքերի շարքերի միջև եղած հեռավորությունը	մ	5.5	-
10.	Լիցքի քաշը հորատանցքում	կգ	110.3	6
11.	Լիցքի երկարությունը հորատանցքում	մ	7.3	Կախվում է շղթաներով
12.	Խցանման երկարությունը հորատանցքում	մ	3.7	
13.	Հորատանցքերի շարքերի քանակը	շարք	1-3	1
14.	Ապարների էլքը 1 հորատանցքից	մ ³	270.4	-
15.	Ապարների էլքը 1մ հորատանցքից	մ ³	24.6	-
16.	Փխրեցվող ապարների ծավալը տարում	մ ³ /տարի	1018000	-
17.	Փխրեցվող ապարների ծավալը հերթափոխում	մ ³ /հերթ	2004	-
18.	Եզրագծային հորատման մակերեսը տարում	մ ²		34000
19.	Եզրագծային հորատման տեսակարար ծախսը	մ/1000մ ²		800
20.	Հորատման հաստոցի արտադրողականությունը	մ/օր մ/տարի	360 82300	
21.	Հորատանցքերի ծախսը տարում	մ	41382	27200
22.	Հորատման հաստոցների քանակը	հատ		1

Հորատման աշխատանքների համար ընդունվում են 1 հատ GP600B հորատման հաստոցը: Հորատապայթեցման աշխատանքների ռեժիմը և պարամետրերը ճշտվում են տեղում:

Պայթեցման աշխատանքները

Լեռնային զանգվածի հիմնական պայթեցման համար որպես պայթուցիկ նյութ ընդունված է ամոնիակային սելիտրայի հենքի վրա տեղում պատրաստվող իգդանիտ: Որպես հրահրիչ պայթուցիկ նյութ ընդունված է ամոնիտ N6-ը:

Որպես պայթեցման միջոցներ ընդունված են էլեկտրահաղորդիչ լարեր, էլեկտրաճայթիչներ, իսկրա (սոնել) C500/1մ, П17, 25.42.67/3մ:

Պայթեցման աշխատանքները պետք է կատարվեն հատուկ լիցենզավորված կազմակերպությունների կողմից:

Պայթեցման աշխատանքների ժամանակ անվտանգ հեռավորությունները

Պայթեցման աշխատանքների կատարման ժամանակ անվտանգ հեռավորությունները ընդունված են ՀՀ կառավարության կողմից 2008թ. մարտի 6-ի №291-Ն «Պայթեցման աշխատանքների կատարման ժամանակ անվտանգության միասնական կանոնները հաստատելու մասին» որոշման հավելվածի պահանջներին համապատասխան և կազմում են՝

1. Պայթեցման աշխատանքների կատարման ժամանակ մարդկանց համար անվտանգ հեռավորությունը հորատանցքային լիցքերի կիրառման դեպքում – ոչ պակաս 200.0մ (աղյուսակ № 5, կետ 1.5) ;

2. Պայթեցման աշխատանքների կատարման ժամանակ ապարների առանձին կտորների դուրս թռչելու (ցրիվ գալու) դեպքում մարդկանց համար վտանգավոր գոտու շառավիղը - 300.0մ (աղյուսակ № 6);

3. Պայթուցիկ նյութերի պահեստից պայթյունի դեպքում օդային հարվածային ալիքի սահմանային թույլատրելի նվազագույն հեռավորությունը – 300.0մ (աղյուսակ № 7):

Հանույթաբարձման աշխատանքները

Լեռնային զանգվածի հանույթաբարձման աշխատանքների ժամանակ բացահանքում օգտագործվում են շերտի 2մ³ տարողությամբ էքսկավատորներ:

Էքսկավատորի հերթափոխային արտադրողականությունը որոշվում է հետևյալ բանաձևով.

$$Q_h = \frac{T \times K_d \times g_v \times N_2 \times K_h}{(t_p + t_n)} \text{ մ}^3/\text{հերթ.},$$

որտեղ՝ $T=480$ րոպե – հերթափոխի տևողությունն է;

$K_d=0.915$ – հերթափոխի ընթացքում ժամանակի օգտագործման գործակիցն է;

$g_v=1.4$ մ³ – լեռնային զանգվածի ծավալն է բնամասում մեկ շերտի մեջ;

$N_2=9$ - մեկ ինքնաթափի մեջ բարձվող շերտի մասերի քանակն է;

$K_h=0.9$ – էքսկավատորի արտադրողականությունը իջեցնող գործակից է, որը հաշվի է առնում հանքախորշի թրջումը հերթափոխի ընթացքում և պայթեցման աշխատանքների կատարումը;

$t_p=4.05$ րոպե.- մեկ ինքնաթափի բարձման տևողությունն է;

$t_n=0.5$ րոպե – ավտոինքնաթափը բարձման տակ տեղադրելու տևողությունն է

$$Q_h = \frac{480 \times 0.915 \times 1.4 \times 9 \times 0.9}{(4.05 + 0.5)} = 1094.6 \text{մ}^3;$$

Էքսկավատորի տարեկան արտադրողականությունը՝

$$Q_{un} = N_{un} \times Q_h \times K_{te}, \text{մ}^3;$$

որտեղ՝ $N_{տ}$ - տարվա ընթացքում աշխատանքային հերթափոխերի քանակն է
 $N_{տ}=508$ հերթ.

K_t - գործակից է, որը հաշվի է առնում տարվա ընթացքում անբարենպաստ եղանակի պայմանները $K_t = 0,9$:

$$Q_{տ} = 508 \times 1094,6 \times 0,9 = 500450 \text{ հազ մ}^3/\text{տարի}$$

Հաշվարկային տարում բացահանքի լեռնային զանգվածի հանույթաբարձման աշխատանքների համար նախատեսվող CAT-336 էքսկավատորների ընդհանուր քանակը կլինի.

- մակաբացման ապարների համար

$$N_{մ} = 220000 : 500450 = 4.3 \text{ հատ}$$

- հանքաքարի համար

$$N_{հ} = 60984.8 : 500450 = 0.13 \text{ հատ}$$

Օժանդակ աշխատանքների համար (հանքաստիճանների հարթեցում, արտաչափ կտորների տեղափոխում և կուտակում, ավտոճանապարհների կարգաբերում և այլն, էքսկավատորներին կցվում են բուլդոզերներ:

Լեռնային զանգվածի տեղափոխումը

Հանքաքարի տեղափոխումը դեպի արտադրական հրապարակում գտնվող խոշոր ջարդման արտադրամաս մինչև 1.1կմ, իսկ մակաբացման ապարների տեղափոխումը դեպի արտաքին լցակայան (1.8կմ հեռավորության վրա) նախատեսվում է կատարել 31տ բեռնատարողությամբ (թափքի երկրաչափական տարողությունը 22մ³) ինքնաթափերով:

Ավտոինքնաթափի հերթափոխային արտադրողականությունը որոշվում է հետևյալ բանաձևով.

$$Q_{հ} = \frac{60 \times T_{հ} \times q \times K_{\delta}}{T_{է}}, \quad \text{տ/հերթ.}$$

որտեղ՝ $T_{հ} = 8$ ժամ – հերթափոխի տևողությունն է;

$q = 31$ տ – ավտոինքնաթափի բեռնատարողությունն է;

$K_{\delta} = 0.85$ – հերթափոխի ընթացքում ժամանակի օգտագործման գործակիցն է;

$T_{\text{է}}$ – ավտոինքնաթափերի մեկ երթի տևողությունն է, րոպե.

$$T_{\text{է}} = t_{\text{բ}} + t_{\text{դ}} + t_{\text{մ}} + t_2 \text{ րոպե,}$$

որտեղ՝ $t_{\text{բ}}$ – ավտոինքնաթափերի բարձման տևողությունն է, րոպե;

$t_{\text{դ}}$ – ավտոինքնաթափերի բեռնաթափման տևողությունն է, րոպե;

$t_{\text{մ}}$ – ավտոինքնաթափերի մանևրումների տևողությունն է, րոպե;

t_2 – ավտոինքնաթափերի շարժման տևողությունն է, րոպե;

$$t_2 = \frac{2L \times 60}{V_{\text{միջ.}}} \text{ րոպե,}$$

որտեղ՝ L – բեռնատեղափոխման միջին հեռավորությունն է, կմ;

$V_{\text{միջ.}}$ – ավտոինքնաթափերի միջին երթային արագությունն է, կմ/ժամ;

Ավտոինքնաթափերի աշխատանքային համակազմը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$N_{\text{ա}} = \frac{Q_{\text{հ}} \times K_{\text{ան}}}{Q_{\text{ա}}}, \text{ հատ,}$$

որտեղ՝ $Q_{\text{հ}}$ – բացահանքի հերթափոխային արտադրողականությունն է, մ³/հերթ;

$K_{\text{ան}}=1.1$ – բեռնատեղափոխման անհավասարաչափության գործակիցն է:

Լեռնային զանգվածի տեղափոխման համար ընդունված են 17 հատ ավտոինքնաթափերը:

Բացահանքի լցակույտային տնտեսությունը

Բացահանքի լցակույտ առաջացնող ապարները 39155291մ³ ընդհանուր քանակով ներկայացված են 2616813մ³ քանակով ալյուվիալ-դելյուվիալ առաջացումներից և 36538478մ³ քանակով հանքապարփակող ապարներից:

Մինչև բացահանքի 1-ին փուլի շահագործման վերջը մակաբացման ապարները 19528084մ³ քանակով, այդ թվում ալյուվիալ-դելյուվիալ առաջացումներ-1428560մ³, հանքապարփակող ապարներ-18099524մ³, նախատեսվում է պահեստավորել արտաքին լցակույտերում:

2-րդ փուլի բացահանքի շահագործման ընթացքում մակաբացման ապարները- 19627207մ³ քանակով, այդ թվում ալյուվիալ-դելյուվիալ առաջացումներ-1188253մ³,

հանքապարփակող ապարներ-18438954³ նախատեսվում է պահեստավորել ներքին լցակույտերում:

Արտաքին լցակույտերը բաղկացած են 2 տեղամասերից՝ հյուսիսային և հարավային:

Հյուսիսային լցակույտի զբաղեցրած տարածքը կազմում է 14.9հա, պահեստավորվող ապարների քանակը 6.6մլն.մ³:

Լցակույտը ձևավորվում է երեք հարկերով: Հարթակների նիշերն են 2000մ, 2050մ և 2070մ հորիզոնները, հարթակների բարձրություններն են համապատասխանաբար 55մ (առավելագույնը), 50մ և 20մ: Լցակույտի ընդհանուր բարձրությունը կազմում է 125մ, հարկերի շեպերի թեքման անկյունը 30-35°:

Հարավային լցակույտի զբաղեցրած տարածքը կազմում է 30.6հա, պահեստավորվող ապարների ծավալը 12.93մլն.մ³:

Հարթակների նիշերն են 2100մ, 2160մ և 2210մ հորիզոնները, հարթակների բարձրություններն են համապատասխանաբար 65մ (առավելագույնը), 60մ և 50մ: Լցակույտի ընդհանուր բարձրությունը կազմում է 175մ, հարկերի շեպերի թեքման անկյունը 30-35°:

Նախ ձևավորվում է հյուսիսային լցակույտը, դրանից հետո հարավայինը: Լցակույտառաջացումը կատարվում է բուլդոզերային եղանակով:

Լցակույտառաջացման ժամանակ լցակույտերի ստորին մասերում նախ պահեստավորվում են հանքապարփակող ապարները, ապա դրանց վրա փռվում ու հարթեցվում են այլուվիալ-դելյուվիալ առաջացումները:

Փոշենստեցումը և օդափոխությունը

Լեռնային աշխատանքների կատարման ժամանակ փոշեառաջացման օջախներ են հանդիսանում բացահանքային և լցակույտատար ավտոճանապարհները, հանքախորշերը, լցակույտերը, ավտոմեքենաների բարձման և բեռնաթափման կետերը և այլն:

Բացահանքային աշխատողների համար սանիտարա-հիգիենիկ բարենպաստ պայմաններ ստեղծելու համար նախատեսվում է տարվա շոգ և չոր եղանակներին կատարել փոշենստեցում, փոշենստեցման օջախները ինտենսիվ ջրելու միջոցով:

Ավտոճանապարհները և լցակայանների մակերևույթները նախատեսվում է հերթափոխում ջրել 2 անգամ:

Հորատման հաստոցները սարքավորված են փոշեկլանիչներով: Այդ իսկ պատճառով հորատման աշխատանքի ժամանակ փոշենստեցում չի նախատեսվում:

Քանի որ բացահանքի հանքաստիճանների մեծ մասը ունեն ուղղակի հորիզոնական ելք դեպի երկրի մակերևույթ, իսկ խորքային մասը ունի փոքր խորություն, սույն նախագծով բացահանքի արհեստական օդափոխություն չի նախատեսվում:

Բացահանքի շահագործման ժամանակացույցը

Բացահանքի եզրագծի սահմանների մեջ ներառված հանքաքարի պաշարների արդյունահանումը ըստ ժամանակացույցի նախատեսվում է կատարել երկու փուլերով: Յուրաքանչյուր փուլի տեղամասում հանքաքարի արդյունահանման և մակաբացման ապարների հեռացման աշխատանքները նախատեսվում է կատարել հաջորդաբար վերնից-ներքև: Հանքաստիճանի բարձրությունը ընդունված է 10մ, որոնք վերջնական դիրքում (մարումից հետո) եռապատկվում են:

Բացահանքի տարեկան արտադրողականությունը ըստ ապրանքային հանքաքարի համաձայն տեխնիկական առաջադրանքի ընդունված է 150.0հազ.տ, օգտակար հանածոյի կորուստներն կազմում են 2.2%, աղքատացումը-3.7%:

Հեռացվող մակաբացման ապարների տարեկան հաշվարկային քանակը ընդունված է 2120953մ³:

Բացահանքի ջրամատակարարումը և ջրհեռացումը

Բացահանքի ջրամատակարարումը կատարվում է բացահանքերի արդյունաբերական հրապարակը խմելու ջրով ապահովելու, աշխատանքային հրապարակները, հանքախորշերը, ավտոճանապարհները, լցակայանների բեռնաթափման հրապարակները փոշենստեցման նպատակով ջրելու համար:

Խմելու ջրի մատակարարումը կատարվում է ընկերության արդյունաբերական հրապարակում:

Տեխնիկական ջրի ծախսը հիմնականում կապված է փոշեառաջացման օջախների ջրման հետ:

Այդ ծախսը հաշվվում է $W_{ջ} = S \times g \times N \times K$,

որտեղ՝

S-թրջվող մակերեսն է-17500մ² (ավտոճանապարհներ-15000մ², լցակույտերի բեռնաթափման հրապարակը - 500մ², աշխատանքային հրապարակներ-2000մ²);

g – օրական ջրցանի նորման – 0.001մ³/մ² (2 x 0.5լիտր/մ²);

N – աշխատանքային հերթափոխերի քանակը տարում – 508;

K₁ - շոգ և չոր եղանակների օրերի քանակը տարում հաշվի առնող գործակից – 0.6:

$$\text{Այսպիսով՝ } W_{\text{ջ}} = 17500 \times 0.001 \times 508 \times 0.6 = 5334 \text{մ}^3/\text{տարի}$$

Բացահանքերի և լցակույտերի տարածքում գետնաջրերը բացակայում են: Բացահանքերի ջրհեռացումը կատարվում է երկու նպատակով:

I. Բացահանքերի և լցակույտերի բարձրադիր տարածքներից մթնոլորտային տեղումները բացահանքերի և լցակույտերի տարածք չթափելու համար:

II. Բացահանքերի խորքային մասի տարածքը թափվող մթնոլորտային տեղումների հեռացման համար:

I. Բացահանքերի և լցակույտերի բարձրադիր տարածքներից մթնոլորտային տեղումների հեռացումը նախատեսվում է կատարել բարձրադիր ջրհեռացնող առուների միջոցով: Բարձրադիր ջրհեռացնող առուները կառուցվում են 4 տեղամասերում:

1. Բացահանքերից արևելք - 2175մ բարձունքային նիշից մինչև 2135մ բարձունքային նիշը: Երկարությունը կազմում է 1,1կմ, թեքությունը- 0.36, ջրհավաքի մակերեսը-12հա:

2. Բացահանքերից արևմուտք - 2175մ բարձունքային նիշից մինչև 2080մ բարձունքային նիշը: Ջրհավաք մակերեսը կազմում է 48.6հա, ջրհեռացնող առվի երկարությունը -855մ, թեքությունը-0.11:

3. Բացահանքերից և լցակույտերից հարավ - 2150մ բարձունքային նիշից մինչև 2080մ բարձունքային նիշը: Ջրհավաք մակերեսը կազմում է 150հա, ջրհեռացնող առվի երկարությունը -1120մ, թեքությունը-0.062:

4. Լցակույտերից արևմուտք - 2150մ բարձունքային նիշից մինչև 2000մ բարձունքային նիշը: Ջրհավաք մակերեսը կազմում է 475հա, ջրհեռացնող առվի երկարությունը -2860մ, թեքությունը-0.017:

Ջրհեռացնող առուներով հոսող ջրերի ամենամեծ քանակը որոշված է հետևյալ արտահայտությամբ.

$$Q = K \times F \times L \times h, \text{մ}^3/\text{ժամ}$$

Որտեղ՝ K - գործակից, որը հաշվի է առնում ինֆիլտրացիայի պայմանները,
 $K=0.5$;

F – տարածքի ջրհավաք մակերեսն է, m^2

L - գործակից, որը հաշվի է առնում ջրահավաքի երկարությունը և թեքությունը,
 $L = 0.3$

h – մթնոլորտային տեղումների առավելագույն քանակն է, $h=0.00225m/ժամ$:

Ջրհեռացող առվի կտրվածքի մակերեսը որոշվում է հետևյալ բանաձևով.

$$S = \frac{Q}{V}, m^2$$

որտեղ՝ V - ջրի հոսքի արագությունն է, $V= 0.6m/վրկ$,

Ջրհեռացնող առուների համար ընդունվում է տիպային սեղանաձև կտրվածք:
Ջրհեռացնող առուները բետոնապատվում են $0.1m$ հաստության շերտով:

II. Բացահանքերի Բարձրադիր մասի 2160-2020մ հանքաստիճաններից բացահանքերի տարածք թափվող մթնոլորտային տեղումները հեռացվում են ինքնահոս կերպով, հանքաստիճանների մարված առափների վրա կառուցված ջրհեռացնող առվակներով:

Բացահանքերի խորքային մասից 2020մ-ից մինչև 1900մ հորիզոնների հանքաստիճաններից բացահանքի տարածք թափվող տեղումների հեռացումը նախատեսվում է կատարել տեղաձուլվող պոմպային կայանքների միջոցով:

1. Մթնոլորտային տեղումների առավելագույն ծախսը ժամում որոշվում է հետևյալ բանաձևով.

$$Q_{պ} = \frac{C \times \alpha \times F \times K}{24}, m^3/ժամ$$

որտեղ՝

C – մթնոլորտային տեղումների առավելագույն քանակն է օրվա ընթացքում,
 $C=54mm (0.054m)$;

α - գործակից, որը հաշվի է առնում ջրի հոսքի դանդաղեցումը և ներծծումը, $\alpha = 0.3$:

F – տարածքի ջրհավաք մակերեսն է, $F=35ha$;

K - գործակից, որը հաշվի է առնում հատակի ջրակլանելիությունը, $K = 0.4$

$$0.054 \times 0.3 \times 350000 \times 0.4$$

$$Q = \frac{\text{-----}}{24} = 94.5 \text{մ}^3/\text{ժամ}$$

Պոմպային կայանքի արտադրողականությունը որոշվում է

$$94.5 \times 24$$

$$Q_{պ} = \frac{\text{-----}}{20} = 113.4 \text{մ}^3/\text{ժամ}$$

Հանքաստիճանի հատակում ջրհավաքի տարողությունը

$$V = Q_{պ} \times 2 = 113.4 \times 2 = 227 \text{մ}^3, \text{ իսկ չափերը մոտ } L \times B \times h = 8 \times 7.5 \times 4 \text{մ}$$

Ջրհեռացման համար ընդունվում է 2 հատ (1-ը պահուստային) ԼԿՀС 180-128 պոմպային կայանքներ կամ դրանց համարժեք այլ պոմպային կայանքներ:

Պոչամբարի կառուցման եղանակի հակիրճ նկարագրությունը

Մուցքի ոսկու հանքավայրի հանքահարստացման ժամանակ նախատեսվում է կիրառել պոչամբարում պինդ պոչանքների պահեստավորման տեխնոլոգիան: Պինդ պոչանքների պոչամբարը գտնվում է հյուսիսային և հարավային լցակույտերի միջև տեղադրված ձորակում: Ջրադեցրած տարածքը կազմում է 7.5հա, առավելագույն խորությունը 50մ, պոչամբարի վերին հարթակի նիշը 2040մ, տարողությունը 1174,9հազ.մ³:

Պոչամբարը շահագործելուց առաջ հատակի բերվածքային ապարները պետք է հեռացվեն և հատակին փոփի 3մմ հաստությամբ պոլիէթիլենային թաղանթ: Պոչերը պոչամբարում պետք է փոփեն նրանց լրիվ ցամաքելուց ու չորացումից հետո 3-5մ հաստությամբ հորիզոնական շերտերով:

Հյուսիսային և հարավային լցակույտերը հանդիսանում են պատվար պահեստավորված պոչերի համար: Պոչերի ցամաքեցման ժամանակ հեռացված ջրերը փակ շրջանառու ցիկլով կրկին օգտագործվում է ֆլոտացիոն աշխատանքների ժամանակ: Պոչերի չորացման հրապարակից չորացած պոչերի տեղափոխումը պոչամբար կատարվելու է ավտոինքնաթափերով, իսկ փոումը բուլդոզերով:

Պոչամբարում պոչերը պահեստավորելուց հետո մակերեսին փոփում են 0.3մ հաստությամբ այրուվիալ-դեյրուվիալ առաջացումների շերտ ու հարթեցվում ռեկուլտիվացիայի նպատակով:

Հարստացուցիչ ֆարրիկայի և պոչամբարի նախագիծը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ներկայացվելու է շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության առանձին փաստաթղթով:

Այլընտրանքային լուծումներ

Մուցքի ոսկու հանքավայրի շահագործման նախագծի մշակման ընթացքում դիտարկվել է գործունեության ծավալման այլընտրանքային տարբերակները:

Այլընտրանքային լուծումներ ներկայացվել են մաքակացման շերտի ապարների կառավարման բնագավառում: Մասնավորապես՝ 2-րդ փուլի բացահանքի շահագործման ընթացքում առաջացող 19627207մ³ ծավալով մակաբացման նախատեսվում է պահեստավորել 1-ին փուլի բացահանքի մշակված տարածքությունում ձևավորելով ներքին լցակույտեր:

Այսինքն, 2-րդ փուլի բացահանքի լցակույտերի ձևավորման համար լրացուցիչ հողատարածքների օտարում չի պահանջվում: Դա նվազեցնում է ազդեցությունը շրջակա միջավայրի վրա, ինչպես նաև բացառում է գյուղատնտեսական հողատարածքների օտարումը:

Միաժամանակ, 1-ին փուլի բացահանքի Հյուսիսային և Հարավային լցակույտերի տեղադիրքը ընտրվել է այնպես, որ դրանք հանդիսանալու են պատվար նախատեսվող պոչամբարի համար՝ ապահովելով դրա անվտանգությունը պահեստավորված ապարների քանակության հաշվին և բացառելով մեծածավալ շինարարական հումքի անհրաժեշտությունը պոչամբարի ձևավորման համար:

Նախատեսվող գործունեության զրոյական տարբերակը չի դիտարկվում, քանի որ ծրագրավորվող աշխատանքների ընթացքում նախատեսվում է ստեղծել 76 նոր աշխատատեղ:

Հանքավայրի երկրաբանական ուսումնասիրության փուլում «Գեոռեյդ» ՓԲ ընկերությունն իրականացրել է բազմաթիվ ծրագրեր, որոնք նպատակաուղղված էին Մուցք բնակավայրի համաչափ զարգացմանը՝ գյուղի ճանապարհի վերանորոգման և ասֆալտապատման ֆինանսավորում, ֆինանսական և նյութական աջակցություն դպրոցին, տոնակատարությունների սրահի կահավորում և անհրաժեշտ սպասքի գնում, նյութական աջակցություն սահմանապահ դիրքերում ծառայություն իրականացնող բնակիչների համար, ֆինանսական աջակցություն բնակարանների վերանորոգման նպատակով: Ընդհանուր առմամբ մինչև հանքավայրի շահագործման

մեկնարկը համայնքին կատարվել է ավելի քան 25.7մլն. դրամի ֆինանսական և նյութական աջակցություն:

Յուրաքանչյուր տարի ազդակիր բնակավայրում նախատեսվում է հատկացնել շուրջ 29.5մլն.դրամ ֆինանսական աջակցություն, որը պետք է ուղղվի մշակութային-կրթական միջոցառումների, համայնքային զարգացման ենթածրագրերի իրականացմանը, բժշկական սարգավորումների և դեղամիջոցների գնմանը, ինչպես նաև կատարվելու է դրամական աջակցություն սոցիալապես անապահով ընտանիքներին/անհատներին: Միաժամանակ, համայնքային նշանակության ճանապարհների վերանորոգման աշխատանքների ընթացքում ընկերության կողմից կտրամադրվեն անհրաժեշտ տեխնիկական միջոցները:

Համաձայն ՀՀ վիճակագրական կոմիտեի հրապարակումների՝ ՀՀ Սյունիքի մարզում պաշտոնապես գրանցված գործազուրկների թիվը գերազանցում է 2000-ը: Միաժամանակ, Մուցքը հանդիսանում է սահմանամերձ բնակավայր:

Սյունիքի մարզի սահմանամերձ 72 գյուղից ընդամենը 5-ն ունեն հազարից ավելի մարդ: Մարզի սահմանամերձ գյուղերի 61%-ը ունեն մինչև 200, 36%-ը՝ մինչև 100 բնակիչ: Եթե նկատի ունենանք Սյունիքի մարզի սահմանամերձ տարածքների ռազմավարական նշանակությունն ինչպես ՀՀ, այնպես էլ ԼՂՀ-ի համար, ապա մարզի սահմանամերձ գյուղերի փոքր միջին մարդաքանակը հանդիսանում է լուրջ հիմնախնդիր:

Հետևաբար, սահմանամերձ Մուցք բնակավայրում աշխատատեղերի ստեղծմանն, սոցիալական պայմանների, ենթակառուցվածքների բարելավմանն ու զարգացմանն ուղղված ծրագրերի իրականացումը, բնակավայրում մարդաքանակի ավելացմանը նպատակաուղղված է ընդհանուր առմամբ մարզի սոցիալ-տնտեսական վիճակի և բնակչության կենսամակարդակի բարելավմանը:

4. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

4.1. Ռելիեֆ, երկրաձևաբանություն

Հանքավայրը գտնվում է Զանգեզուրի լեռնաշղթայի և Սյունյաց սարահարթի միացման հատվածում, որը բնութագրվում է բլրային ռելիեֆով և 1900-2400մ բացարձակ նիշերով:

Զանգեզուրի լեռները ձգվում է միջօրեականի ուղղությամբ մոտ 130 կմ՝ Ամուլսար լեռնազանգվածից մինչև Արաքսի հովիտը: Առանցքային մասը դեպի հարավ աստիճանաբար բարձրանում է և Կապուտջուղ լեռնագագաթում հասնում իր առավելագույն բարձրության (3904 մ): Կատարային գոտին քիչ է մասնատված: Առավել բարձր լեռնագագաթներն են՝ Նահապետ (3510 մ), Երնջակ (3364 մ), Շահապոնք (3204 մ), Սարվարդ (3162 մ), Գողթան(3143 մ), Այրիսար (3132 մ), Միսկատար (3093 մ) և այլն: Լեռների հյուսիսային մասը համեմատաբար ցածր է (միջին բարձրությունը մոտ 2800 մ), լեռնանցքները (Որոտանի (2344 մ), Միսիանի (2345 մ))՝ դյուրանցանելի, մինչև Այրիսար գոգածալքային հիմքի վրա ձևավորվել է անհամաչափ լանջերով ծալքաբեկորավոր, երոզային տեղատարումային, Այրիսար, Սարվարդ հատվածում՝ «ջրջված» ռելիեֆ: Արևելյան լանջերն աստիճանակերպ իջնում են դեպի Որոտանի հովիտ և կտրտված են Շաղատի վտակների հովիտներով: Արևմտյան լանջերը խիստ մասնատված են Նախիջևանի և Երնջակի ու դրանց վտակների խոր, զառիթափ ձորերով, որոնց միջև պահպանված են համեմատաբար ցածրադիր (2200-2400 մ) լեռաճյուղեր:

Լեռնաշղթայի հարավային մասը նորագույն տեկտոնական շարժումների հետևանքով բարձրացած հորստ է՝ կազմված Մեղրու պլուտոնի գրանիտոիդներից: Այստեղ ծալքավորված երկրաբանական նստվածքահրաբխածին շերտախմբի ու խոշոր ներժայթուք զանգվածի վրա ձևավորվել է ծալքաբեկորավոր, երոզային տեղատարումային ռելիեֆ: Հարավային կեսի կենտրոնական հատվածն ունի ալպյան տիպի սրածայր, ատամնավոր գագաթներ (Կապուտջուղ, Միսկատար, Փառական, Նահապետ, Երնջակ և այլն):

Լեռնանցքները (3400-3600 մ բարձրություն) հազվադեպ են, դժվարանցանելի:

Բարձրլեռնային գոտուն բնորոշ են ռելիեֆի ձևասառցադաշտային ձևերը: Մեղրի, Ողջի, Քաջարանց, Գեղի և այլ գետերի ակունքներում կան պլեյստոցենյան

սառցապատումների հետքեր՝ կառեր ու սառցադաշտային հովիտներ, որոնց մի մասը լցվել է ջրով, առաջացել են լճեր (Ղազանի, Կապույտ, Կապուտան, Քաջարանց և այլն): Հանդիպում են ձնաբծեր: Հարավային լանջերը գառիթափ են, ժայռոտ ու մասնատված Արաքսի վտակներով: Կատարային մասում հին սառցադաշտային ձևերի հետ միաժամանակ մեծ չափերի են հասնում սառնամանիքային հողմահարումը, ծանրահակ ու էրոզային երևույթները:

Արևելքում լեռներից ճյուղավորվում են Բարգուշատի լեռնաշղթան ու Մեղրու լեռնաշղթան, հյուսիս-արևմուտքում՝ Վաքի լեռնաշղթան:

Սյունիքի բարձրավանդակն իրենից ներկայացնում է բլրաթմբային սարահարթ, որի միջին բարձրությունը՝ 2800-3200 մ, առավելագույնը՝ 3594մ (Թրասար): Տարածվում է հյուսիս-արևմուտքից հարավ-արևելք, երկարությունը՝ 120 կմ, լայնությունը՝ մինչև 50կմ (հյուսիսում): Մակերևույթին բնորոշ են բազմաթիվ հրաբխային կոները, կենտրոնական մասում են Ծղուկ (3581մ) և Մեծ Իշխանասար (3550մ) հրաբխային զանգվածները: Շատ են քարացրոնները, կան հնագույն սառցապատման հետքեր, փոքր ու փակ գոգավորություններ: Վերջիններից շատերը վերածվել են լճերի՝ Մեծ Փորակ, Փոքր Փորակ, Ալ, Սև և այլն:

Սյունիքի բարձրավանդակում հյուսիսից-արևելքում կարճ, բարձրադիր ու ծալքաբեկորավոր լեռնաճյուղերով միանում է Արցախի լեռնաշղթային:


Հարավ-արևմուտքում ու հարավում լանջերը գառիթափ իջնում են դեպի Միսիանի, Եռաբլրի, Գորիսի, Հագարիի լավային սարավանդները: Բարձրավանդակից սկիզբ են առնում Որոտան, Արփա, Հագարի, Թարթառ գետերը:

Հանքավայրի շրջանի երկրաձևաբանական և լանջերի թեքությունների սխեմատիկ քարտեզները ներկայացված են նկար 7-8-ում:

4.2. Արտածին երկրաբանական երևույթներ, սեյսմիկ բնութագիր

Մուցքի ոսկու հանքավայրի տարածքում արտածին երկրաբանական երևույթների վերաբերյալ տեղեկատվության հիմք է հանդիսանում Հայաստանում սողանքների տեխնիկական տեղեկագիրը (Միջազգային համագործակցության ճապոնական գործակալություն, ՀՀ քաղաքաշինության նախարարություն, 2005): Համաձայն նշված տեղեկագրի, հայցվող տարածքում և հարակից շրջանում հայտնի սողանքային մարմինների տեղադիրքը ներկայացված է նկար 9-ում:

ԵՐԿՐԱԶԵՎԱԲԱՆԱԿԱՆ ՄԽԵՄԱՏԻԿ ՔԱՐՏԵԶ




ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

- 1 - Ներլեռնային գոգահովիտներ՝ միջին բարձրության թեքվածքներով
- 2 - Միջին բարձրության լեռնաշղթաներ /1500-2500մ/ կտրուկ լանջերով և ալիքաձև գագաթներով՝ խորը կտրտված V-ձև ձորերով և հովիտներով
- 3 - Միջին բարձրության լեռնաշղթաներ /մինչև 2500մ/ գոգավոր լանջերով՝ խիտ կտրտված ոչ խորը ձորերով և հովիտներով

Նկար 7.

ԼԱՆՁԵՐԻ ԹԵՔՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԽԵՄԱՏԻԿ ՔԱՐՏԵԶ





ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

- 1 - Մեղմաթեք հարթավայրեր (4-6 աստիճան)
- 2 - Չառիկող լանջեր (15-19 աստիճան)
- 3 - Թեք լանջեր (20-23 աստիճան)
- 4 - Մեղմ կտրուկ լանջեր (24-29 աստիճան)

Նկար 8.

ՍՈՂԱՆՔԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՏԱՐԱԾՄԱՆ
ՄԻԵՄԱՏԻԿ ՔԱՐՏԵԶ



020-0500  Սողանքային մարմիններ,
դրանց համարները

Նկար 9.

Սողանքային մարմինների բնութագրերը ներկայացված են ստորև, աղյուսակ 7-ում:

Աղյուսակ 7.

Սողան- քային մարմնի ձաձկագիրը	Սողանքային մարմնի կոորդինատները և բարձրությունը						Չափերը			
	Latitude N			Longitude E			Բարձրությունը (մ)	լայն. (մ)	երկար. (մ)	մակերես (հա)
	Աստ.	Ըոպե	Վայրկ.	Աստ.	Ըոպե	Վայրկ.				
020-0450	39	33	45	45	54	17	1744	700	550	103
020-0460	39	32	12	45	53	8.7	1941	1000	2000	109
020-0470	39	31	48	45	53	41	1956	1000	2300	144
020-0480	39	31	14	45	53	25	2069	400	850	17
020-0490	39	32	2	45	54	22	1882	10	20	10
020-0500	39	30	1.3	45	53	30	2260	450	1300	31
020-0540	39	33	32	45	55	2.2	1715	350	650	19
020-0550	39	33	16	45	55	11	1754	200	500	9
020-0560	39	32	55	45	55	9.8	1823	250	750	19
020-0570	39	30	26	45	54	32	2069	550	1450	49
020-0580	39	30	4.8	45	55	37	2019	400	950	18

Բուն հայցվող տարածքում, դրա անմիջական հարևանությամբ է գտնվում 020-0570 սողանքային մարմինը, որը դասվել է վտանգավորության III-րդ դասին և համարվել են ցածր-միջին ռիսկային:

Միաժամանակ, «Գեոռեյդ» ՓԲ ընկերությունը դիմել է ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն՝ ներկայացնելով բացահանքի տարածքի կոորդինատները և խնդրելով պարզաբանում նշված տարածքում սողանքային մարմինների առկայության մասին: Ըստ ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության տեղեկատվության՝ բացահանքի հայցվող տարածքում սողանքային մարմիններ չկան:

2021 թվականի սեպտեմբեր-2022 թվականի հունիս ամիսներին բացահանքի հայցվող և հարակից տարածքներում կատարվել են դաշտային դիտարկումներ:

Տարածքում կատարվել են մանրակրկիտ հետազոտություններ, դիտարկվել են հանքավայրի մակերևութային լանջային բնույթի հատվածները՝ ճաքեր, ճեղքեր, մակերևութի ամբողջականության խախտման հետքեր, գառիվայր լանջեր, պոկված և տեղաշարժված հողային զանգվածներ, երիտասարդ ձորակներ, ձորակային էոզոիայի հետքեր:

Դիտարկումների արդյունքներով սողանքային երևույթների մասին վկայող նշաններ տարածքում չեն արձանագրվել:

Հայցվող տարածքից 210-ից 615մ հեռավորության վրա ըստ սողանքների տեխնիկական տեղեկագրի քարտեզագրված են երեք սողանքային մարմիններ՝ 021-0080, 021-0090 և 021-0100:

021-0080 և 021-0090 սողանքային մարմինները դասվել են վտանգավորության III-րդ դասին և համարվել են միջին ռիսկային, 021-0100 մարմինը՝ II-րդ դասին և համարվել են բարձր ռիսկային Իշխանասար բնակավայրի համար:

Ըստ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2020 թվականի դեկտեմբերի 28-ի «Երկրաշարժադիմացկուն շինարարություն. նախագծման նորմեր» N102-Ն հրամանի՝ հայցվող տարածքը գտնվում է 1-ին սեյսմիկ գոտում, որտեղ գրունտի հորիզոնական արագացման մեծությունը կազմում է 300 սմ/վ² կամ 0.3g (նկար 10):

4.3. Կլիմայական պայմաններ


Սուրբի ոսկու հանքավայրի շրջանի կլիման բնութագրվում է որպես չափավոր ցուրտ և ցուրտ (նկար 11): Շրջանում գործում են երկու օդերևութաբանական կայաններ՝ Միսիան (1580մ) և Միսիանի լեռնանցք (2380մ): Հանքավայրի շրջանի կլիման՝ կախված բարձունքային գոտիականությունից, փոփոխվում է բարեխառն տաքից մինչև ցուրտ: Ստորև աղյուսակներ 8-13-ում ներկայացված են շրջանի կլիմայական բնութագրերը:

Աղյուսակ 8.

Օդի ջերմաստիճանը


Դիտակայանը	Ջերմաստիճանը ըստ ամիսների, °C												Տարեկան միջին	Բացարձակ նվազ.	Բացարձակ առավել.
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII			
Միսիանի լեռնանցք	-8.2	-7.5	-4.3	1.3	6.3	9.9	12.7	12.8	9.9	4.7	-1.0	-5.9	2.6	-26	31
Միսիան	-4.5	-3.0	0.9	6.8	11.4	15.0	18.0	17.8	14.0	8.6	2.7	-2.2	7.1	-34	36

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՀԱՎԱՆԱԿԱՆ ՄԵՅՄՄԻԿ ՎՏԱՆԳԻ ԳՈՏԻԱՎՈՐՄԱՆ ՔԱՐՏԵԶ



Նկար 10.

ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ԳՈՏԻՆԵՐԻ ՄԽԵՄԱՏԻԿ ՔԱՐՏԵԶ



ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

- 1 - Բարեխառն, տաք ամառով
- 2 - Չափավոր ցուրտ
- 3 - Ցուրտ

Նկար 11.

Աղյուսակ 9.

Մթնոլորտային տեղումները

Դիտակայանը	Տեղումները ըստ ամիսների, միջին ամսական/առավելագույն օրական մմ												Տարեկան
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	
Միսիանի լեռնանցք	53	64	77	101	102	71	43	26	36	64	56	64	757
	23	37	27	91	50	41	48	34	31	47	41	45	91
Միսիան	18	22	36	57	73	57	27	16	23	37	30	18	414
	26	20	22	37	38	47	54	39	29	35	32	22	54

Աղյուսակ 10.

Ձնածածկույթը

Դիտակայանը	Առավելագույն տասնօրյակային բարձրությունը, սմ	Տարվա մեջ ձնածածկույթով օրերի քանակը	Չյան մեջ ջրի առավելագույն քանակը, մմ
Միսիանի լեռնանցք	36	67	90
Միսիան	214	157	720

Աղյուսակ 11.

Օդի հարաբերական խոնավությունը

Դիտակայանը	Ըստ ամիսների, %%												Տարեկան միջին
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	
Միսիանի լեռնանցք	81	83	83	77	76	77	76	72	71	71	76	81	77
Միսիան	71	71	71	70	71	69	65	65	70	71	73	72	70

Աղյուսակ 12.

Արևափայլը (ըստ Միսիան կայանի)

Բնութագիրը	Ըստ ամիսների												Տարեկան
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	
Արևափայլի տևողությունը	158	157	167	174	237	292	319	303	261	203	160	148	2579
Առանց արևի օրերի թիվը	4	3	3	2	1	0.1	0.2	0.1	0.4	2	3	4	23

Քամիների ուղղությունների կրկնելիությունը (ըստ Միսիան կայանի)

Ամիսներ	Կրկնելիությունը, %								Անհողությունների կրկնելիությունը, %	Միջին ամսական արագությունը, մ/վ	Միջին տարեկան արագությունը, մ/վ	Ուժեղ քամիներով օրերի քանակը, օր
	Միջին արագությունը, մ/վ											
	Ուղղությունները											
	Հս	Հս-Արլ	Արլ	Հվ-Արլ	Հվ	Հվ-Արմ	Արմ	Հս-Արմ				
հունվար	8	1	14	2	2	2	26	45	56	1.9	2.2	2
	3.5	2.6	3.6	2.5	2.5	3.5	3.6	3.9				
ապրիլ	4	2	36	6	2	6	25	19	55	2.0		
	3.4	3.2	4.1	3.7	3.4	4.0	3.6	3.9				
հուլիս	1	1	79	16	0	1	1	1	45	3.1		
	3.1	4.4	5.0	4.5	3.6	3.7	3.3	3.0				
հոկտեմբեր	2	2	53	7	2	6	20	8	65	1.6		
	2.7	2.8	4.2	3.2	2.9	3.9	3.7	3.8				

4.4. Մթնոլորտային օդ

ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից իրականացվում է մթնոլորտային օդի մոնիթորինգ Երևան, Գյումրի, Վանաձոր, Ալավերդի, Հրազդան, Արարատ, Ծաղկաձոր, Չարենցավան, Կապան և Քաջարան քաղաքներում: Ընդհանուր առմամբ վերը թվարկված բնակավայրերում գործում է 15 անշարժ՝ ակտիվ նմուշառման դիտակայան, և 214 շարժական՝ պասիվ նմուշառման դիտակետ: Մուցքի ոսկու հանքավայրի և հարակից շրջանում պետական մոնիթորինգի շրջանակներում մթնոլորտային օդի աղտոտվածության դիտարկումներ չեն կատարվում:

Հանքավայրի շրջանում գտնվող Իշխանասար, Սպանդարյան, Սառնակունք, Շաքի, Անգեղակոթ և Շաղաթ գյուղի բնակիչները զբաղվում են հիմնականում կերային, բանջարաբոստանային կուլտուրաների և կարտոֆիլի մշակությամբ, ինչպես նաև անասնապահությամբ, թռչնաբուծությամբ և մեղվաբուծությամբ:

Տարածքում խոշոր արդյունաբերական ձեռնարկություններ չկան: Ոչ մետաղական օգտակար հանածոների արդյունահանման արտադրական գործունեություն իրականացնող կազմակերպություններ (բացահանքեր, քարի մշակման արտադրամասեր), սննդամթերքի արտադրության և սպասարկման ոլորտի ձեռնարկություններ կան Միսիան, Անգեղակոթ և Շաղատ բնակավայրերում՝ հայցվող տարածքից 2-ից 8կմ հեռավորության վրա:

ՇՄԱԳ հաշվետվության կազմման ընթացքում, 2022 թվականի հունիսի 6-7-ին հանքավայրի տարածքում 24 ժամ տևողությամբ կատարվել են մթնոլորտային օդի աղտոտվածության դիտարկումներ: Արձանագրվել են հետևյալ ցուցանիշները. փոշի՝ 0.22մգ/մ³, ծծմբի երկօքսիդ՝ 0.023մգ/մ³, ազոտի երկօքսիդ՝ 0.0081մգ/մ³ և ածխածնի օքսիդ՝ 0.402մգ/մ³:

Որպես արտանետումների հաշվարկի և գնահատման հիմք ընդունվել է ՀՀ կառավարության 2006 թվականի փետրվարի 2-ի N 160-Ն որոշմամբ հաստատված աղտոտիչների սահմանային թույլատրելի կոնցենտրացիաները:

Մթնոլորտային օդի պահպանության միջոցառումների նախագծումը կատարվելու է հաշվի առնելով ՀՀ կառավարության 2020 թվականի հունվարի 23-ի թիվ 62-Ն որոշման և շրջակա միջավայրի նախարարի 2020 թվականի փետրվարի 18-ի թիվ 64-Լ հրամանի պահանջները:

4.5. Ջրային ռեսուրսներ

Շրջանի ջրագրական ցանցը ներկայացված է Որոտան գետի ավազանով: Որոտան գետը Ջանգեզուրի տարածքում Արաքսի ամենախոշոր վտակն է: Այն սկիզբ է առնում Սյունիքի Բարձրավանդակի հյուսիս-արևմտյան և Ջանգեզուրի լեռնաշղթայի արևելյան լանջերի փոքր լճերից և աղբյուրներից ու ՀՀ սահմաններից դուրս թափվում Արաքս գետ: Գետի ընդհանուր երկարությունը 178 կմ (ՀՀ սահմաններում՝ 111 կմ) է, ջրհավաք ավազանի ընդհանուր մակերեսը՝ 5650կմ², որից 2596.81 կմ²՝ ՀՀ տարածքում:

Որոտանի գետավազանի աջափնյա հատվածն ավելի խիտ է, քան ձախափնյան՝ պայմանավորված Սյունիքի հրաբխային լեռնավահանի հրաբխային ապարներով և ինֆիլտրացիոն մեծ գործակցով:

Գետի ընդհանուր ձևաչափական տվյալները ներկայացված են աղյուսակ 14-ում:

Աղյուսակ 14.

Ակունքի նիշը, մ	Գետաբերանի նիշը, մ	Երկարությունը, կմ	Միջին թեքությունը, ‰	Ջրհավաք ավազանի մակերեսը, կմ ²
3045	720	111	21	2596.9

Հիդրոլոգիական դիտակետերի հիմնական ձևաչափական բնութագրիչները ներկայացված են աղյուսակ 15-ում: Գետային հոսքը տարվա ընթացքում անհավասարաչափ է բաշխված: Ջրային ռեժիմը բնորոշվում է զարնանային հալոցքա-անձրևային վարարումներով: Հոսքի կեսից ավելին անցնում է զարնան ժամանակահատվածում (մարտ-հունիս ամիսներին), իսկ ամենաքիչը՝ ձմռան ամիսներին (աղյուսակ 16):

Աղյուսակ 15.

Գետ-դիտակետ	Ջրհավաք ավազանի մակերեսը, կմ ²	Միջին բարձրությունը, մ	Միջին թեքությունը, ‰	Անտառածածկույթը, %
Որոտան-Գորայք	268	2710	197	0
Որոտան-Որոտան	1550	2370	164	3
Որոտան-Տաթևի ՀԷԿ	1988	2280	152	4

Աղյուսակ 16.

Գետ-դիտակետ	Ըստ ամիսների											
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII
Որոտան-Գորայք	2.28	2.28	2.46	5.30	9.36	9.02	4.30	2.80	2.54	2.33	2.28	2.27
Որոտան-Որոտան	3.97	4.48	4.90	7.70	6.62	5.49	5.04	4.98	5.24	4.89	4.43	4.12
Որոտան-Տաթևի ՀԷԿ	20.3	18.8	17.9	26.0	23.6	23.7	16.7	17.9	17.7	18.3	18.2	18.8

Ամառ-աշնանային և ձմեռային սակավաջուր փուլերի ընթացքում գետերով անցնում է տարեկան հոսքի 15-40%-ը (աղյուսակ 17):


Գետ- դիտակետ	Ավազանի մակերեսը, կմ ²	Գետային հոսքի					
		մոդուլը լ/վրկ կմ ²	միջին տարեկան ելքը, մ ³ /վրկ	հոսքի ծավալը, մլն. մ ³	սեզոնային բաշխումը, %		
					III-VI	VII-X	XI-II
Որոտան- Գորայք	268	14.7	3.94	124	56	28	16
Որոտան- Որոտան	1550	3.12	4.84	153	61	27	12
Որոտան- Տաթևի ՀԷԿ	1988	9.91	19.8	625	60	27	13

«Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից Որոտան գետի ջրի որակի դիտարկումներ իրականացվում են գետի վերին հոսանքում, Գորայք գյուղից վերև, Միսիան քաղաքից վերև և ներքև, Տաթև գյուղի ՀԷԿ-ից ներքև (նկար 12):



Նկար 12.

Համաձայն ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի հրապարակված տվյալների՝ (2021 թվականի 4-րդ եռամսյակում կատարված դիտարկումների արդյունքներով)՝ Որոտան գետի ջրի որակը Գորայք գյուղից վերև հատվածում հոկտեմբերին գնահատվել է «լավ» (2-րդ դաս), նոյեմբերին՝ «անբավարար» (4-րդ դաս), Սիսիան քաղաքից վերև ջրի որակը հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), Սիսիան քաղաքից ներքև հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս): Ապրիլ ամսին կատարված դիտարկումների արդյունքներով ջրի որակի վերաբերյալ տվյալները ներկայացված են նկար 13-ում:



Նկար 13.

Բուն հանքավայրի շրջանում գետային ցանցը ներկայացված է Շաղատ գետով և դրա Դմբդմբան (միջին տարեկան դեբիտը՝ 10-12 լ/վրկ) և Ժամանակավոր հոսք ունեցող Անանուն վտակներով:

Բացահանքի հարևանությամբ հոսող Անանուն վտակից 2022 թվականի հունիսի վերջվել է նմուշ, որի վերլուծության արդյունքները հանդիսանալու են ելակետային տվյալ հանքավայրի շահագործման ընթացքում կատարվելիք մոնիթորինգի համար: Նմուշի փորձարկման արդյունքները ներկայացված են աղյուսակ 18-ում:

Աղյուսակ 18.

Հ/Հ	Չափված ցուցանիշ	Չափման միավոր	Չափված արժեք	Կիրառված ստանդարտ մեթոդ
1	2	3	4	5
1	Գույն	աստիճան	20	ISO 7887
2	Հոտ	բալ	0	РД 52.24.496-2005
3	Թափանցելիություն	սմ	31	ISO 7027-2
4	Կախության չոր նյութեր	մգ/լ	14.1	ISO 11923
5	Կոշտություն	մգ/լ	2.30	Հաշվարկային
6	Հիմնայնություն	մգ/լ	125	Հաշվարկային
7	Ջրածնային ցուցիչ	-	7.21	ISO 10523
8	Էլեկտրահաղորդականություն	մկՍմ/սմ	266	ISO 7888
9	Ընդհանուր լուծված աղեր	մգ/լ	173	
10	Թթվածնի քիմիական պահանջարկ	մգՕ/լ	15	ISO 6060
11	Թթվածնի հնգօրյա կենսաքիմիական պահանջարկ	մգՕ2/լ	1.19	ISO 5815-1
12	Սուլֆատ իոն	մգ/լ	11.54	ISO 10304-1
13	Քլորիդ իոն	մգ/լ	5.32	
14	Նիտրատ իոն	մգ/լ	3.58	
15	Նիտրիտ իոն	մգ/լ	0.0527	ISO 6777
16	Ամոնիում իոն	մգ/լ	0.135	ISO 7150-1
17	Ֆոսֆատ իոն	մգ/լ	0.0883	ISO 6878
18	Սիլիկատ իոն	մգ/լ	12.63	ISO 16264
19	Հիդրոկարբոնատ իոն	մգ/լ	128.14	ISO 9963-1
20	Կարբոնատ իոն	մգ/լ	12.00	ISO 9963-2
21	Ընդհանուր անօրգանական ազոտ	մգN/լ	0.929	Հաշվարկային

1	2	3	4	5
22	Լիթիում	մգ/լ	0.00391	ISO 17294-2
23	Բերիլիում	մգ/լ	<0.0001	
24	Բոր	մգ/լ	0.0655	
25	Նատրիում	մգ/լ	7.16	
26	Սազնեզիում	մգ/լ	8.37	
27	Ալյումին	մգ/լ	0.149	
28	Ընդհանուր ֆոսֆոր	մգ/լ	0.0884	
29	Կալիում	մգ/լ	0.974	
30	Կալցիում	մգ/լ	32.11	
31	Տիտան	մգ/լ	0.0105	
32	Վանադիում	մգ/լ	0.00783	
33	Քրոմ	մգ/լ	0.00125	
34	Երկաթ	մգ/լ	0.406	
35	Մանգան	մգ/լ	0.0530	
36	Կոբալտ	մգ/լ	0.000262	
37	Նիկել	մգ/լ	0.00227	
38	Պղինձ	մգ/լ	0.00605	
39	Ցինկ	մգ/լ	0.00442	
40	Արսեն	մգ/լ	0.00290	
41	Սելեն	մգ/լ	<0.0001	
42	Ստրոնցիում	մգ/լ	0.191	
43	Մոլիբդեն	մգ/լ	0.000962	
44	Կադմիում	մգ/լ	<0.0001	
45	Անագ	մգ/լ	<0.001	
46	Ծարիր	մգ/լ	0.000175	
47	Բարիում	մգ/լ	0.0235	
48	Կապար	մգ/լ	0.000399	

Մուցքի ոսկու հանքավայրի հետախուզման ժամանակ անցկացած մինչև 300-320մ խորությամբ հորատանցքերում, ինչպես նաև այս նույն տարածքում նախկինում անցած երեք բովանգքներից մեկում (N^o 3) ջրի առկայություն չի արձանագրվել, իսկ մյուս երկու բովանգքներից մարտ-հունիս ամիսներին փաստվել է ջրի աննշան

արտահոսք (0.3-0.5լ/վրկ): Նշված ջրհոսքը հունիս-հոկտեմբեր ամիսներին ամբողջությամբ վերանում է:

4.6. Հողեր

Հայցվող տարածքում հողային ծածկույթը ներկայացված է մուգ-շագանակագույն-շագանակագույն քարքարոտ հողերով և սևահողերով (նկար 14):

Սևահողերի հողային լուծույթի ռեակցիան գլխավորապես չեզոք է (pH-ը տատանվում է 7-ի սահմաններում): Կլանող համալիրը հագեցված է հիմնականում Ca-ով և Mg-ով: Բնորոշ է կնձկային ստրուկտուրա: Հարուստ են ընդհանուր ազոտով (0.15-0.35%), ֆոսֆորական թթվով (0.15-0.26%) և կալիումով (1-2%):

Աղյուսակ 19.


Հողատիպը և ենթատիպը	Հորիզոնները և խորությունը, սմ	Տոկոսներով			Կլանված կատիոնների գումարը, մ/էկվ 100գ հողում
		հումուս	ընդհանուր		
			ազոտ	CaCO ₃	
Լվացված սևահողեր	A ₁ 0-23	6.67	0.34	չկա	32.2
	A ₂ 23-43	6.59	0.32	չկա	33.4
	B ₁ 43-68	5.32	0.31	չկա	37.3
	B ₂ 68-83	1.64	0.20	չկա	28.5
	C 83-100	0.90	0.19	40.3	-

Նախալեռնային գոտում տիպիկ չոր տափաստանային բուսականության տակ, հրաբխային ապարների հողմահարված նյութերի, ինչպես նաև տեղակուտակ, ողողաբերուկ և հեղեղաբերուկ գոյացումների վրա տարածված են մուգ շագանակագույն, մեծ մասամբ քարքարոտ, էրոզացված հողերը:

Շագանակագույն-մուգ-շագանակագույն հողերի մակերեսային քարքարոտությունը կազմում է 70.3%, որից 18.8%-ը՝ թույլ քարքարոտ, 17.0%՝ միջակ քարքարոտ, 34.5%-ը՝ ուժեղ քարքարոտ: Ըստ մեխանիկական կազմի այս հողերը դասվում են միջակ և ծանր կավավազային տարատեսակների շարքին:

Կախված ռելիեֆի պայմաններից և էոզոայի ենթարկվածության աստիճանից՝ հանդիպում են ինչպես ավելի թեթև, այնպես էլ ծանր մեխանիկական կազմով հողեր: Հողերի կլանման տարողությունը համեմատաբար ցածր է, որը պայմանավորված է հումուսի սակավ պարունակությամբ և թեթև կավավազային մեխանիկական կազմով:

ՀԱՅՅՎՈՂ ՏԱՐԱԾՔԻ ՀՈՂԵՐԻ ԲՆԱԿԱՆ ՏԻՊԵՐԻ
ՍԽԵՄԱՏԻԿ ՔԱՐՏԵԶ



ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

- 1 - Մուգ-շագանակագույն քարքարոտ փոքր հզորության կավավազային թույլ-միջին հողմահարված հողեր
- 2 - Շագանակագույն քարքարոտ փոքր հզորության կավավազային թույլ հողմահարված հողեր
- 3 - Սևահողեր լվացված ալրակարբոնատային թույլ հումուսային փոքր հզորության կավավազային թույլ-միջին հողմահարված
- 4 - Սևահողեր լվացված ալրակարբոնատային թույլ հումուսացված փոքր հզորության կավավազային

Նկար 14.

Այս ենթատիպի հողերը բնութագրվում են հետևյալ քիմիական և ջրաֆիզիկական հատկություններով:

Աղյուսակ 20.

Խորությունը, սմ	Տոկոսներով			Կլանված կատիոնների գումարը, մ/էկվ 100գ հողում	pH-ը ջրային քաշվածքում
	հումուս	CO ₂	գիպս SO ₄		
0-15	3.2	1.4	0.0	33.1	7.9
15-34	2.1	7.3	0.0	31.5	8.4
34-73	1.6	16.5	0.1	30.1	8.3
73-105	1.0	15.7	0.1	29.7	8.3
105-155	0.8	17.7	0.1	25.8	8.4

Հողաշերտի հզորությունը հանքավայրի և լցակույտերի հայցվող տարածքում տատանվում է 10-20սմ-ի սահմաններում, կազմելով միջինը մոտ 15սմ:

2022 թվականի հունիս ամսին կատարվել է հողերի նմուշառում 2 կետից, որից 1-ը՝ բացահանքի նախատեսվող տարածքի շագանակագույն հողերում, 1-ը՝ լցակույտի տարածքի սևահողերում: Հետազոտությունների արյունքները ներկայացված են աղյուսակ 21-ում:

Աղյուսակ 21.

h.h.	Չափված ցուցանիշ	Չափման միավոր	Չափված արժեք		Կիրառված ստանդարտ մեթոդ
			բացահանք	լցակույտ	
1	Ջրածնային ցուցիչ(pH)	-	7.2	7.8	ISO 10390:2021
2	Էլեկտրական հաղորդականություն	մկՍմ/սմ	0.242	0.204	ISO 11265:1994
3	Աղայնություն	գ/կգ	0.110	0.120	ISO 11465:1993
4	Սուլֆատ իոն	մգ/կգ	0.743	0.882	ISO 10304-1
5	Քլորիդ իոն	մգ/կգ	0.966	0.988	
6	Նիտրատ իոն	մգ/կգ	0.0727	0.260	
7	Ալյումին	մգ/կգ	48024	45592	Ռենտգենյան ֆլուորեսցենտային մեթոդ
8	Սիլիցիում	մգ/կգ	116297	75446	
9	Ֆոսֆոր	մգ/կգ	<50	1461	
10	Քլոր	մգ/կգ	481	<50	
11	Կալիում	մգ/կգ	6332	2844	
12	Կալացիում	մգ/կգ	15467	54922	
13	Տիտան	մգ/կգ	4163	2850	

1	2	3	4	5		
14	Վանաղիում	մգ/կգ	317	330	Ռենտգենյան ֆլուորեսցենսային մեթոդ	
15	Քրոմ	մգ/կգ	66	29		
16	Մանգան	մգ/կգ	1327	2559		
17	Երկաթ	մգ/կգ	52466	60662		
18	Կոբալտ	մգ/կգ	<5	<5		
19	Նիկել	մգ/կգ	71	48		
20	Պղինձ	մգ/կգ	90	134		
21	Ցինկ	մգ/կգ	166	128		
22	Արսեն	մգ/կգ	14	34		
23	Սելեն	մգ/կգ	<5	<5		
24	Ռուբիդիում	մգ/կգ	39	12		
25	Ստրոնցիում	մգ/կգ	211	154		
26	Իտրիում	մգ/կգ	25	27		
27	Ցիրկոնիում	մգ/կգ	108	37		
28	Նիոբիում	մգ/կգ	6	<5		
29	Մոլիբդեն	մգ/կգ	<5	<5		
30	Արծաթ	մգ/կգ	<5	<5		
31	Կադմիում	մգ/կգ	<5	<5		
32	Անագ	մգ/կգ	<5	<5		
33	Ծարիր	մգ/կգ	<5	<5		
34	Վոլֆրամ	մգ/կգ	<5	<5		
35	Մնդիկ	մգ/կգ	<5	<5		
36	Կապար	մգ/կգ	154	38		
37	Բիսմութ	մգ/կգ	<5	<5		
38	Թորիում	մգ/կգ	<5	<5		
39	Ուրան	մգ/կգ	<5	<5		
40	Թեթև տարրեր (LE)	մգ/կգ	753090	752187		
41	Հողատեսք	–	Ավագոտ կավահող	Կավային ավազ		ISO 11277

4.7. Բուսական աշխարհ

Մուցքի ոսկու հանքավայրի շրջանը բուսաաշխարհագրական տեսակետից պատկանում է Բորեալ ֆլորիստիկ ենթաթագավորության Ցիրկումբորեալ գավառի Կովկասյան ենթագավառի Զանգեզուրի ֆլորիստիկ շրջանին: Տարածքի բուսականությունն ունի արտահայտված քսերո-մեզոֆիլ, մեզո-քսերոֆիլ և մեզոֆիլ

բնույթ՝ յուրահատուկ են տափաստանները, մարգագետնատափաստանները, մարգագետինները, ինչպես նաև գետամերձ բուսականությունը (լուսանկարներ 1-2): Տարածքում տեղ-տեղ արտահայտված է անտառային բուսականությունը (նկար 15):

Հանքավայրի տարածքում դիտարկվել են հետևյալ բուսատեսակները. *Falcaria vulgaris* Bernh. - Սիբեի սովորական, *Achillea millefolium* L. - Հազարատերև սովորական, *Artemisia absinthium* L. - Օշինդր դառը, *Helichrysum graveolens* (Bieb.) Sweet - Անթառամ բուրավետ, *Tanacetum chiliophyllum* (Fisch. et Mey. ex DC.) Sch. Bip.- Լվածադիկ հազարատերև, *Alyssum persicum* Boiss. - Վառվռուկ պարսկական, *Carex supina* Willd. ex Wahlenb. - Բոշխ կարճահասակ, *Scabiosa bipinnata* C. Koch - Քոսքունկ կրկնափետրաձև, *Cephalaria gigantea* (Ledeb.) Bobr. - Զիվան հսկայական, *Astragalus incertus* Ledeb. - Գազ անորոշ, *Hypericum perforatum* L. - Սրոհունդ խոցված, *Juncus filiformis* L. - Կնյուն թելանման, *Nepeta grandiflora* Bieb. - Կատվադաղձ խոշորածաղիկ, *Thymus kotschyanus* Boiss. et Hohen. - Ուրց Կոչիի, *Bromus squarrosus* L. - Ցորնուկ չոված, *Dactylis glomerata* L. - Ոզնախոտ հավաքված, *Festuca valesiaca* Gaudin - Շյուղախոտ վալլիսյան, *Hordeum violaceum* Boiss. et Huet - Գարի մանուշակագույն, *Koeleria albobovii* Domin subsp. *albobovii* – Բարակոսնուկ, *Phleum nodosum* L. – Սիգախոտ, *Stipa pennata* L. - Փետրախոտ փետրավոր, *Crataegus orientalis* Pall. ex Bieb. - Սզնի արևելյան, *Spiraea crenata* L. - Ասպիրակ աղեղնեզր, *Urtica dioica* L. - Եղինջ երկտուն, *Rumex acetoselloides* Bal. – ավելուկ ավելուկանման, *Poa angustifolia* L. – դաշտավլուկ նեղատերև, *Origanum vulgare* L. – խնկածաղիկ սովորական, *Teucrium orientale* L – լերդախոտ արևելյան:

Դմբղմբան և Անանուն գետակների ափերի երկայնքով աճում են *Crataegus orientalis* Pall. ex Bieb. - Սզնի արևելյան, *Salix triandra* L. - Ուռենի եռառէջ, *Rosa spinosissima* L. - Մասրենի առատափուշ:

Հանքավայրի հյուսիսային եզրագծից մոտ 1.2կմ հեռավորության վրա, Մուցք բնակավայրից հյուսիս-հյուսիս-արևելք գտնվում են Սիսիանի անտառոտնտեսության Շաղատի անտառապետության հողակտորները (նկար 16):

«Սիսիանի անտառոտնտեսություն» մասնաճյուղի կազմում ընդգրկված են երկու՝ Շաղատի՝ 2817.0հա և Սիսիանի՝ 3129.0հա մակերեսներով անտառապետությունները¹:

¹ <http://env.am/storage/files/sisian-hayt-lramshak.pdf>



Լուսանկար 1. Մուցքի ոսկու հանքավայրի տարածքի համայնապատկերը



Լուսանկար 2. Նախատեսվող լցանյութի և արտադրական հրապարակի տարածքի համայնապատկերը



Միբեխ սովորական



Միգախոր



Եղինջ երկտուն



Լերդախոտ արևելյան



Գազ անորոշ



Ֆորնուկ չոված



Ասպիրակ աղեղնեզր



Գարի մանուշակագույն




Սրոհունդ խոցված



Մասրենի առատափուլ


ԲՈՒՍԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԻՊԵՐԻ ՍԽԵՄԱՏԻԿ ՔԱՐՏԵԶ



ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

- 1 - Ջրաճահճային բուսականություն
- 2 - Տափաստանային հացազգային, տարախոտա-հացազգային բուսականություն
- 3 - Ենթալայան մարգագետնային տարախոտային բուսականություն
- 4 - Անտառածածկ տարածքներ

Նկար 15.



Նկար 16.

«Միսիանի անտառտնտեսություն» մասնաճյուղի ընդհանուր տարածքը կազմում է 5946.0 հա, որից Շաղատի անտառպետությունը՝ 2817.0հա: Անտառտնտեսությունում հիմնական անտառկազմող տեսակներն են խոշորատեղ կաղնին, որի գերակշռությամբ ծառուտները զբաղեցնում են 1636.4 հա՝ 74740.0մ³ ընդհանուր պաշարով, կամ անտառածածկ մակերեսի 78,4%-ը և ընդհանուր պաշարի 80.3%-ը: Սոճու գերակշռությամբ ծառուտները զբաղեցնում են 115.8 հա, ընդհանուր պաշարը կազմում է 7810 մ³ (անտառածածկի 5.6%-ը և պաշարի 8.4%-ը): Գիհուտները կազմում է 119.0հա, 9800 խմ (անտառածածկ տարածքի 5.7%-ը և պաշարի 1.0%-ը) և մնացած տեսակները միասին կազմում են անտառածածկի 10.3%-ը և ընդհանուր պաշարի 1.3%-ը: Շաղատի անտառպետությունում՝ միջին տարիքը 57, միջին բունիտեսային դասը՝ 4.2, միջին լրիվությունը՝ 0.55, 1 հեկտարի միջին պաշարը՝ 47մ³, միջին տարեկան աճը՝ 0.81մ³: Միջին կազմը՝ 5.2 կաղնի, 1.5 գիհի, 1.3 բոխի, 0.7 սոճի, 0.4 հացենի, 0.4 ուռի, 0.2 թխկի, 0.1 բարդի, 0.1 խնձորենի և 0.1 թեղի:

Հանքավայրի տարածքում ՀՀ բույսերի կարմիր գրքում ընդգրկված տեսակների առկայությունը պարզելու նպատակով կատարվել է ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի N72-Ն որոշման տվյալների վերլուծություն:

Համաձայն ՀՀ բույսերի կարմիր գրքի տվյալների Մուցքի ոսկու հանքավայրի շրջանում, հարակից տարածքներում հայտնի են մի շարք բուսատեսակներ, ինչի նկարագիրը ներկայացված է ստորև աղյուսակ 22-ում:

Աղյուսակ 22.

Բուսատեսակը	Կարգավիճակը	Տարածումը	Առանձնահատկությունները	Պահպանության միջոցառումները
1	2	3	4	5
Վահանակերպ տափակապատիճակ Peltariopsis planisiliqua (Boiss.) N. Busch	Վտանգված	Անգեղակոթի շրջակայք, հանքավայրից մոտ 5կմ հեռավ. վրա	Միջին լեռնային գոտի, ծ.մ. 1300-1900մ բարձր. վրա, լեռնալանջերի քարքարոտ տեղերում, չոր նոսրանտառներում	Չի իրականացվում
Գազ Կիրպիչնիկովի Astragalus kirpicznikovii Grossh.	Վտանգված	Անգեղակոթի շրջակայք, հանքավայրից մոտ 5կմ հեռավ. վրա	Ստորին և միջին լեռնային գոտի, ծ.մ. 650-1850մ բարձր. վրա, չոր քարքարոտ լանջերին	Չի իրականացվում
Գազ բեկված Astragalus refractus C. A. Mey.	Կրիտիկական վիճակում գտնվող	Աշտավան գյուղի շրջակայք, հանքավայրից մոտ 10կմ հեռավ. վրա	Միջին լեռնային գոտի, ծ.մ. 1500-1700մ բարձ. վրա, չոր մարգագետիններ, մարգագետնատափաստաններ	Չի իրականացվում

Հանքավայրի տարածքը ուսումնասիրվել է երթուղիներով՝ ՀՀ բույսերի կարմիր գրքում գրանցված տեսակներ հայտնաբերելու նպատակով:

Դիտարկումների արդյունքներով հանքավայրի, ենթակառուցվածքների տեղադրման համար հայցվող տարածքներում վահանակերպ տափակապատիճակ, գազ Կիրպիչնիկովի և գազ բեկված տեսակները չեն արձանագրվել:

4.8. Կենդանական աշխարհ

Տարածքի կենդանական աշխարհի ուսումնասիրություններ կատարվել են երկրաբանահետախուզական աշխատանքների ընթացքում՝ 2012-2017թթ.-ին, ինչպես նաև արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի և ՇՄԱԳ հաշվետվության մշակման ընթացքում՝ 2021 թվականի հուլիս -2022 թվականի հունիս ժամանակաշրջանում:

Դիտարկված անողնաշարավորների վերաբերյալ տվյալները ներկայացված են աղյուսակ 23-ում:

Աղյուսակ 23.

Կարգ	Ընտանիք	Տեսակ
1	2	3
Բզեզներ	Լողաբզեզներ	Platambus lunulatus
	Լեշակերներ	Nicrophorus vespilloides
	Գնայուկ բզեզներ	Elaphropus haemorrhoidalis
		Bembidion tibiale
		Trechus quadristriatus
	Թերթիկաբեղավորներ	Caccobius schreberi
		Netocia cuprina
Բզեզներ	Ոսկեբզեզներ	Anthaxia nitidula
	Մանրաբզեզներ	Malachius spinipennis
	Թարախահաններ	Mylabris variabilis
Պոմպային կայանքի արտադրողականությունը որոշվում է

$$Q_{պ} = \frac{94,5 \times 24}{20} = 113,4 \text{ մ}^3/\text{ժամ}$$

Հանքաստիճանի հատակում ջրհավաքի տարողությունը

$$V = Q_{պ} \times 2 = 113.4 \times 2 = 227 \text{մ}^3, \text{ իսկ չափերը մոտ } L \times B \times h = 8 \times 7.5 \times 4 \text{մ}$$

Հավաքված մթնոլորտային տեղումները կուղղվեն դեպի կուտակիչ ավազան, որտեղ հավաքվելու են նաև Դմբդմբան գետի ջրերը:

Ջրհեռացման համար ընդունվում է 2 հատ (1-ը պահուստային) ԱԿՀС 180-128 պոմպային կայանքներ կամ դրանց համարժեք այլ պոմպային կայանքներ:

6.3. Ազդեցություն հողային ռեսուրսների վրա

Հողային ռեսուրսների վրա դրսևորվում է երկու տեսակի ազդեցություն.

- ուղղակի ազդեցություն, որի հետևանքով ձևավորվում է տեխնածին լանդշաֆտ՝ բացահանք, մակաբացման ապարների լցակույտեր, լեռնային առուներ, արտադրական հրապարակ,

- անուղղակի ազդեցություն՝ մթնոլորտ արտանետվող փոշու և աղտոտիչ նյութերի նստեցում հողի մակերևույթին:

Օգտակար հանածոյի արդյունահանման արդյունքում ձևավորվելու են հետևյալ խախտված տարածքներ՝ բացահանք 61.8հա, հյուսիսային լցակույտ 14.9հա, հարավային լցակույտ 30.6հա, արդյունաբերական հրապարակ 0.065հա:

Շինարարության փուլում՝ մակաբացման աշխատանքների ընթացքում, հեռացվելու են 2616.813հազ.մ³ այլուվիալ առաջացումներ, որից շուրջ 161.0հազ.մ³ հողաբուսական շերտ (լցակույտերի տարածքի սևահողեր, բացահանքի շագանակագույն հողեր):

6.4. Ազդեցություն կենսաբազմազանության վրա

Հանքավայրի և լցակայանների ստեղծման նպատակով հայցվող տարածքներում դիտարկվել են Հայաստանի համար «Ֆոնային» հանդիսացող, լայն տարածված տափաստանային, մարգագետնատափաստանային բուսատեսակներ: Հանքավայրի տարածքը ներկայացված է գյուղատնտեսական նպատակային նշանակության հողերով, որոնք երկար տարիներ օգտագործվել են Մուցքի բնակիչների կողմից որպես արոտավայր, խոտհարք:

Անտառային բուսականություն հայցվող տարածքում չկա: «Միսիանի անտառտնտեսություն» մասնաճյուղի հողերը գտնվում են հայցվող տարածքից 1.2-1.5կմ հեռավորությունների վրա:

Հայցվող տարածքում չեն նշվել խոշոր կաթնասունների բներ, որջեր, ապրելավայրեր: Կենդանական աշխարհի վրա հնարավոր բացասական ազդեցությունները հիմնականում արտադրական աղմուկն է և թրթռումները, հողաբուսական շերտի և բուսածածկի խախտումը, ինչպես նաև բնական ապրելավայրերի/լանդշաֆտների փոփոխությունը:

Լեռնահատկացման ակտով սահմանազատված տարածքում ՀՀ բույսերի և կենդանիների կարմիր գրքերում գրանցված բուսական և կենդանական տեսակներ չեն դիտարկվել:

«Զանգեզուր» պետական արգելավայրը գտնվում է հանքավայրի տարածքից մոտ 24.4կմ հարավ-հարավ-արևելք: Բնության հատուկ պահպանվող տարածք հանդիսացող բնության հուշարձաններից ամենամոտը՝ գտնվում «Անտակ լիճ» բնության հուշարձանը գտնվում է հանքավայրից 3.15 կմ հեռավորության վրա:

6.5. Ընդերքօգտագործման թափոններ

«Գեոռեյդ» ՓԲ ընկերության կողմից Մուցքի ոսկու հանքավայրի շահագործման արդյունքում առաջանալու են շուրջ 39155291մ³ ընդհանուր քանակով մակաբացման ապարներ, որոնք ներկայացված են 2616813մ³ քանակով այլուվիալ առաջացումներից (որից մոտ 161.0հազ.մ³ հողաբուսական շերտ) և 36538478մ³ քանակով հանքապարփակող ապարներից:

161.0հազ.մ³ հողաբուսական շերտը թափոն չի հանդիսանում:

Հանքապարփակող ապարները ուսումնասիրվել են 25100-2020 ԳՈՍՍ պահանջներին համապատասխան: Ըստ ծագման՝ հանքապարփակող ապարները

գնահատվել են որպես բյուրեղային, հրաբխային ծագման ժայռային գրունտներ: Ըստ ինժեներատեխնիկական դասակարգման դրանք պատկանում են տեղափոխված լիթքային գրունտների խմբին:

Ուսումնասիրությունների արդյունքներով հանքապարփակող ապարները չեն հանդիսանում ընդերքօգտագործման թափոններ, այլ վերագրվել են միջին ամրության ժայռային գրունտների դասին, որոնք ըստ ներկայացված շահագործման նախագծի, հանդիսանալու են պատվար պահեստավորվելիք պոչերի համար:

Որպես ընդերքօգտագործման թափոն սույն նախատեսվող գործունեության շրջանակներում դիտարկվում են 2455813մ³ այլուվալ առաջացումները:

Համաձայն ՀՀ բնապահպանության նախարարի 2006 թվականի հոկտեմբերի 26-ի N342-Ն և 2015 թվականի օգոստոսի 20-ի N244-Ն հրամանների՝ բաց եղանակով օգտակար հանածոների արդյունահանումից առաջացած փխրուն մակաբացման ապարները հաշվառվել են 34000120 01 99 5 ծածկագրով, իսկ ժայռային մակաբացման ապարները՝ 34000110 01 99 5 ծածկագրով:

Դրանք դասվել են վտանգավորության 5-րդ դասին, այսինքն՝ ոչ վտանգավոր ընդերքօգտագործման թափոններ են:

Հանքաքարի արդյունահանման տեխնոլոգիական գործընթացի հետ կապված ձևավորվում են մի շարք արտադրական թափոններ, որոնց բնութագիրը ներկայացված է աղյուսակ 33-ում:

Աղյուսակ 33.

Հ/Հ	Թափոնի անվանում	Ծածկագիր	Քանակ	Քիմիական կազմ
1	2	3	4	5
1.	Բանեցված կապարե կուտակիչներ և խոտան	92110100 13 01 2	Յհատ/տարի	կապարե թիթեղներ 70-75%, պլաստմասե իրան 10-13%, էլեկտրոլիտ 15-20%
2.	Բանեցված կոմպրեսորային յուղեր	54100211 02 03 3	20լ/տարի	յուղ 94.5%, մեխանիկական խառնուրդներ 2.5%, ջուր 3%

1	2	3	4	5
---	---	---	---	---

3.	Բանեցված տրանսմիսիոն յուղեր	54100206 02 03 3	50լ/տարի	յուղ 97.2%, մեխանիկական խառնուրդներ 2.8%
4.	Հալոցեն չպարունակող բանեցված հիդրավլիկ յուղեր	54100213 02 03 3	45լ/տարի	յուղ 95.5%, մեխանիկական խառնուրդներ 2%, ջուր 2.5%
5.	Բանեցված դիզելային յուղեր	54100203 02 03 3	60լ/տարի	յուղ 95.0%, մեխանիկական խառնուրդներ 1.8%, ջուր 3.2%
6.	Բանեցված շարժիչների յուղերի թափոններ	54100201 02 03 3	55լ/տարի	յուղ 94.6%, մեխանիկական խառնուրդներ 2.1%, ջուր 3.2%
7.	Բանեցված օդաճնշիչ դողեր	57500200 13 00 4	10 հատ/տարի	բութադիենային կաուչուկ 97-99%, պողատ 1-3%
8.	Յուղոտված լաթեր	58200600 01 01 4	30կգ/տարի	գործվածք 81-84%, յուղ 10-14%, ջուր 3-6%
9.	Կազմակերպության կենցաղային տարածքներից առաջացած չտեսակավորված աղբ	91200400 01 00 4	20տ/տարի	ապակի 9-14%, սև մետաղ 20-25% փայտ 8-13%, թուղթ 25-30%, կտոր 3-7%, սննդի մնացորդ 11-15%, պոլիմերներ 7-12%

6.6. Պատմամշակութային միջավայր

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքով՝ գնահատման և փորձաքննության գործընթացում դիտարկվող օբյեկտների թվին են պատկանում պատմության և մշակույթի հուշարձանները:

ՀՀ Սյունիքի մարզի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակը հաստատվել է ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2322-Ն և 2007 թվականի մարտի 15-ի թիվ 385-Ն որոշումներով:

Մուցք բնակավայրի տարածքում հաշվառված պատմամշակութային անշարժ հուշարձաններից հայցվող տարածքը գտնվում է 1.8-2.2կմ հեռավորությունների վրա:

6.7. Աղմուկ, թրթռումներ

Նախատեսվող գործունեության անբարենպաստ ներգործություն ունեցող գործոններից մեկը առաջացող աղմուկն է: Հատկապես կարևորվում է աղմուկի

մակարդակի ուսումնասիրությունն ու գնահատումը մոտակա Մուցք բնակավայրի տարածքում:

Աղմուկի ազդեցությունը ազդակիր Մուցք բնակավայրում գնահատելու նպատակով կատարվել են հետևյալ հաշվարկները:

Հանքավայրի տարածքում աղմուկի առաջացման աղբյուրներն են՝ բացահանքի տարածքում կատարվող արդյունահանման աշխատանքները, լցակայանների ձևավորումը, ճանապարհներին տրանսպորտի տեղաշարժը:

Հանքավայրում գումարային հաշվարկային ձայնային բնութագիրը՝ LAէկվ ընդունված է 95դԲԱ:

Աղմուկի մակարդակը աղմուկից պաշտպանող տարածքի հաշվարկային կետում որոշվում է՝

$$L_{\text{ատար}} = L_{\text{էկվ}} - \Delta L_{\text{ահեռ}} - \Delta L_{\text{էկր}} - \Delta L_{\text{Ականաչ քանաձևով, որտեղ՝$$

$$L_{\text{էկվ}} - \text{աղմուկի աղբյուրի ձայնային բնութագիրը, } L_{\text{էկվ}}=95\text{դԲԱ,}$$

$\Delta L_{\text{ահեռ}}$ - աղմուկի մակարդակի նվազումը հաշվարկային կետի և աղմուկի աղբյուրի միջև հեռավորությունից կախված, $\Delta L_{\text{ահեռ}}$ կազմում է 20դԲԱ,

$\Delta L_{\text{էկր}}$ - աղմուկի մակարդակի նվազումը էկրանով (նախագծվող բացահանքի տարածք, այլ ընկերությունների կողմից ձևավորված ենթակառուցվածքներ), $\Delta L_{\text{էկր}} = 20\text{դԲԱ,}$

$\Delta L_{\text{Ականաչ}}$ - աղմուկի մակարդակի նվազումը կանաչ գոտիով, $\Delta L_{\text{Ականաչ}}=15\text{դԲԱ:}$

Աղմուկի մակարդակը Մուցք գյուղի մոտ կկազմի՝

$$L_{\text{ատար}} = L_{\text{էկվ}} - \Delta L_{\text{ահեռ}} - \Delta L_{\text{էկր}} - \Delta L_{\text{Ականաչ}} = 95 - 20 - 20 - 15 = 40\text{դԲԱ (նորման 45դԲԱ):}$$

Գիշերային ժամերին արդյունահանման աշխատանքներ տեղամասի սահմաններում չեն կատարվելու:

6.8. Գումարային ազդեցության գնահատում

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով սահմանված է, որ գնահատման ընթացքում հաշվի է առնվում նախատեսվող գործունեության

տարածքում այլ գործունեությունների իրականացման հետևանքով շրջակա միջավայրի վրա գումարային ազդեցությունը:

Մուցքի ոսկու հանքավայրը գտնվում է Սյունիքի մարզի Միսիանի տարածաշրջանում, Մուցք գյուղից 3.5 կմ հարավ, հարավ-արևելք: Մուցք բնակավայրում, ինչպես նաև հանքավայրին հարակից տարածքներում չկան այլ արտադրական կամ հանքարդյունաբերական կազմակերպություններ, համապատասխանաբար այլ ազդեցություններ չկան և հավաքական ազդեցություն չի ձևավորվում:

7. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎՆԱՄԻ

ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

7.1. Ընդհանուր դրույթներ

Բացահանքի շահագործումը ուղղակի կամ անուղղակի ազդեցություն է գործում շրջակա միջավայրի բաղադրամասերի վրա՝ հողաբուսական ծածկույթ, կենդանական և բուսական աշխարհ, օդային և ջրային միջավայր:

Բացահանքի շահագործման ժամանակ շրջակա միջավայրի վրա ազդեցությունը որոշվում է միջավայրին հասցված տնտեսական վնասով:

Տնտեսական վնասը, դա շրջակա միջավայրի աղտոտվածության հետևանքով առաջացած ծախսերն ու կորուստներն են արժեքային արտահայտությամբ:

Տարբերվում են 2 տեսակի ծախսեր, որոնք առաջանում են շրջակա միջավայրի աղտոտումից: Առաջին տեսակի ծախսերը առաջանում են այն դեպքում, երբ ձեռնարկությունը հանդիսանում է շրջակա միջավայրի բաղադրամասերի (օդ, ջուր, հող և այլն) աղտոտման աղբյուր, որոնք օգտագործվում են ուրիշ տնտեսական օբյեկտների կողմից և որոնց նորմալ գործունեության համար կպահանջվի կատարել հնարավոր տեխնիկական միջոցառումներ՝ այդ ազդեցությունը մասնակի կամ լրիվ կանխելու նպատակով: Երկրորդ տեսակի ծախսերը առաջանում են աղտոտված շրջակա միջավայրի ազդեցությունից ռեցիպիենտների վրա:

Տնտեսական վնասը շրջակա միջավայրի աղտոտումից համարվում է կոմպլեքս մեծություն և որոշվում է որպես վնասների գումար, որոնք հասցվում են ռեցիպիենտների առանձին տեսակներին աղտոտող գոտու սահմաններում: Հիմնական ռեցիպիենտներ են համարվում բնությունը, գյուղատնտեսական հանդակները, անտառային ռեսուրսները, բուսական և կենդանական աշխարհը և այլն:

$V = V_U + V_Q + V_Z + V_{ZO} + V_{անտ.տնտ.},$

որտեղ՝ V_U -վնասակար նյութերի մթնոլորտ արտանետումներից հասցված տարեկան գումարային վնասն է,

V_Q - ջրավազաններ թափվող վնասակար նյութերից հասցված տարեկան գումարային վնասն է: Հանքավայրի բաց եղանակով մշակելիս որևէ կեղտաջրերի արտահոսք բաց ջրային օբյեկտներ բացառվում է: Բացահանքում արտադրական հոսքաջրեր չեն առաջանում: Կենցաղային կեղտաջրերի հավաքման համար

նախատեսված է բետոնե լցարան, որտեղից կեղտաջրերը աղբատար մեքենայով պարբերաբար տեղափոխվելու են մոտակա մաքրման կայան:

ՎՀ - Հողերի դեգրադացիայից և աղտոտումից հասցված տարեկան վնասն է (հողատարածքները գյուղատնտեսական նպատակով օգտագործման համար պիտանի չեն):

ՎՀՕ- Հողերի օտարումից հասցված տարեկան վնասն է;

Վանտ.տնտ.- անտառային տնտեսությանը հասցված վնասն է: Քանի որ անտառային ֆոնդից տարածք չի հատկացված, ապա Վանտ.տնտ. =0

Այս բաժնում տնտեսական վնասի հաշվարկ կատարված է մթնոլորտային օդի աղտոտման և հողերի օտարման համար: Տնտեսական վնասի հաշվարկը կատարվում է գործող մեթոդակարգերի համաձայն:

7.2. Մթնոլորտային օդի աղտոտվածության հետևանքով տնտեսությանը հասցված տնտեսական վնասը

Օդային ավազանի աղտոտումից վնասվում է բերքատվությունը Y_{cy} , վատանում է բուսական և կենդանական աշխարհի վիճակը $Y_{բժժ}$:

$$Y_{ԵԾ} = Y_{cy} + Y_{բժժ}$$

Բացահանքի զբաղեցրած տարածքն է 61.8հա, իսկ լցակույտի զբաղեցրած ողջ տարածքը 45.5հա: Միասին կկազմի՝ 107.3հա:

Գյուղատնտեսական բերքատվության իջեցումից կախված վնասը կհաշվարկվի

$$Y_{cy} = \sum_{H 1}^{n} (Q_{nj} Z_{nj} - Q_{dj} Z_{dj}) S_1 = (2000 \times 100 - 1970 \times 100) \times 107.3 = 321900 \text{ դրամ}$$

n- գյուղատնտեսական կուլտուրայի քանակն է, որն աճում է տվյալ տարածքի վրա Q_{nj} և Q_{dj} -ն բերքատվությունն է 1հա տարածքից բնապահպանական միջոցառումներից առաջ և հետո, կգ:

Z_{nj} Z_{dj} -ն 1 միավորի արժեքն է բնապահպանական միջոցառումներից առաջ և հետո S_1 – մակերեսն է , որի վրա կատարվում են այդ աշխատանքները:

Հայցվող տարածքում անտառները բացակայում են, որի պատճառով բուսական և կենդանական աշխարհի վրա ազդող վնասի կանխումը չի նախատեսվում:

Տնտեսական վնասը օդային ավազանի աղտոտումից կկազմի՝ $Y = 321900$ դրամ:

7.3. Հողային ռեսուրսների վրա աղտոտվածության հետևանքով տնտեսությանը հասցված տնտեսական վնասը

Հողային ռեսուրսների վրա տնտեսական վնասը հաշվարկվել է համաձայն ՀՀ կառավարության 25.01.2005թ N92-Ն որոշմամբ հաստատված կարգի:

Բացահանքի նախատեսվող մակերեսը կազմում է 61.8հա, հյուսիսային լցակույտինը՝ 14.9հա, հարավային լցակույտինը՝ 30.6հա, արդյունաբերական հրապարակը՝ 0.065հա: Միասին կկազմի 107.365հա:

Հողային ռեսուրսների վրա ազդեցությունը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$U = \text{ԾՇՎ} + \text{ԱՎՀ} + \text{ԾՈԻՎ},$$

որտեղ՝

Ա-ն ազդեցությունն է,

ԾՇՎ -ն վնասված հողամասը նախնական տեսքի բերելու համար անհրաժեշտ ծախսերն են, (ընդունված է ռեկուլտիվացիայի համար անհրաժեշտ ծախսերի խոշորացված նախահաշվի չափով, 6805.0հազ.դրամ)

ԱՎՀ -ն վնասված հողատարածքի ընդհանուր գույքի արժեքն է (180.373հազ.դրամ),

ԾՈԻՎ -ն ազդեցության հետևանքների ուսումնասիրության և վերլուծության հետ կապված ծախսերն են, 270.0հազ.դրամ:

$$U = 6805.0\text{հազ.դր} + 180.373\text{հազ.դրամ} + 270.0\text{հազ.դրամ} = 7255.373\text{հազ.դրամ}$$

Ջրային ռեսուրսների վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցություններ (դեպի ջրային ռեսուրս վնասակար նյութերի անմիջապես արտահոսք) բացահանքի շահագործման ընթացքում չի դրսևորվելու:

Ընդհանուր տնտեսական վնասը կկազմի՝


$$\text{Վ} = \text{ՎՄ} + \text{ՎՀՕ} = 321.9\text{հազ.դրամ} + 7255.373\text{հազ.դրամ} = 7577.273\text{հազ.դրամ}:$$

8. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆԸ

Մուցքի ոսկու հանքավայրի բացահանքի նախագծային լուծումները նախատեսում են մի շարք բնապահպանական միջոցառումներ, որոնք թույլ կտան նվազեցնել ազդեցությունը շրջակա միջավայրի վրա բացահանքի շինարարության և շահագործման ընթացքում: Բնապահպանական կառավարման պլանը ներկայացվում է նաև աղյուսակի տեսքով (աղյուսակ 39) :

Մթնոլորտային օդի պահպանության միջոցառումներ.

- հորատման հաստոցները պետք է կահավորված լինեն արդիական փոշեռսիչներով, ինչը զգալիորեն նվազեցնում է հանքափոշու արտանետումները մթնոլորտ;
- լեռնային տեխնիկայի շարժիչների վառոցքները պետք է լինեն կարգավորված, ինչը կնվազեցնի մթնոլորտ արտանետվող գազերի քանակը;
- լեռնային տեխնիկայի և ավտոինքնաթափերի շարժիչների գազերի արտանետման վրա պետք է տեղադրվեն կատալիտիկ չեզոքացուցիչներ, ինչը թույլ է տալիս կրճատել գազերի արտանետումները մթնոլորտ;
- տաք և չոր եղանակին բեռնվող լեռնազանգվածը, արդիրապարակը, մերձատար ճանապարհների տարածքում պետք է կատարվի ջրցանում՝ օրական 2-3 անգամ, ինչը թույլ է տալիս կրճատել փոշու արտանետումները,
- ներհանքային ճանապարհների պետք է խճապատվեն, ինչը թույլ կտա կրճատել փոշեգոյացման ծավալները;
- կատարվելու է լցակույտերի մակերեսների ընթացիկ ռեկուլտիվացիա, ինչը կկրճատի լցակույտի մակերեսից փոշու բնական տարուքի ծավալները;
- կատարվելու է մթնոլորտային օդում փոշու և աղտոտող նյութերի պարբերական մոնիթորինգ, ստացված տվյալների վերլուծություն, ըստ անհրաժեշտության բնապահպանական միջոցառումների վերանայում;
- արդյունահանման ենթակառուցվածքների և Մուցք գյուղի միջև տնկվելու է պաշտպանիչ անտառաշերտ՝ բարդի, ակացիա, հացենի և սոճի ծառատեսկների կիրառմամբ (նկար 19):



Նկար 19.

Անբարենպաստ օդերևութաբանական պայմանների ժամանակահատվածում (քամու արագության նվազման, անհողմության, մառախուղի առաջացման դեպքերում), հնարավոր են աղտոտող նյութերի մերձգետնյա կոնցենտրացիաների բարձրացումներ ցրման վատացման հաշվին: Անբարենպաստ օդերևութաբանական պայմանների ժամանակ նախատեսում են արտանետումների նվազեցմանն ուղղված միջոցառումներն՝

I ռեժիմ՝ նախատեսվում է արտանետվող նյութերի կոնցենտրացիաների կրճատումը 15-20 %-ով, կատարելով հետևյալ միջոցառումները.

- ✓ ուժեղացնել հսկողությունը բացահանքում տարվող աշխատանքների նկատմամբ;
- ✓ թույլ չտալ տեխնիկայի և սարքավորումների գերբեռնված աշխատանք;
- ✓ բացահանքի ճանապարհների ջրցանում փոշու արտանետումների նվազման համար:

Անբարենպաստ օդերևութաբանական պայմանների տևական ներգործության և կատարված միջոցառումների անբավարարության դեպքում անհրաժեշտ է անցնել բացահանքի II և III ռեժիմով աշխատանքին:

II ռեժիմ՝ միջոցառումները կնպաստեն արտանետումների նվազմանը մոտ 20-40 %-ով.

- ✓ ավելացնել ջրցանման ծավալը բացահանքի ճանապարհներում և լցակույտում;
- ✓ կրճատել պայթեցման, բեռնման և բեռնաթափման աշխատանքները;

III ռեժիմ՝

- ✓ դադարեցնել հորատման և պայթեցման աշխատանքները, կրճատելով արտանետումները 40-60%-ով:

Ջրային ռեսուրսների պահպանության միջոցառումներ.

- Բացահանքի և լցակույտերի տարածքից մթնոլորտային տեղումներից առաջացած ջրերի հեռացում: Ջրհեռացնող առուները կառուցվում են 4 տեղամասերում. բացահանքերից արևելք (2175մ բարձունքային նիշից մինչև 2135մ բարձունքային նիշը, երկարությունը 1.1կմ, թեքությունը-0.36, ջրհավաքի մակերեսը-12հա), բացահանքերից արևմուտք (2175մ բարձունքային նիշից մինչև 2080մ բարձունքային նիշը, ջրհավաք մակերեսը կազմում է 48.6հա, ջրհեռացնող առվի երկարությունը -855մ, թեքությունը-0.11), բացահանքերից և լցակույտերից հարավ

(2150մ բարձունքային նիշից մինչև 2080մ բարձունքային նիշը, ջրհավաք մակերեսը կազմում է 150հա, ջրհեռացնող առվի երկարությունը -1120մ, թեքությունը-0.062) և լցակույտերից արևմուտք (2150մ բարձունքային նիշից մինչև 2000մ բարձունքային նիշը, ջրհավաք մակերեսը կազմում է 475հա, ջրհեռացնող առվի երկարությունը - 2860մ, թեքությունը-0.017): Լցակույտերի տարածքից հավաքված ջրերը ուղղվելու են Դմորմբան գետը, այնուհետև՝ կուտակիչ ավազան;

- ավտոինքնաթափերի լվացման համար նախատեսվում է շրջանառու համակարգ, ինչը թույլ կտա բացառել մեքենաների լվացումից առաջացած կեղտաջրերի արտահոսքը շրջակա միջավայր;

- ճանապարհների խճապատում, ինչը կնվազեցնի փոշեգոյացումը և հնարավորություն կտա կրճատել փոշենստեցման համար օգտագործվող թարմ տեխնիկական ջրի ծախսը;

- բացահանքի տարածքի տնտեսա-կենցաղային կեղտաջրերի մաքրման համար նախատեսվում է տեղադրել արդիական ինքնավար կենսաբանական մաքրման կայան;

- մակերևութային ջրերում աղտոտող նյութերի պարբերական մոնիթորինգի իրականացում, ստացված տվյալների վերլուծություն, ըստ անհրաժեշտության բնապահպանական միջոցառումների վերանայում:

Հողային ռեսուրսների պահպանության միջոցառումներ.

- լեռնակապիտալ աշխատանքների փուլում բացահանքի և ենթակառուցվածքների տարածքից շուրջ 161.0հազ.մ³ շագանակագույն հողերի և սևահողերի վերին շերտի տարանջատված հեռացում, կուտակում լցակույտի հատուկ հատկացված մասում;

- կուտակված հողերի մակերեսին Միսիանի տարածաշրջանի տափաստանային գոտուն բնորոշ տարախոտային-հացահատիկային և լոբազգի բույսերի սերմերի ցանք, ինչը թույլ կտա պահեստավորման ընթացքում կանխել հողերի ջրա- և հողմատարումը, ինչպես նաև կնպաստի հումուսի պաշարների ավելացմանը;

- լցակույտի տարածքի ջրհեռացման ապահովում, ինչը թույլ կտա բացառել կուտակված բուսահողի լվացումը մթնոլորտային տեղումներից առաջացած ջրահոսքերով;

- ՀՀ կառավարության 02.11.2017թ.-ի №1404-Ն և 08.09.2021թ.-ի №1396-Ն որոշման պահանջների ապահովում;
- աշխատանքների ավարտից հետո՝ բացահանքի հատակի և լցակույտերի լեռնատեխնիկական և կենսաբանական ռեկուլտիվացիա: Լեռնային աշխատանքների հետևանքով խախտված հողերի վերականգնման ժամանակ լցակույտերի վերին հարթակներին, պոչամբարի մակերևույթների, բացահանքի հատակին կուտակված այլովիալ առաջացումները փովելու են և հարթեցվեն փռումը և հարթեցումը: Այդ վերականգնվող մակերևույթների տարածքները կազմում են 23.85հա, այդ թվում հյուսիսային լցակույտ-1.9հա, հարավային լցակույտ-2.5հա, ներքին լցակույտ-11.95հա, բացահանքի հատակ-0.45հա, պոչամբար-7.5հա: Վերականգնման ենթակա տարածքը կազմում է 23.85հա, այդ թվում և հարթեցվող տարածքը: Ապարների փռումը և հարթեցումը կատարվում է բուլդոզերով: Լեռնատեխնիկական վերականգնման ընդհանուր տևողությունը կազմում է 143 ժամ կամ 21 օր:

Տարածքների լեռնատեխնիկական և կենսաբանական վերականգնման համար անհրաժեշտ ծախսերի խոշորացված հաշվարկները բերված են 34-38 աղյուսակներում:

Աղյուսակ 34.

Անհրաժեշտ նյութերի ծախսի հաշվարկը

N	Աշխատանքի անվանումը, սարքավորումը	Աշխատանքի տևողությունը, ժամ	Ծախսվող նյութերի անվանումը	Նյութերի ծախսը, կգ		Նյութերի արժեքը	
				միավոր ժամանակում	ընդամենը	միավորի, դրամ	ընդամենը, լուս.դրամ
1.	Ապարների փռում և հարթեցում (բուլդոզեր)	143	Դիզ.վառելիք	35	5005	480	2402.4
			Դիզ. յուղ	2,0	286	600	171.6
			Այլ քսուկներ	3,8	543	6000	325.8
Ընդամենը							299.8
2.	Տրանսպորտային ծախսեր 12.9%						307.0
Ամբողջը							3306.8

Աղյուսակ 35.

Սարքավորումների ամորտիզացիոն ծախսերի հաշվարկը

N	Սարքավորման անվանումը	Քանակը, հատ	Միավորի արժեքը, հազ.դրամ	Ամորտիզացիոն ծախսը, %	Ընդհանուր գումարը, հազ.դրամ
1.	Բուլդոզեր	1	13600	0.8	108,8
2.	Վերանորոգում			50.0	54,4
	Ամբողջը				163.2

Աղյուսակ 36.

Աշխատավարձի ֆոնդի հաշվարկը

N	Պաշտոնը կամ մասնագիտությունը	Աշխատողների քանակը, մարդ	Աշխատանքային օրերի քանակը, օր	Մեկ օրվա աշխատավարձը, դրամ	Աշխատավարձի գումարը, հազ.դրամ
1.	Բուլդոզերի մեքենավար	1	21	8000	168.0
	Ընդամենը				168.0

Աղյուսակ 37.

Խախտված տարածքների լեռնատեխնիկական վերակուլտիվացիայի համար անհրաժեշտ ծախսերի խոշորացված նախահաշիվը

N	Ծախսերի հոդվածները	Նորմը, %	Զափման միավորը	Գումարը, հազ.դրամ
1.	Նյութեր	-	հազ.դրամ	3306.8
2.	Ամորտիզացիա և վերանորոգում	-	«___»	163.2
3.	Աշխատավարձ		«___»	168.0
4.	Սոց.ապահովման փոխանցումներ	24	«___»	40.3
	Ընդամենը			3678.3
5.	Անուղղակի ծախսեր	5.3	%	195.0
	Ամբողջը			3873.3
6.	Շահույթ	10	%	387.3
	Բոլորը			4260.3
7.	Այլ ծախսեր	10	%	426.1
	Ընդամենը			4686.7
8.	Վերականգնված միավոր տարածքի համար պահանջվող ծախսերը		դր/մ ²	19.65
9.	Արդյունահանված օգտակար հանածոյի միավոր զանգվածի համար վերակուլտիվացիայի անհրաժեշտ ծախսերը		դր/մ ³	1.68

Վերջնական դիրքը խախտված տարածքների վերականգնումից հետո ներկայացված է նկար 20-ում:

Լեռնատեխնիկական ռեկուլտիվացիայից հետո իրականացվելու է տարածքի կենսաբանական ռեկուլտիվացիա :

Կենսաբանական ռեկուլտիվացիայի աշխատանքների արժեքը ընդգրկում է հետևյալ ծախսատեսակները՝ աշխատավարձը, նյութերի արժեքը, մեքենաների և մեխանիզմների շահագործման արժեքը, անուղղակի ծախսերը, շահույթը, ավելացված արժեքի հարկը և այլ ծախսեր:


Լեռնատեխնիկական ռեկուլտիվացիայի աշխատանքներից հետո, հարթեցված մակերևույթին, փխրեցված փոված հողերը կպարարտացվեն բնական պարարտանյութերի կիրառմամբ, կկատարվի Սիսիանի տարածաշրջանի տափաստանային բուսականությանը բնորոշ տարախոտա-հացազգային և լոբազգի բույսերի նախապես պատրաստված, մշակված սերմերի հիդրոցանք:

Հողերի կենսաբանական վերականգնման արդյունավետ իրականացման համար նապատեսվում է կիրառել «СОРЕՅКС» կամ դրան համարժեք այլ պատրաստույթներ (սապրոպել 60-70%, ցեոլիտ 23-27%, կավահող 8-11%), որոնք կիրառման նպատակն է պարարտացնել հողաբուսական շերտը, բարձրացնել կիրառվող խոտատեսակների ծլման և աճման հատկությունները, հազեցնել հողերի օգտակար բաղադրիչներով, նպաստել խոնավության պահպանմանը :

Սերմերի ցանքսից հետո կիրառվելու են նաև ՀՀ տարածքում արտադրվող, ազոտկլանող մանրէների հիմքի վրա ստեղծված «Азотовит», «Экобиофид» և «Экобиофид+» կենսաբանական պարարտանյութերը :

Սերմերի հիդրոցանքը կատարվելու է ընկերությանը պատկանող ԳԱԶ մակնիշի բեռնատարի վրա հարմարեցված սարքավորման կիրառմամբ (УГП W1000 կամ, «Elefante 1000» կամ «Shark 1500») :

Աշխատանքները կատարվելու են 2 բուսաբան-մասնագետի կողմից, ով իրականացնելու է սերմերի ընտրության, նախապատրաստման աշխատանքներ՝ մշակում բակտերիալ պարարտանյութերով, միկրոտարրերով, լոբազգիների դեպքում՝ թրջում և ծլեցում, այնուհետև սերմերի ցանք և հսկողություն, մակերեսի շուրջ 40% համար՝ կրկնակից ցանք (հաշվի առնելով ծլման ցուցանիշները):



Նկար 20.

Ռեկուլտիվացիոն աշխատանքների կենսաբանական փուլի աշխատանքների
նախահաշիվը

N	Ծախսերի հոդվածները	Չափման միավորը	Գումարը, հազ.դրամ
1	2	3	4
1.	Աշխատավարձ	հազ.դրամ	550.0
2.	Նյութեր	հազ.դրամ	1020.0
3.	Տրանսպորտային ծախսեր	հազ.դրամ	110.0
	Ընդամենը	հազ.դրամ	1680.0
4.	Անուղղակի ծախսեր (5.3%)	հազ.դրամ	89.04
1	2	3	4
	Ընդամենը	հազ.դրամ	1769.04
7.	Շահույթ	հազ.դրամ	176.9
	Ընդհանուրը	հազ.դրամ	1945.94
8.	Այլ ծախսեր	հազ.դրամ	172.36
	Ամբողջը	հազ.դրամ	2118.3

Ռեկուլտիվացիոն աշխատանքների լեռնատեխնիկական և կենսաբանական փուլերի իրականացման համար անհրաժեշտ գումարը կկազմի 6805.0 հազ.դրամ :

Այդ գումարը հատկացվելու է շրջակա միջավայրի պահպանության դրամագլխին ՀՀ կառավարության 21.10.2021թ.-ի N1733-Ն որոշմամբ սահմանված ընթացակարգով:

Հետագայում նյութերի, աշխատանքների արժեքների և սարքավորումների շուկայական գների փոփոխման հետ զուգընթաց խախտված հողերի վերակուլտիվացիայի համար անհրաժեշտ ծախսերի խոշորացված նախահաշիվը ենթակա են ինդեքսավորման ՀՀ կառավարության 18.08.2021թ.-ի N 1352-Ն որոշման դրույթներին համապատասխան:

- Բացահանքի և արտադրական հրապարակների մակերևույթի պարբերական մոնիթորինգ՝ աղտոտիչ նյութերի պարունակությունները վերահսկելու նպատակով:

- Առանձին կուտակված հողաբուսական շերտի պարբերական մոնիթորինգ՝ հողերի քիմիական կազմի, կատիոնափոխանակման հատկությունների և հումուսի պարունակության ուսումնասիրության համար:

Կենսաբազմազանության պահպանության միջոցառումներ.

- անտառապաշտպան շերտի տնկման աշխատանքների իրականացման արդյունքում հանքավայրի շրջանին բնորոշ թռչնատեսակների կենսամիջավայրի ստեղծում;
- անտառապաշտպան շերտի տնկման աշխատանքների իրականացման արդյունքում միջատների բնափայտային տեսակների պահպանություն;
- վաղ գարնանը, սողունների ակտիվության շրջանում արդյունահանման նպատակով լեռնային աշխատանքների զարգացման գրաֆիկով նախանշված տարածքներից սողունների հավաք և վերաբնակեցում անվտանգ հատվածներ;
- հանքավայրի հարակից տարածքների հացահատիկային և լոբազգի ընտանիքների բույսերի սերմերի համավ, սերմերի ֆոնդի ստեղծում, հետագա ռեկուլտիվացիոն աշխատանքների ժամանակ օգտագործելու նխատակով;
- արդյունահանման աշխատանքների ժամանակ անօրինական որսի բացառում;
- բացահանքի շահագործման աշխատանքներին ներգրավված անձնակազմի ուսուցում՝ իրազեկում շրջանում հայտնի ՀՀ բույսերի և ՀՀ կենդանիների գրքերում գրանցված տեսակների վերաբերյալ;
- գործող սարքավորումների և մեքենաների շարժիչների կարգավորում, աղմուկի մակարդակի վերահսկողություն;
- ՀՀ կառավարության 31.07.2014թ.-ի թիվ 781-Ն որոշմամբ սահմանված դեպքերում՝ ըստ կիրառելիության, բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության միջոցառումների իրականացում: Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության ներկայացնելիս ընկերության կողմից գործունեության հայտում և հետագայում՝ գնահատման հաշվետվության մեջ ներառվում և հետագայում իրականացվում են վայրի բուսատեսակների և դրանց պոպուլյացիաների վիճակի ուսումնասիրություն (տեսակային կազմ, տարածվածություն, քանակ), որի տվյալները սահմանված կարգով տրամադրվում են բուսական աշխարհի պահպանության, պաշտպանության, օգտագործման և վերարտադրության բնագավառում լիազորված պետական մարմնին):

Հողերում Հայաստանի Հանրապետության բույսերի Կարմիր գրքում գրանցված բուսական տեսակի նոր պոպուլյացիաների հայտնաբերման դեպքում դրանց պահպանության նպատակով ընկերությունը պարտավորվում է իրականացնել հետևյալ միջոցառումները՝

1) առանձնացնել օգտագործման նպատակով տրամադրված տարածքում պահպանվող գոտիներ, որոնք ունեն տեղական նշանակություն և անհրաժեշտ են կարմիր գրքում գրանցված բուսատեսակների՝ սույն կետում նշված նոր պոպուլյացիաների կենսունակության ապահովման նպատակով.

2) ժամանակավորապես սահմանափակել առանձնացված պահպանվող գոտիներում տնտեսական գործունեության որոշ տեսակներ, եթե դրանք կարող են բերել նշված բուսատեսակների աճելավայրերի վիճակի վատթարացմանն ու պոպուլյացիաների կենսունակության խաթարմանը.

3) սույն կետի 1-ին և 2-րդ ենթակետերում նշված միջոցառումների իրականացման անհնարինության դեպքում կարմիր գրքում, որպես տվյալ բույսի աճելավայր չգրանցված տարածքներից, բույսերի բնական վերարտադրության նպատակով տեղափոխել բույսերի առանձնյակները տվյալ տեսակի համար նպաստավոր բնակլիմայական պայմաններ ունեցող որևէ բնության հատուկ պահպանվող տարածք կամ բուսաբանական այգիների տարածք, կամ կարմիր գրքում որպես տվյալ բույսի աճելավայրեր գրանցված որևէ տարածք, իսկ բույսերի սերմերը տրամադրել համապատասխան մասնագիտացված կազմակերպությանը՝ զենետիկական բանկում պահելու և հետագայում տեսակի վերարտադրությունը կազմակերպելու նպատակով:

- կենցաղային աղբի տեսակավորված հավաքում, պահում ամուր փակվող կոնտեյների մեջ, աղբի տեղափոխում Սիսիանի գործող աղբավայրեր;
- բուսածածկի և կենդանական աշխարհի պարբերական մոնիթորինգ:

Ընդերքօգտագործման և արտադրական թափոններով աղտոտման կանխարգելում.

- մակաբացման ապարների կուտակում ջրհեռացված համակարգով կահավորված լցակույտի տարածքում;
- նավթամթերքներ պարունակող թափոնների (յուղոտ լաթեր, բանեցված կոմպրեսորային, տրանսմիսիոն, հիդրավլիկ, ավտոմոբիլային, դիզելային

յուղեր) առանձին հավաքում մակնանշված, ամուր փակվող տարողությունների մեջ: Տարողությունների տեղադրում հատուկ կահավորված պահեստում, ջերմության աղբյուրներից սահմանված հեռավորությունների վրա, որտեղ բացառվում է արևի ուղիղ ճառագայթների և մթնոլորտային տեղումների ներթափանցումը: Տեղադրման տարածքի հատակը պատվում է յուղադիմացկուն թաղանթով, տարածքում առկա են հրշիջման միջոցներ, անվտանգության նշաններ և ցուցանակներ: Սպասարկող անձնակազմը ապահովված է անհատական պաշտպանության միջոցներով և սահմանված պարբերականությամբ անցնում է հրահանգավորում և ուսուցում;

- բանեցված կապարե կուտակիչները պահվում են մետաղական տարողություններում կամ արկղերում/տուփերում, որոնցում դատարկ տարածությունները լցվում են ամորտիզացման միջոցներով: Հետագայում բանեցված կապարե կուտակիչները նախատեսվում է հանձնել վերամշակման լիցենզիա ունեցող մասնագիտացված կազմակերպությանը;
- բանեցված օդաճնշիչ դողերը ժամանակավորապես պահվում են ամուր հատակ և ծածկ ունեցող ցանկապատված տարածքում, պարբերաբար տեղափոխվում են հանքավայրից մոտ 8կմ արևելք՝ ՀՀ - ՆԻՀ սահմանագծով, զինվորական ինժեներական կառույցները ամրացնելու և կահավորելու նպատակով;
- չտեսակավորված կենցաղային աղբը տեղափոխվում է աղբավայր փակ կողեր ունեցող ինքնաթափով: Աղբահանության իրականացման նպատակով կնքվելու է պայմանագիր տարածաշրջանում այս տեսակի գործունեությամբ զբաղվող ընկերությունների հետ:

Ընդերքօգտագործման թափոնների կառավարման մեկ տարվա համար անհրաժեշտ ֆինանսական երաշխիքը կկազմի 34107253 դրամ:

Աղմուկի և տատանումների կառավարում.

- բեռնատար մեքենաների տեղաշարժ նախապես մշակված և համաձայնեցված մշակված գրաֆիկով՝ կուտակումները բացառելու նպատակով;
- աղմուկի աղբյուր հանդիսացող մեքենաների շարժիչների կահավորում հատուկ ձայնամեկուսիչ պատյաններով;

- տեխնոլոգիական սարքավորումների տեղադրում տատանումներ մեկուսացնող հատուկ հիմքերի վրա;
- բաց դիմաձածկոցներով սարքավորումների և մեխանիզմների շահագործման բացառում;
- աշխատակիցների ապահովում աղմուկից պաշտպանվելու անհատական միջոցներով;
- աղմուկի մակարդակի պարբերական վերահսկում բացահանքի տարածքում, Մուցք գյուղում:

Պատմամշակութային հուշարձանների պաշտպանություն.

Մուցք բնակավայրի պատմամշակութային անշարժ հուշարձաններից արդյունահանման նպատակով հայցվող տարածքը գտնվում է 1.8-2.2կմ հեռավորությունների վրա: Հանքավայրի և ենթակառուցվածքների տեղադրման համար առաջարկվող տարածքում պատմամշակութային հուշարձաններ ՀՀ կառավարության կողմից հաշվառված չեն: Աշխատանքների ընթացքում նախատեսվում է կիրառել պատահական գտածոների ընթացակարգ, հետևյալ միջոցառումների իրականացման միջոցով.

- համապատասխան անձնակազմի և պայմանագրով աշխատողների ուսուցում պատահական հնագիտական գտածոների ճանաչման, դրանց հետ վարվելակերպի և արձագանքի ուղղությամբ;
- գտածոների ուսումնասիրություն հրավիրված հնագետների կողմից, որպեսզի վերջիններս ուղղորդեն հնագիտական գտածոների ճանաչման և արձագանքման գործընթացը,
- արձանագրությունների կազմում պատահական գտածոներին արձագանքելու համար, ներառյալ աշխատանքի ժամանակավոր դադարեցումը գտածոների հայտնաբերման վայրում;
- պետական մարմինների ծանուցում,
- պատահական գտածոների գնահատման և պեղումների արագացված ընթացակարգերի կիրառում, ազդեցությունների սահմանափակման համար, միաժամանակ նվազեցնելով շահագործական աշխատանքների ուշացումները:

Աշխատակիցների կենցաղային պայմանների ապահովում.

Աշխատակիցների տնտեսական-կենցաղային կարիքների ապահովման նպատակով արտադրական հրապարակում տեղադրվում են բեռնարկային տիպի տնակներ՝ հանգստի և սննդի ընդունման համար: Կահավորվելու է 3 լվացարան, դաշտային տիպի ջրցուղարան, զուգարան: Ջրամատակարարումը խմելու և տեխնիկական ջրով իրականացվում է ավտոցիստեռներով: Տնտեսա-կենցաղային կեղտաջրերն ուղղվում են ինքնավար կենսաբանական մաքրման կայան, այնուհետև մոնիթորինգից հետո՝ Դմբդմբան գետը:

Հանգստի համար նախատեսված տնակներում պարտադիր տեղադրվելու են առաջին բժշկական օգնության պարագաներ: Սոցիալ-տնտեսական աջակցության շրջանակներում ընկերության կողմից ֆինանսավորվելու են Մուցք գյուղի ամբուլատորիայի արդիականացման աշխատանքները, կատարվելու է համալրում անհրաժեշտ դեղորայքով և բժշկական սարքավորումներով: Ամբուլատորիան սպասարկելու է նաև հանքի աշխատակիցներին:

Գործողությունները	Հնարավոր ազդեցությունը	Նվազեցնող միջոցառումները	Նվազեցման ցուցանիշը	Նվազեցման միջոցառման արժեքը	Նվազեցման պատասխանատուն
<p>Հանքաքարի և թափոնների տեղափոխում</p> <p>Հանքային տեխնիկայի տեղաշարժ</p>	<p>- Բեռնատարների անբավարար տեխնիկական վիճակի և չձածկված թափքերի պատճառով առաջացող աղտոտում</p> <p>- Փոշու և աղմուկի պատճառով տեղի բնակչությանը պատճատած անհարմարություններ</p>	<p>- Բեռնատարների և մեխանիզմների համապատասխան տեխնիկական վիճակի ապահովում</p> <p>- Տեղափոխումների ժամանակացույցի և երթուղիների պահպանում</p>	<p>- Ստուգումների արդյունքում հայտնաբերված բարվոք վիճակը</p> <p>- Ստուգման ընթացքում չեն հայտնաբերվում չձածկված բեռնատարներ</p> <p>- Չի հայտնաբերվում արտաժամ գործունեություն, որը կարող է անհանգստացնել տեղի բնակչությանը</p> <p>- Տեղի բնակչության բողոքների բացակայություն</p>	<p>Ընթացիկ ծախսեր</p>	<p>«Գեոռեյդ» ՓԲԸ</p>
<p>Հանքային տեխնիկայի սպասարկում</p>	<p>- Հողերի և ջրերի աղտոտում տեխնիկայի սպասարկման արդյունքում առաջացող յոդերի պատճառով</p> <p>- Հրդեհի դեպքում առաջացող վտանգ</p>	<p>- Մեքենաների և տեխնիկայի լվացումը պետք է կատարվի շինհրապարակից դուրս կամ գետից առավելագույն հեռավորության վրա</p> <p>- Տեխնիկական միջոցների լիցքավորումը և յուղումը պետք է իրականացվի շինհրապարակից դուրս կամ հատուկ նշանակված վայրում</p> <p>- Հանքային տեխնիկայի սպասարկման կետի պայմանները`</p>	<p>- Բացառվում է մեքենաների լվացման ջրերի արտահոսքը դեպի ջրային ռեսուրսներ</p> <p>- Չկան վառելիքի և նավթամթերքի արտահոսքեր արտադրական տարածքներում կամ մերձակայքում</p> <p>- Տարածքում առկա են հակահրդեհային հիմնական միջոցները</p>	<p>1000.0 հազ.դրամ</p>	<p>«Գեոռեյդ» ՓԲԸ, սպասարկում իրականացնող կազմակերպություններ</p>

		<ul style="list-style-type: none"> • հատակը պետք է լինի անթափանց կամ ավազով ծածկված, • ազատ տարածք և պաշտպանիչ գոտիներ վառելիքի պահեստի մոտ • կետը պետք է կահավորված լինի հակահրդեհային միջոցներով 			
Շրջանցիկ առուների կառուցում	Կենդանիների տեղաշարժի սահմանափակում	Շրջանցիկ առուների վրա կամ թջակների տեղադրում	Կենդանիների ազատ տեղաշարժի ապահովում	300.0 հազ. դրամ	«Գեոոեյդ» ՓԲԸ
Կենցաղային աղբի առաջացում	Հողերի և ջրերի աղտոտում կենցաղային աղբով	<ul style="list-style-type: none"> - Աղբամանների տեղադրում շինարարական հրապարակում աղբի տարանջատված հավաքման համար - Միսիանի քաղաքապետարանի համաձայնությունը աղբի մշտական տեղակայման վերաբերյալ 	<ul style="list-style-type: none"> - Աղբամանները առկա են արդիապարակում - Արտադրական հրապարակը աղբոտված չէ 	Ընթացիկ ծախսեր	«Գեոոեյդ» ՓԲԸ
Աշխատանքի անվտանգություն	Վնասվածքներ և դժբախտ պատահարներ շինհրապարակում	<ul style="list-style-type: none"> - Անձնակազմի ապահովում արտահագուստով և անձնական պաշտպանիչ միջոցներով - Անձնական պաշտպանության նորմերի խստիվ պահպանություն 	<ul style="list-style-type: none"> - Ստուգման ընթացքում անձնակազմը ապահովված էր արտահագուստով և անձնական միջոցներով - Ստուգման ընթացքում չեն հայտնաբերվել խախտումներ 	Առանց լրացուցիչ ծախսերի`	«Գեոոեյդ» ՓԲԸ

Փորման-բեռնման աշխատանքներ	Մթնոլորտի աղտոտում արտանետվող փոշու	Ջրցան	Պարբերաբար իրականացվող փոշու չափումների արդյունքները համապատասխանում են ռեգլամենտային ցուցանիշներին	200.0 հազ.դրամ	«Գեոռեյդ» ՓԲԸ
		Պաշտպանիչ անտառաշերտի հիմնում		1204.0 հազ.դրամ	«Գեոռեյդ» ՓԲԸ
Հանքաքարի և դատարկ ապարների տեղափոխում	Մթնոլորտի աղտոտում արտանետվող փոշու	- Բեռնման ընթացքում ջրցան - Տեղափոխել թափքը ծածկ ունեցող բեռնատարներով	Արտաքին գնումներ	Ընթացիկ ծախսեր	«Գեոռեյդ» ՓԲԸ
Հանքի և արտաքին լցակույտերի շահագործում	Աղտոտված արտահոսք	Շրջանցող առուների անխափան աշխատանքի վերահսկում	- Արտաքին գնումներ - մակերեսային ջրերի նմուշառման և անալիզների արդյունքները	Ընթացիկ ծախսեր	«Գեոռեյդ» ՓԲԸ
Հանքի և արտաքին լցակույտերի շահագործումձվ*ցֆզվ	Սողանքային երևույթների ակտիվացում	020-0500, 020-0570, 020-0580 սողանքային մարմինների կայունության վերահսկում	Սահքեր, հողային զանգվածի վրա ճաքերի, փլուզումների առաջացում, ջրերի ելքեր, տեղադրված նշաձողերի ակմադիտական գնում, տեղաշարժի առկայության վերլուխություն	Տարեկան 200.0հազ.դրամ	«Գեոռեյդ» ՓԲԸ ինժեներատեխնիկական անձնակազմի ներկայացուցիչ

<i>Շահագործման ավարտ և հանքի փակում /կոնսերվացում/</i>					
Բացահանքերի, արտադրական լցակույտերի ռեկուլտիվացիա	Հանքի շահագործման արդյունքում տեղանքի տեսանելի արժեքի կորուստ	<ul style="list-style-type: none"> - Ժամանակավոր շինությունների քանդում - ռեկուլտիվացում - շինհրապարակի վերջնական մաքրում, տարածքի բարեկարգում - սողանքային մարմինները կայուն են 	<ul style="list-style-type: none"> - Հանքի փակումից հետո չկա շին.անբարեկարգ տարածք - Տարածքը բարեկարգվել և կանաչապատվել է ՀՀ կառավարության 08.02.2018թ.-ի №108 որոշման պահանջներին համապատասխան - Փակման ծրագրի մոնիթորինգ - Տարածքում դեֆորմացիաների մոնիթորինգ 	6805.0 հազար դրամ 500.0հազ.դրամ	«Գեոռեյդ» ՓԲԸ

9. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԾՐԱԳԻՐ

«Գեոռեյդ» ՓԲ ընկերության կողմից Մուցքի ոսկու հանքավայրի տարածքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի աղտոտվածության մոնիթորինգ՝ ՀՀ կառավարության 2018 թվականի փետրվարի 22-ի N191-Ն որոշման պահանջներին համապատասխան: Կատարվելու է մակերևութային ջրերի որակի ուսումնասիրություն, մթնոլորտային օդի դիտարկում, հողային ծածկույթի զննություն, աղմուկի մակարդակի չափում, ինչպես նաև հանքի տարածքի և հարակից շրջանի կենսաբազմազանության դիտարկում:

Ստորև, աղյուսակ 40-ում ներկայացված են բացահանքի շահագործման ազդեցության վերահսկման նպատակով կատարվելիք բնապահպանական մոնիթորինգի հիմնական ցուցանիշները:


Աղյուսակ 40.

Մոնիթորինգի ենթակա պարամետրերը	Մոնիթորինգի վայրը	Ազդեցության դրսևորման հիմնական աղբյուրները	Մոնիթորինգի տեսակը
1	2	3	4
Անօրգանական փոշի, ծխազագեր	Բացահանք	Հանույթաբարձման աշխատանքներ, մեքենաների տեղաշարժ, հորատման և պայթեցման աշխատանքներ	Նմուշառում, նմուշի լաբորատոր հետազոտություն, շաբաթական մեկ անգամ՝ 24 ժամ տևողությամբ
	Լցակույտ	Լցակույտառաջացման աշխատանքներ, լցակույտի մակերեսից բնական տարուք	Նմուշառում, նմուշի լաբորատոր հետազոտություն, շաբաթական մեկ անգամ՝ 24 ժամ տևողությամբ
Հողային ռեսուրսներ	Ձեռնարկության արտադրական տարածք	Աղտոտում նավթամթերքներով մեխանիզմների, մեքենաների աշխատանքի հետ կապված, հանքափոշու նստեցում	Նմուշառում, նմուշի լաբորատոր հետազոտություն, ամսեկան մեկ անգամ
	Լցակույտում պահեստավորված հողի բերրի շերտ	Քիմիական կազմ, հումուսի պարունակության կորուստ	Նմուշառում, լաբորատոր հետազոտություն, տարեկան մեկ անգամ

1	2	3	4
Բաց ջրավազաններ	Դմբդմբան գետակ	Արդյունահանման աշխատանքներ, կենցաղային արտահոսքեր	Նմուշառում, նմուշի լաբորատոր հետազոտություն, շաբաթական մեկ անգամ
	Դմբդմբան գետակի Անանուն վտակ		
Աղմուկ և թրթռումներ	Բացահանք	Ծանր տեխնիկայի տեղաշարժ, լեռնային զանգվածի բարձրան-բեռնաթափման աշխատանքներ	Չափիչ սարքերի կիրառում, տարեկան մեկ անգամ
	Մուցք գյուղ		
Բուսական ծածկ և կենդանական աշխարհ (վայրի բնության ներկայացուցիչների քանակ աճելավայրերի և ապրելավայրերի տարածք, պոպուլյացիայի փոփոխություն)	Բացահանքի և ենթակառուցվածքների առաջարկվող և հարակից տարածքներ	Բացահանքի շինարարություն և շահագործում, լցակույտառաջացում	Դիտողական զննում, երթուղիներ, ֆոտոթակարդներ, հետքերի, սննդի մնացորդների և էքսկրեմենտների զննում, տարեկան մեկ անգամ
Թափոններ	Արտադրական տարածքում հատուկ հատկացված վայրեր, լցակույտ	Պահեստավորված նավթամթերքներ պարունակող թափոններ, մակաբացման ապարներ	Տեսողական զննում, նույթերի ճշգրիտ տեսակավորում և պիտակավորում, գործող կանոնակարգերի և թափոնների կառավարման պլանի պահպանում

Նկար 21-ում ներկայացված են բացահանքի շինարարության և շահագործման արդյունքում շրջակա միջավայրի վրա դրսևորվող ազդեցությունների մոնիթորինգի դիտակետերի տեղադիրքը:

ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԿԵՏԵՐԻ
ՍԽԵՄԱՏԻԿ ՔԱՐՏԵԶ



ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

- Մթնոլորտային օդի մշտադիտարկում
- Ջրային ռեսուրսների մշտադիտարկում
- Հողային ծածկույթի մշտադիտարկում
- Աղմուկի մակարդակի դիտարկում
- ⬠ Սողանքային մարմինների մոնիթորինգ
- Կենսաբազմազանության դիտարկման տարածք

Նկար 21.

10. ՀԱԿԱՎԹԱՐԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Բացահանքում բոլոր աշխատանքներն իրականացվելու են հաշվի առնելով «Բաց եղանակով օգտակար հանածոների հանքավայրի մշակման անվտանգության միասնական կանոններ»-ի և «Պայթեցման աշխատանքների անվտանգության միասնական կանոններ»-ի պահանջները:

Վթարներից խուսափելու համար անհրաժեշտ հիմնական պայմանները թվարկված են ստորև՝

- մուտքը բացահանքի տարածք իրականացվում է ձեռնարկության ղեկավարության կողմից տրված անցագրերով;
- բացահանքի շինությունների վրա, մարդկանց կուտակման վայրերում և շարժման երթուղիներում պետք է փակցվեն տեխնիկական անվտանգությանը վերաբերող ցուցադրական միջոցներ: Դրանք են համապատասխան ցուցանակները, նշանները, պլակատները, թույլատրող և արգելող նախազգուշական ազդագրերը, որոնց նշանակությանը պետք է ծանոթ լինեն բացահանքի բոլոր աշխատողները;
- նախապես ստուգվում է նախկին հետախուզական աշխատանքների հետևանքով դատարկությունների առկայությունը, հայտնաբերելու դեպքում նրանց տանիքի հանքաշերտը և պարփակող ապարները հաջորդաբար, ամբողջ հզորությամբ (25-30մ) փլուզվում են պայթեցման աշխատանքների միջոցով;
- լեռնատրանսպորտային սարքավորումները տեղադրվում են մշակված տարածքների և նստվածքների վերին եզրից ավելի քան 3-4մ հեռավորության վրա, փլուզման գոտու սահմաններից դուրս և որմնակապվում;
- բացահանքում հորատող հաստոցը պետք է տեղակայվի հանքաստիճանի հարթեցված հրապարակում այնպես, որ հաստոցի թրթուրները հանքաստիճանի եզրագծից լինեն առնվազն 2 մ հեռավորության վրա:
- հանքաստիճանի վրա հորատման հաստոցի տեղաշարժը բարձրացրած կայմով թույլատրվում է միայն հարթեցված հորիզոնական հրապարակով: Էլեկտրահաղորդման գծերի տակով անցնելիս կայմը պետք է իջեցվի: Արգելվում է կայմի բարձրացման կամ իջեցման ժամանակ մարդկանց գտնվելը հորատման հաստոցի առջևում կամ հետևում: Հորատման հաստոցի տեղափոխման ժամանակ հորատող գործիքը պետք է հանվի կամ հուսալիորեն ամրացվի;

- հորատման հաստոցի վերհանող ճոպանը պետք է հաշվարկվի առավելագույն բեռնվածքով և ունենա ամրության հնգապատիկ պաշար: Պարբերաբար, առնվազն շաբաթական մեկ անգամ, ճոպանը պետք է ենթարկվի արտաքին զննման: Ճոպանի մետաղալարերի ցցված ծայրերը պետք է կտրվեն, իսկ հյուսվածքի մի քայլի վրա 10 տոկոսից ավելի կտրված մետաղալարերի առկայության դեպքում այն պետք է փոխվի ;

- պայթեցման աշխատանքների ժամանակ ապահովվում են անվտանգ հեռավորությունը, որն ընդունված է համաձայն ՀՀ Կառավարության 2008 թվականի հունիսի 3-ի N291 որոշմամբ հաստատված «Պայթեցման աշխատանքների անվտանգության միասնական կանոններ»-ի (ԱՄԿ) թիվ 8 հավելվածի 1, 2 և 3 կետերում բերված պահանջների.

- պայթյունների կատարման ժամանակ մարդկանց համար անվտանգ հեռավորությունը հորատանցքային լիցքերի կիրառման դեպքում ընդունվում է ոչ պակաս 200.0մ;

- պայթեցման աշխատանքների կատարման ժամանակ ապարների առանձին կտորների դուրս թռչելու (ցրիվ գալու) դեպքում մարդկանց համար վտանգավոր գոտու շառավիղը ընդունվում է 300.0մ;

- պայթուցիկ նյութերի պահեստից պայթյունի դեպքում օդային հարվածային ալիքի սահմանային թույլատրելի նվազագույն հեռավորությունը ընդունվում է 291.0մ ;

- հրդեհամարման համար ջրի ռեզերվուարում պահվում է 216մ³ ծավալով մշտական ջրի պաշար ;

- բուլդոզերային լցակույտի առափը բեռնաթափման ամբողջ ճակատով պետք է ունենա 3⁰-ից մինչև 5⁰ ընդլայնական թեքություն` ուղղված եզրից դեպի խորքը: Եզրի ամբողջ երկարությամբ հարկ է ունենալ ապարային լցույթ ;

- լցակույտի հրապարակը համահարթեցնելիս բուլդոզերը շեպի եզրին կարող է մոտենալ միայն դանակով դեպի առաջ: Արգելվում է բուլդոզերի մոտեցումը լցակույտի եզրերին հետընթացով;

- լցակույտում փոխաբեռնման աշխատանքների իրականացման դեպքում փոխաբեռնման կետի տեղադրման վայրը, ինչպես նաև դրա կազմավորման և շահագործման կարգը, պետք է որոշվեն նախագծով, որտեղ պետք է նախատեսվեն դրա

սեկտորների չափերը և անհրաժեշտ քանակը, մարդկանց տեղաշարժման ուղիները, ձայնային և լույսային ազդանշանները և այլն;

- փոխաբեռնման կետերը, որոնցում որպես միջանկյալ օղակ օգտագործվում են էքսկավատորներ, պետք է բավարարեն հետևյալ պահանջները՝

1) հանքազանգվածաշերտի բարձրությունը պետք է սահմանվի՝ ելնելով հանքազանգվածի ֆիզիկամեխանիկական հատկություններից, բայց ոչ ավելի էքսկավատորի շերտիման բարձրությունից.

2) լցակույտի յուրաքանչյուր սեկտորի լցման ժամանակ հանքազանգվածաշերտի թեքման անկյունը պետք է համապատասխանի պահեստավորվող հանքազանգվածի բնական թեքման անկյանը;

- սեկտորում աշխատանքները պետք է կատարվեն համաձայն բացահանքի ղեկավարության կողմից հաստատված աշխատանքների կատարման տեղեկաթերթիկի, իսկ տեղանքը նախատեսվում է կահավորել հատուկ նշաններով և ցուցատախտակներով;

- փոխաբեռնման կետի բեռնաթափման հրապարակների չափերը պետք է ապահովեն արտադրությամբ զբաղվող բոլոր մեքենաների և մեխանիզմների բնականոն և անվտանգ աշխատանքը՝ դրանց տեղաշարժման և ուղետարանցման ժամանակ: Բեռնաթափման աշխատանքների կատարման ճակատի երկարությունը և բեռնաթափման հրապարակի լայնությունը պետք է որոշվեն՝ ելնելով տրանսպորտային միջոցների (ավտոմեքենաների, բուլդոզերների և այլն) եզրաչափերից, տեղաշարժման աշխատանքների կատարման ընդունված սխեմայից և շրջադարձի շառավղից՝ հաշվի առնելով բեռնաթափմանը կանգնած և սպասող տրանսպորտային միջոցի անհրաժեշտ անվտանգ հեռավորությունը, որը պետք է լինի 5 մ-ից ոչ պակաս;

- բեռնաթափման հրապարակի սեկտորում մի քանի մեխանիզմների (ավտոմեքենաների, բուլդոզերի և այլն) և ներքին հորիզոնում (էքսկավատորի գտնվելու վայրում) միաժամանակյա աշխատանքը պետք է կատարվի՝ համաձայն աշխատանքների կատարման նախագծի;

- բեռնաթափման հրապարակում աշխատող ինքնաթափ մեքենայի և բուլդոզերների աշխատանքային գոտում կողմնակի մարդկանց գտնվելը կամ որևէ այլ աշխատանք կատարելն արգելվում է: Նրանք պետք է գտնվեն աշխատող մեխանիզմից 5 մ-ից ոչ պակաս հեռավորության վրա:

11. ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐ

«ԳԵՈՌԵՅԴ» ՓԲԸ-ի արտակարգ իրավիճակները կարող են պայմանավորված լինեն հետևյալ գործոններով.

i. երկրաշարժ՝ հաշվի առնելով, որ հանրապետության տարածքը գտնվում է սեյսմիկ ակտիվ գոտում,

ii. սողանքային երևույթներ, հաշվի առնելով որ հայցվող տարածքում համաձայն Հայաստանում սողանքների տեխնիկական տեղեկագիրը (Միջազգային համագործակցության Ճապոնական գործակալություն, ՀՀ քաղաքաշինության նախարարություն, 2005) հաշվառված է 020-0570 սողանքային մարմինը:

iii. հրդեհներ՝ կապված մարդածին գործոնների հետ:

Նախատեսվում է մշակել երկրաշարժերի դեպքում գործողությունների պլան՝ վտանգավոր տարածքներից աշխատակիցների ապահով տարահանումն իրականացնելու նպատակով: Անվտանգության տեխնիկայի կանոնների վերաբերյալ հրահանգավորում իրականացնելու ժամանակ առանձին ներկայացվելու են նաև երկրաշարժերի ժամանակ աշխատակիցների պահվածքի կանոնները, գործողությունների հաշորդականությունը: Արտադրական հրապարակումն կենցաղային նշանակության վազոն-տնակներում նախատեսվում են առաջին օգնության դեղորայքային փաթեթներ:

